

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական  
խորհուրդ՝

Ն. Թովմայան  
Ա. Գյուլումյան  
Ֆ. Թոխյան  
Ա. Թունյան  
Ա. Խաչատրյան  
Ն. Նազարյան  
Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

2(94)  
2019

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## • ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1451-1465)

- \* 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1993 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1451, 2 ապրիլի 2019 թվականի).....5
- \* ՔԱԶԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԴԱՎԹՅԱՆԻ, ԷԴԻԿ ՀԱԿՈՐԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 401-Ը ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1452, 2 ապրիլի 2019 թվականի) .....9
- \* ՎԱՉԱԳԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 310.1-Ը ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 314.3-Ը ՀՈՂՎԱԾԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1453, 16 ապրիլի 2019 թվականի) .....24
- \* ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 2-Ը ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ 50-Ը ՀՈՂՎԱԾԻ 6-Ը ՄԱՍԻ 2-Ը ԵՎ 3-Ը ԿԵՏԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1454, 19 ապրիլի 2019 թվականի) .....59
- \* «ՄԱԿԻ ԸՆԴ ՄԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1172-Ը ՀՈՂՎԱԾԻ 2-Ը ՄԱՍԻ 2-Ը ԿԵՏԻ, «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 10-Ը ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-Ը ԿԵՏԻ, 12-Ը ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-Ը ԿԵՏԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1455, 23 ապրիլի 2019 թվականի) .....87
- \* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՐԵՍԻ

- ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԵՆՏՐՈՆԻՄԼԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆԻ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1456, 23 ապրիլի 2019 թվականի) .....106
- \* 2018 թվականի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԱԼՄԱԹԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ  
 ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆԻ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1457, 23 ապրիլի 2019 թվականի).....111
- \* ՎԼԱԴԻՄԻՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 66-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ «Գ» ԵՎ «Ե» ԿԵՏԵՐԻ՝  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆԻ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1458, 30 ապրիլի 2019 թվականի) .....118
- \* ՌՈՒԲԵՆՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ  
 419-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆԻ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1459, 7 մայիսի 2019 թվականի) .....135
- \* 2018 թվականի ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ  
 ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ» ԿԻՐԱՐԿՄԱՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ  
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆԻ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1460, 21 մայիսի 2019 թվականի) .....165
- \* 2018 թվականի ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
 «ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ»  
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆԻ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1461, 21 մայիսի 2019 թվականի).....173
- \* 2018 թվականի ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԱՎԻՑԻՈՆ  
 ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՐՁ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
 ԲՅՈՒՐՈՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՆԵՐԻՆԻ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1462, 21 մայիսի 2019 թվականի).....178

- \* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ «ԱՌՆՎԱԶՆ 10 ՏԱՐԻ» ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍՈՎ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1463, 18 հունիսի 2019 թվականի).....184
- \* ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 169-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 140-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1464, 18 հունիսի 2019 թվականի).....209
- \* 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1465, 18 հունիսի 2019 թվականի) .....222

**• ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

- \* ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԴՐԵԱՍ ՖՈՍԿՈՒԼԵԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ .....225
- \* ՉԵԽ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ .....226
- \* ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԵՆ ԱՅՅԵԼԵԼ ԱԶԱՏԱՆ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ .....227
- \* ՄՈՍԿՎԱՅԻ ԼՈՍՏՈՆՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՅԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ .....228
- \* ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՍԱՆԿՏՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ .....229
- \* ԹԵՄԱՏԻԿ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ .....230
- \* ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԸ ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ .....231
- \* ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ .....232
- \* ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԻ ՀԵՏ .....234
- \* ՍԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ԲՐԱՏԻՍԼԱՎԱ .....235
- \* ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....236
- \* ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԻ ՀԵՏ .....237
- \* ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՍՏԱՆՁՆԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆԸ .....237



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԲՆԱԿԱՆ  
ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ  
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 1993 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ  
22-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 ապրիլի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի հոկտեմբերի 30-ին ստորագրված «Բնական և տեխնածին բնույթի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 2 (94)/2019  
5

արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման բնագավառում փոխգործակցության մասին» 1993 թվականի հունվարի 22-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման բնագավառում փոխգործակցության մասին» 1993 թվականի հունվարի 22-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունը (Արձանագրություն) ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 30-ին Դուշանբեում:

Արձանագրությամբ «Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման բնագավառում փոխգործակցության մասին» 1993 թվականի հունվարի 22-ի համաձայնագրի (Համաձայնագիր) 9-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրվում է նոր խմբագրությամբ, համաձայն որի՝ «Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների Միջպետական խորհուրդն իր աշխատանքում առաջնորդվում է Կանոնակարգով, որը սույն Համաձայնագրի անբաժանելի մասն է»:

Արձանագրությամբ Համաձայնագիրը լրացվում է «Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների Միջպետական խորհրդի մասին կանոնակարգ» վերտառությամբ հավելվածով, որով, մասնավորապես, սահմանվում են Բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների Միջպետական խորհրդի (Խորհուրդ) խնդիրների և գործառույթների, իրավունքների, աշխատանքի կազմակերպման ու կարգի, ինչպես նաև Խորհրդի քարտուղարության և ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները:

Արձանագրությամբ Համաձայնագիրը լրացվում է նաև 10.1-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Համաձայնագրի մասնակիցների համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրություններով և կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս»:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա՝ ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

- ապահովել, որ Խորհրդի անդամներին փոխարինող անձանց Խորհրդի նիստերին ուղարկելիս նրանց լիազորությունները հաստատված լինեն,

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունները և գերատեսչությունները Խորհրդին տրամադրեն նրա կողմից հայցվող տեղեկությունը, որի հասանելիությունը չի սահմանափակվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Խորհրդի որոշումների կատարման մասին տեղեկություն, որն անհրաժեշտ է Խորհրդի գործառույթների կատարման համար,

- ապահովել, որ արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները ցուցաբերեն անհրաժեշտ օժանդակություն Խորհրդի աշխատանքներին,

- ապահովել, որ Խորհրդի նիստերը Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացնելու դեպքում՝ դրանց հետ կապված ֆինանսական ծախսերը կատարվեն Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համապատասխան մարմնի հաշվին:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են արտակարգ իրավիճակների կանխարգելման և վերացման բնագավառում համագործակցության կատարելագործմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին

և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. 2015 թվականի հոկտեմբերի 30-ին ստորագրված՝ «Բնական և տեխնաժին բնույթի արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման բնագավառում փոխգործակցության մասին» 1993 թվականի հունվարի 22-ի համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը։

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2 ապրիլի 2019 թվականի  
ՍԴՈ-1451





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱԶԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԴԱՎԹՅԱՆԻ, ԷԴԻԿ  
ՀԱԿՈՔՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 401-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 ապրիլի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների՝ Ք. Կարապետյանի, Հ. Դավթյանի, Է. Հակոբյանի, նրանց ներկայացուցիչներ՝ փաստաբաններ Կ. Տոնոյանի, Ա. Ղազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 69-րդ հոդվածների,

2(94)/2019  
ՏԵՂԵԿԱԳԻՐ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաջիկ Կարապետյանի, Համբարձում Դավթյանի, Էդիկ Հակոբյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ **Օրենսգիրք**) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի **«Վճռաբեկ դատարանում բողոքի քննության կարգը»** վերտառությամբ 401-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

*«Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ Վճռաբեկ դատարանը եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում»:*

Գործի քննության առիթը Քաջիկ Կարապետյանի, Համբարձում Դավթյանի, Էդիկ Հակոբյանի՝ համապատասխանաբար 2019 թվականի հունվարի 8-ին և 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված երեք դիմումներն են, որոնց հիման վրա, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի, մինչև դատաքննությունն սկսվելը գործերը միավորվել են Սահմանադրական դատարանի նույն նիստում քննվելու համար:

Ուսումնասիրելով դիմումները և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողների դիրքորոշումները**

Դիմողները գտնում են, որ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու արդյունքում խախտվել է իրենց գործի հրապարակային քննության իրավունքը,

մասնավորապես, հրապարակային քննություն չիրականացնելը զրկել է վերջիններիս հրապարակային դատաքննության միջոցով իրենց կարծիքն ազատ արտահայտելու, իրենց փաստարկներն ու դիրքորոշումները ներկայացնելու, իրենց դատավարական հակառակորդին հակադրվելու և նրա պնդումները վիճարկելու հնարավորությունից:

Միաժամանակ, դիմողների պնդմամբ օրենսդիրը չի սահմանել, թե ուր դեպքերում է Վճռաբեկ դատարանը բացառության կարգով գործի քննությունն իրականացնում դատական նիստի միջոցով, որի հանգամանքում Վճռաբեկ դատարանի հայեցողությունն անորոշ է, իրավական որոշակիությունից զուրկ և, որպես այդպիսին, չի ապահովում կանխատեսելիություն դատավարության մասնակիցների, այդ թվում՝ նաև լայն հանրության համար: Բացի դրանից, դատավարության մասնակիցները զրկված են Վճռաբեկ դատարանին բանավոր քննություն իրականացնելու մասին միջնորդություն ներկայացնելու իրավական հնարավորությունից:

Ըստ դիմողների՝ օրենքով սահմանված չէ, որ այն դեպքերում, երբ Վճռաբեկ դատարանը գործը քննում է գրավոր ընթացակարգով և իրականացնում է փաստի քննություն, ապա չպետք է ունենա դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորություն:

Դիմող Ք. Կարապետյանի եզրահանգմամբ՝ իր գործով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերաքննիչ դատարանի կողմից ապացույցների սխալ գնահատման հարցին և այդ հիմքով է քննել գործը: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը բողոքի քննության ընթացքում անդրադարձել է այնպիսի փաստական հանգամանքների, որոնք մինչ այդ չեն հանդիսացել դատական քննության առարկա, և դատավարության մասնակիցը դրանց վերաբերյալ փաստարկներ ներկայացնելու հնարավորություն չի ունեցել, կամ որոնք էական նշանակություն ունեին գործի լուծման համար, ուստի պետք էր ապահովել բանավոր ընթացակարգի կիրառումը:

Իսկ դիմող Է. Հակոբյանի կարծիքով՝ գործերի գրավոր քննության վարույթներում ուշադրության է արժանի այն, թե Վճռաբեկ դատարանն իրականացնում է փաստի, թե՛ իրավունքի քննություն, և բոլոր այն դեպքերում, երբ Վճռաբեկ դատարանն իրականացնում է փաստի վերաբերյալ քննություն, ապա չպետք է իրավունք ունենա գրավոր քննություն իրականացնելու, քանի որ դրանով կողմերին զրկում է գնահատվող փաստի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու իրավունքից:

Ինչ վերաբերում է դիմող Հ. Դավթյանի պնդմանը, որ իր գործով անդրադարձ է կատարվել փաստական, մասնավորապես կնքված գործարքին մասնակից լինելու հանգամանքին, որին անդրադառնալու պարագայում անհրաժեշտ էր ապահովել գործի բանավոր քննության ընթացակարգ՝ հնարավորություն տալով դիմողներին ներկայացնելու իրենց դիրքորոշումները վերոնշյալ փաստի առնչությամբ:

Իրենց տեսակետները հիմնավորելով Սահմանադրական դատարանի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումներով՝ դիմողները եկել են այն եզրակացության, որ այնպիսի հանգամանքներում, երբ վերադաս դատական ատյանը իր որոշման հիմքում դրել է իրավունքի և (կամ) փաստի մասին այնպիսի հարց, որը մինչ այդ չի հանդիսացել դատական քննության առարկա, որին հակադրվելու և դրա առնչությամբ փաստարկներ ներկայացնելու հնարավորություն չի ունեցել դատավարության մասնակիցը, որը շրջադարձային նշանակություն է ունեցել դատական գործի լուծման համար և փաստորեն հանդիսացել է վերջնական դատական ակտ, ապա նման հանգամանքներում գրավոր դատական քննության անցնելու մասին դատարանի որոշումը հրապարակային դատական քննության իրավունքը անհամաչափորեն սահմանափակող որոշում է:

Ամփոփելով իրենց եզրահանգումները՝ դիմողները խնդրում են վիճարկվող դրույթն այնքանով, որքանով Վճռաբեկ դատարանին տալիս է անսահմանափակ և անվերահսկելի հայեցողություն, չի ապահովում կանխատեսելիություն, հանրային և մասնավոր շահի փոխհավասարակշռություն, ինչի արդյունքում սահմանափակում է անձի հրապարակային դատաքննության իրավունքը, ճանաչել Սահմանադրության 63-րդ հոդվածին հակասող և անվավեր:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթը համահունչ է Սահմանադրության պահանջներին՝ ներկայացնելով, մասնավորապես, հետևյալ դիրքորոշումները:

Օրենսդիրը վիճարկվող դրույթով ամրագրված՝ բողոքների վերաբերյալ գրավոր ընթացակարգը համապատասխան իրավական պատշաճ մեխանիզմներով ապահովելու նպատակով Օրենսգրքի

403-րդ հոդվածով ամրագրել է, որ վճարեկ բողոքի քննությունը գրավոր ընթացակարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու, հետևաբար, գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում գործին մասնակցող անձինք տեղեկացվում են միայն բողոքի քննության արդյունքով կայացվելիք դատական ակտի հրապարակման օրվա մասին:

Միաժամանակ, օրենսդիրն Օրենսգրքի 404-րդ հոդվածով հստակ սահմանագծել է վճարեկության կարգով բողոքի քննության շրջանակները, համաձայն որի՝ վճարեկության կարգով բողոքի քննության ժամանակ Վճարեկ դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճարեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վճարեկ դատարանը կաշկանդված չէ բողոք բերած անձի պահանջով, և վերջինս կաշկանդված չէ վճարեկ բողոքի պատասխան ներկայացրած անձի փաստական կամ իրավական դիրքորոշմամբ:

Շարունակելով իր դիրքորոշումները՝ պատասխանողը նշում է, որ օրենսդիրը, եռաստիճան դատական համակարգում՝ արդար դատաքննության իրավունքից բխող՝ «փաստի քննության» և «իրավունքի քննության» հավասարակշիռ ապահովում իրականացնելու նպատակով, հստակ ամրագրել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում վարույթ ընդունված հայցի (դիմումի) քննության սահմանների և վերաքննիչ դատարանի կողմից գործերի վերաքննության սահմանների կանոնակարգումներ, մասնավորապես՝ ի տարբերություն Վճարեկ դատարանի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, ինչպես նաև վերաքննիչ դատարանում գործերի նկատմամբ կիրառվում է հրապարակային քննություն՝ անդրադառնալով գործերի փաստական կողմերին:

Պատասխանողը նշում է նաև, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածը նախատեսում է դատական քննության հրապարակային բնույթն ապահովող երկու ինքնուրույն երաշխիք՝ դոնբաց դատական քննություն և դատավճռի հրապարակում:

Իր տեսակետները հիմնավորելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք դիրքորոշումներով՝ պատասխանողը նշում է, որ օրենսդիրն Օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումներով ընդհանուր իրավասության առաջին ատյանի

դատարանում և վերաքննիչ դատարանում գործերի քննության համար, ընդհանուր առմամբ, սահմանել է հրապարակային դատական քննության պարտադիր բաղադրատարր, մինչդեռ Վճռաբեկ դատարանի դեպքում սահմանել է վճռաբեկ բողոքներն ըստ էության քննելու և դրանց վերաբերյալ որոշումներ կայացնելու գրավոր ընթացակարգ, սակայն չբացառելով նաև այն դեպքերը, երբ Վճռաբեկ դատարանը կարող է գալ եզրահանգման, որ անհրաժեշտ է վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում հրապարակային ընթացակարգով՝ «բացառապես միտված լինելով ապահովելու ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի կողմից բաց թողնված հրապարակային դատական քննությամբ փաստական իրողությունների գնահատման անհրաժեշտությունը»:

Ամփոփելով իր դատողությունները՝ պատասխանողը գտնում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված են բավարար իրավական կառուցակարգեր և ընթացակարգեր Մահմանադրությամբ (63-րդ և 75-րդ հոդվածներ) ամրագրված մարդու հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման սկզբունքից բխող արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրատարր հանդիսացող՝ հրապարակային քննության իրավունքի իրացումն ապահովելու համար:

**3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հարցադրումները**

Սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականությունը որոշելու համար Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) խախտում է արդյոք վիճարկվող դրույթը արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող հրապարակային դատաքննության իրավունքն այնքանով, որքանով Վճռաբեկ դատարանում գործի բանավոր քննությունը դիտարկվում է որպես բացառություն ընդհանուր կանոնից, որի իրացումը թողնված է դատարանի հայեցողությանը,

2) վիճարկվող դրույթը համահունչ է արդյոք իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքին՝ նկատի ունենա-

լով այն հանգամանքը, որ օրենսդրությամբ սահմանված չէ, թե կոնկրետ ո՞ր դեպքերում է վճարել բողոքի քննությունն իրականացվում դատական նիստում:

**4.Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության «Արդար դատաքննության իրավունքը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

**Արդար դատաքննության իրավունքը** ենթադրում է ինչպես դատարան դիմելու հնարավորությունը, այնպես էլ գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, ինչը նշանակում է, որ գործը հրապարակայնության սկզբունքի պահպանմամբ քննելու պահանջ ներկայացնելու հնարավորությունն արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր է: Ինչպես նշել է Սահմանադրական դատարանն իր 11.04.2012թ. ՍԴՈ-1020 որոշմամբ՝ «...այդ իրավունքի իրացման նվազագույն և կարևոր երաշխիքներն են՝ **հրապարակային դատաքննությունը** (մասնավորապես՝ գործը քննող դատարանի, քննության առարկա գործի, քննության վայրի, ժամանակի, դատաքննության կարգի և այլնի մասին հրապարակային տեղեկությունները), ինչպես նաև **դատական ակտի պարտադիր հրապարակումը**»:

Անդրադառնալով հրապարակայնության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանը նույն որոշմամբ նշել է. «...դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության և դատարանի ընդունած ակտերի նկատմամբ»:

Հրապարակային դատաքննության պահանջի սահմանադրական կարգավորման հետ միասին Սահմանադրությունը հիշյալ հոդվածով ամրագրում է նաև այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում հնարավոր է հրապարակային դատաքննության սահմանափակում: Մասնավորապես, Սահմանադրության 63-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ դատական վարույթը կամ դրա մի

մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հրապարակայնության սկզբունքը ենթադրում է, նախ և առաջ, դռնբաց դատաքննություն և դատական ակտի հրապարակում:

Անդրադառնալով դիմողների այն դիրքորոշմանը, որ գրավոր ընթացակարգի կիրառումը համարվում է հրապարակային քննության իրավունքի խախտում, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ սահմանադրական դրույթի տրամաբանության համատեքստում հրապարակային դատաքննությունը ենթադրում է դռնբաց դատական նիստի առկայություն և (կամ) դատական ակտի հրապարակում, ինչը նշանակում է, որ դռնբաց դատական նիստը կարող է իրականացվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի կիրառմամբ: Ավելին, դռնփակ դատական նիստը, որը հրապարակայնության սկզբունքի սահմանափակում է, կարող է անցկացվել նաև բանավոր ընթացակարգով: Ուստի՝ գործի քննության բանավոր կամ գրավոր ընթացակարգը չի նույնանում գործը դռնբաց կամ դռնփակ քննելու հետ, և որ նույնն է՝ հրապարակայնության սկզբունքի հետ:

Այս առումով վերահաստատելով ՄԴՈ-1020 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները գործերի քննության բանավոր և գրավոր ընթացակարգերի և հրապարակայնության սկզբունքի հետ դրանց համադրության վերաբերյալ՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել հետևյալը.

1) հրապարակայնության սկզբունքը թե՛ Սահմանադրության, թե՛ միջազգային իրավական ակտերի, թե՛ դատավարական օրենսդրության շրջանակներում դատավարական իրավունքների իրացման կարևորագույն և անխախտելի սկզբունք է, որը ենթադրում է ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ընթացակարգի կիրառում՝ պայմանավորված կոնկրետ դատավարական առանձնահատկություններով,



2) պետք է առավելությունը տալ բանավոր քննությանը բոլոր այն դեպքերում, երբ գործի բանավոր քննությունն անհրաժեշտ է՝ պայմանավորված տվյալ գործի առանձնահատկություններով, որի շրջանակներում պետք է անդրադառնալ այնպիսի փաստական տվյալների, որոնք ունեն էական նշանակություն գործի լուծման համար,

3) հրապարակայնության սկզբունքը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրությամբ հստակ նախատեսված հանգամանքների առկայության դեպքում, իսկ սահմանափակումն օրենքով նախատեսված կարգին համապատասխան իրացվելու պայմաններում ևս չի կարող խոսք լինել հրապարակայնության սկզբունքի խախտման մասին:

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ գրավոր ընթացակարգի կիրառումն ինքնին չի կարող դիտարկվել որպես հրապարակայնության սկզբունքի խախտում, եթե իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքով հստակ նախանշված սկզբունքներին ու կարգին համապատասխան: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Սահմանադրության 28, 29, 63-69-րդ և այլ հոդվածներով ամրագրված մարդու և քաղաքացու այն իրավունքներին, որոնք կարող են կիրառելի լինել կոնկրետ դատավարական ընթացակարգի շրջանակներում, ինչպես նաև Օրենսգրքի 2-րդ գլխով ամրագրված քաղաքացիական դատավարության սկզբունքներին, 15-րդ գլխով ամրագրված դատական նիստի ընդհանուր կանոններին, առանձին հատուկ վարույթներին ներկայացվող պահանջներին, դրանց լուծման առանձնահատկություններին և այլն:

Սահմանադրության և օրենքների շրջանակներում դատավարական ընթացակարգի ընտրությունը կոնկրետ գործը քննող դատարանի իրավասությունն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի քննության գրավոր ընթացակարգի ընտրությունը կարող է արդարացված լինել, մասնավորապես, բոլոր այն դեպքերում, երբ խոսքը բացառապես իրավունքի հարցերին է վերաբերում, կամ երբ գործի փաստական հանգամանքները վիճահարույց չեն:

Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատավարական ձևի՝ գործի քննության ընթացակարգի ընտրությունը դատարանի բացարձակ հայեցողությունը չէ, ուստի

այն պետք է պայմանավորված լինի արդար դատաքննության բոլոր երաշխիքների, ներառյալ դատավարության կողմերի լսվելու իրավունքի իրացման համար պատշաճ նախադրյալների ապահովմամբ, ինչը, իր հերթին, հնարավորություն կտա դատավարության կողմերին զերծ պահել դատարանի կողմից գործի քննության ընթացքում չհետագոտված փաստերի վրա հիմնված և (կամ) առանց իրենց դիրքորոշումը լսելու կայացված «անակնկալ» որոշումներից:

Վերոնշյալ մոտեցումները համադրելով Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի հետ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքների քննության ընթացակարգերի հիմքում դրված է հետևյալ տրամաբանությունը.

ա) թեև օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովումը Վճռաբեկ դատարանի հիմնական սահմանադրական գործառույթներից է, այնուամենայնիվ, Սահմանադրությամբ կանխորոշված այդ գործառույթները դատարանն իրականացնում է արդարադատություն իրականացնելու միջոցով,

բ) քաղաքացիական դատավարության շրջանակներում Վճռաբեկ դատարանը չի իրականացնում փաստերի անմիջական հաստատման լիազորություն և գործը վերանայում է նախորդ ատյանների դատարաններում հաստատված փաստերի շրջանակներում,

գ) փաստերի հաստատման լիազորության բացակայությունը, վճռաբեկ բողոքի պատասխան ներկայացնելու իրավունքը, քաղաքացիական դատավարության ընդհանուր կանոններով միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունը և այլ դատավարական կանոններ կոչված են ապահովելու Վճռաբեկ դատարանում գրավոր ընթացակարգով քննվող գործերի կանխատեսելիությունը,

դ) Վճռաբեկ դատարանի կարգավիճակը կանխորոշում է, որ այս ատյանում առավելապես կիրառելի է գրավոր ընթացակարգը:

Պարզ է նաև, որ թե՛ օրենսդրորեն, թե՛ գործնականում չի կարող բացառվել, որ նշված ատյանում ևս անհրաժեշտություն առաջանա իրականացնել բանավոր քննություն՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով, այդ թվում նաև՝ դատավարության կողմերի համար նախորդող դատական ատյաններում արդար դատաքննության երաշխիքների, հատկապես՝ լսվելու իրավունքի փաստացի ապահովման հանգամանքով:

Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանում թեև գործի քննության գրավոր ընթացակարգի կիրառումն ինքնին իրավաչափ է, այդուհանդերձ, նաև այս ատյանում այն կիրառելու հայեցությունը բացարձակ չի կարող լինել:

**4.2.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում հրապարակայնության, ինչպես նաև գործերի բանավոր և գրավոր քննության ընթացակարգերի առնչությամբ ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

- հրապարակային դատաքննության (անկախ իրականացման ընթացակարգային ձևից) առաջնահերթ բաղադրիչներն են **գործի հանգամանքների քննության (կամ «բանավոր լսումների») անցկացումը և որոշման հրապարակումը**: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն «ԵԽ անդամ բոլոր պետությունները ճանաչում են հրապարակայնության սկզբունքը, սակայն նրանց օրենսդրական համակարգերը և դատական պրակտիկան ունեն որոշակի տարբերություններ ինչպես դրա ծավալի, այնպես էլ **իրականացման եղանակի** առումով՝ կապված լսումների անցկացման և դատական որոշումների հրապարակման հետ: Հարցի ձևական կողմը, այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հրապարակայնության պահանջների հիմքում ընկած նպատակի համեմատությամբ ունի **երկրորդական նշանակություն»** (Sutter v. Switzerland Judgment of 22 February 1984, p. 27, Adolf v. Austria Judgment of 26 March 1982, para. 30, Pretto and others v. Italy Judgment of 8 December 1983, para. 23, and Axen v. Germany, Judgment of 8 December 1983, para. 25),

- «...Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված՝ գործի հրապարակային քննության իրավունքն անհրաժեշտաբար ներառում է «բանավոր լսման» իրավունքը: Այնուամենայնիվ, նման լսումներ անցկացնելու պարտավորությունը բացարձակ չէ: Այսպես, բանավոր քննության բացակայությունը կարող է համատեղելի լինել 6-րդ հոդվածի պահանջների հետ, երբ քննության ենթակա հարցը չի բարձրացնում փաստի կամ իրավունքի հետ կապված այնպիսի հարց, որը կարող է պատշաճ ձևով լուծվել գործի նյութերի հիման

վրա՝ առանց կողմերի բանավոր դիտարկումների (Elsholz v. Germany, Judgment of 13 July 2000, p.66, Fredin v. Sweden (no. 2), Judgment of 23 February 1994, pp. 21-22; Fischer v. Austria, Judgment of 26 April 1995, p. 44)»,

- Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով գրավոր դատաքննությունը գնահատվում է որպես արդար և հրապարակային, եթե՝ ա) պայմանավորված է բացառիկ հանգամանքներով, բ) իրականացվում է ողջամիտ ժամկետներում, ինչպես նաև արագ դատաքննություն ապահովելու նկատառումներով, գ) պայմանավորված է քննվող գործի առանձնահատկությամբ, դ) սկզբունքորեն կիրառվում է իրավունքի վերաբերյալ հարցեր լուծելիս, ինչպես նաև փաստական այնպիսի հանգամանքներ քննելիս, որոնք արդարացված են գրավոր ընթացակարգի պայմաններում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում նշել է նաև, որ այն դեպքում, երբ դատարանը քննում է փաստի վերաբերյալ հարց, և պետք է լսել դատաքննության կողմի դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ, ապա դատաքննությունն անհրաժեշտ է իրականացնել բանավոր ընթացակարգով (Ֆիշերն ընդդեմ Ավստրիայի (Fischer v. Austria) գործով 2001 թվականի օգոստոսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 37950/97, կետ 44, Մալխուսն ընդդեմ Չեխիայի (Malhous v. the Czech Republic) գործով 2001 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 33071/96, կետ 60, Միլլերն ընդդեմ Շվեդիայի (Miller v. Sweden) գործով 2005 թվականի փետրվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 55853/00, կետ 34):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործերի քննության բանավոր և գրավոր ընթացակարգերի կիրառումը կախված է ինչպես դատական ատյանի գործունեությունից, այնպես էլ կոնկրետ գործի առանձնահատկություններից: Միևնույն ժամանակ օրենսդրությամբ նախատեսված են այն հիմնական սկզբունքները, որոնք անհրաժեշտության դեպքում ապահովում են բանավոր քննության իրականացումը, մնացած դեպքերում գործի քննության գրավոր ընթացակարգը հրապարակայնության հետ կապված խնդիրներ չի հարուցում:

**4.3.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթին անդրադառնալ նաև իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից՝ հաշվի առնելով, մասնավորապես.

ա) բանավոր ընթացակարգին անցնելու պայմանների հստակությունը,

բ) բողոք բերողի համար բանավոր ընթացակարգին անցնելու կանխատեսելիությունը:

Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՄԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՄԴՈ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարա-

վորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

Հիշյալ վերլուծությունները կիրառելով սույն գործով վիճարկվող դրույթի նկատմամբ՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

1) վիճարկվող դրույթը սահմանում է Վճռաբեկ դատարանում բողոքի քննության կարգը, որի բովանդակությունից հետևում է, որ վարույթ ընդունված բողոքները քննվում և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են գրավոր ընթացակարգով, միաժամանակ նախատեսելով բացառություն, երբ բողոքի քննությունը կարող է իրականացվել դատական նիստում, եթե Վճռաբեկ դատարանը գալիս է նման եզրահանգման: Այսինքն, վճռաբեկ բողոքների քննության ընդհանուր կանոնը գրավոր ընթացակարգն է, որից բացառություններ կատարվում են այն դեպքերում, երբ Վճռաբեկ դատարանը գործի բանավոր քննությունը համարում է անհրաժեշտ,

2) օրենսդիրը վճռաբեկ բողոքի քննությունը դատական նիստով իրականացնելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունն արդարացիորեն թողել է Վճռաբեկ դատարանի հայեցողությանը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ յուրաքանչյուր գործ բնորոշվում է իրեն ներհատուկ առանձնահատկություններով, ուստի միայն գործի ուսումնասիրման արդյունքում է հնարավոր պարզել այդ գործի բանավոր քննության անհրաժեշտության առկայության կամ բացակայության հարցը,

3) անդրադառնալով դիմողների այն դիրքորոշմանը, որ վիճարկվող դրույթով սահմանված չէ, թե որ դեպքերում է բողոքի քննությունն իրականացվում դատական նիստում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական ատյանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 03.05.2016թ. ՄԴՈ-1270 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ՝ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանու-

թյունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»: Վերոգրյալը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «...որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

2 ապրիլի 2019 թվականի  
ՄԴՈ-1452



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՎԱՉՍԳԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 310.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ  
314.3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 ապրիլի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի ներկայացուցիչ՝ Մ. Հակոբյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վաչագան Ղազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:



Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (**այսուհետ՝ Օրենսգիրք**) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին:

Օրենսգրքի՝ **«Ապօրինի հարստանալը»** վերտառությամբ 310.1-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

2. Սույն հոդվածում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)»:

Օրենսգիրքը նշված բովանդակությամբ 310.1-րդ հոդվածով լրացվել է ՀՕ-230-Ն օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2016 թվականի դեկտեմբերի 30-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի հուլիսի 1-ին:

Օրենսգրքի **«Հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը»** վերտառությամբ 314.3-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկու- հազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ ազատա- գրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղ- վելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափե- րով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը՝

պատժվում է ազատագրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Օրենսգիրքը վերոհիշյալ բովանդակությամբ 314.3-րդ հոդվածով լրացվել է ՀՕ-102-Ն օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդուն- վել է 2017 թվականի հունիսի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2017 թվականի հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի հուլիսի 1-ին:

Գործի քննության առիթը Վ. Ղազարյանի՝ 2018 թվականի դեկ- տեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դի- մումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացա- տրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրություններն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող նորմերը՝ կա- լանքը, որպես խափանման միջոց կիրառելու մասին առաջին աստյանի դատարանի՝ Վճռաբեկ դատարանի կողմից անփոփոխ թողած որոշմամբ տրված մեկնաբանությամբ, հակասում են Սահմանադրության 72-րդ հոդվածի պահանջներին և այդպիսի մեկնաբանությամբ հանգեցրել են Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր իրավունքների խախտման:

Դիմողը նշում է, որ վիճարկվող հոդվածներով սահմանված հան- ցակազմերն ունեն հատուկ սուբյեկտ հայտարարագիր ներկայաց- նելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձ: Այդ հոդ- վածների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ դրանք

ձևակերպված են բլանկետային դիսպոզիցիայով, այսինքն՝ հանցակազմերի բովանդակությունն ու տարրերը, այդ թվում՝ սուբյեկտային կազմը, կարող են որոշվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին, մասնավորապես՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն սահմանող դրույթին հղում տալու միջոցով, քանի որ Օրենսգիրքը չի բացահայտում, թե ով է հայտարարագիր ներկայացնող կամ հայտարարատու պաշտոնատար անձը, այլ ուղղակիորեն հղում է տալիս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին:

Դիմողը կարծում է, որ խնդրո առարկա հանցակազմերի սուբյեկտների կազմը պետք է որոշվի բացառապես «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի օրենքի 32-րդ հոդվածով, որն ըստ էության չի փոխվել, այնուամենայնիվ, 2018 թվականի ապրիլի 9-ից գործող օրենսդրական կարգավորումները փոխել են հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը՝ դրանցից հանելով մի շարք պաշտոնատար անձանց:

Ըստ դիմողի՝ ինքը չի հանդիսանում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձ ինչպես 2011 թվականի «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի՝ «հատուկ ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք» դրույթի շրջանակներում, այնպես էլ 2018 թվականի ապրիլի 9-ից հետո:

Դիմողը ներպետական դատական պրակտիկայի և միջազգային իրավական պրակտիկայի վերլուծության արդյունքում եկել է այն հետևության, որ նորմատիվ իրավական ակտերը, որոնց հղում է կատարվում քրեաիրավական բլանկետային նորմով, էապես ազդում են հանցանքի իրավական բովանդակության և այդ հանցանքի համար քրեական պատասխանատվության կիրառման սահմանների վրա: Հետևաբար, ըստ դիմողի, յուրաքանչյուր փոփոխություն այն օրենքներում, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմում, կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության ընդլայնման, նեղացման կամ վերացման:

Դիմողը նշում է. «ՔՕ բլանկետային նորմով սահմանված այլ ոլորտային օրենքում փոփոխություն կատարելու պարագայում մի կողմից արարքը որպես հանցանք որակելու համար շարունակում է կիրառվել հենց քրեական օրենքի համապատասխան հոդվածը,

մյուս կողմից՝ բլանկետային նորմն օգտագործվում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի տարրերի կամ տարրի հատկանիշները կամ այլ մանրամասնող հանգամանքներ ամբողջությամբ բացահայտելու համար՝ համապատասխան մասով քրեական օրենքի ճիշտ մեկնաբանության և կիրառման նպատակով»:

Դիմողը վկայակոչել է Վճռաբեկ դատարանի նախկին որոշումներ (ԳԴ1/0013/01/11, ԵԷԴ/0126/13/11), որոնցով Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով արարքի մասնակի ապաքրեականացման հարցին, գտել է, որ «նոր քրեական օրենքը համարվում է արարքի հանցավորությունը բացառող, *inter alia*, եթե արարքը չի դադարում հանցագործություն լինելուց, սակայն հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է»։ այդպիսի դեպքերը հանդիսանում են մասնակի ապաքրեականացում և կարող են վերաբերել հանցակազմի առանձին տարրերին կամ հանցագործության հատկանիշներին:

Դիմողը գտնում է, որ օրենսդրական փոփոխությունների հետևանքով վիճարկվող դրույթներով նախատեսված արարքների մասնակի ապաքրեականացման արդյունքում 2018 թվականի ապրիլի 9-ից ինքն այլևս այդ հանցակազմերի սուբյեկտ չէ, և այդ դրույթներով նախատեսված արարքների հատկանիշներով իր նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելը խախտում է Սահմանադրության 72-րդ հոդվածի երրորդ նախադասությամբ ամրագրված նորմը:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը գտնում է, որ օրենսդիրը սույն սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակները կանոնակարգելիս, որպես իրավական հենք ընդունելով սահմանադրորեն ամրագրված որոշակիության սկզբունքը, առավելագույնս ապահովել է «օրենքի հստակ կիրառումն ու օրենսդրական բացերից իսպառ խուսափելու հնարավորությունը»:

Ըստ պատասխանողի՝ դիմողի ներկայացրած փաստարկները և վերլուծությունները չեն տալիս այն հարցերի պատասխանը, թե վիճարկվող դրույթներն ինքնին ինչպես են հակասում Սահմանադրությանը, սահմանադրական ինչ պահանջներ են խախտում կամ ինչ իրավունքների իրականացմանն են խոչընդոտում:

Պատասխանողի կարծիքով՝ դիմողի ներկայացրած փաստարկներով վիճարկումը «օրենսգիրք-սահմանադրություն տիրույթում չէ», և այդ փաստարկները սույն սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթների հակասահմանադրականության հստակ կապ և հիմնավորում չեն պարունակում:

Պատասխանողը պնդում է. «Դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությամբ», և դիմողը բացառապես վիճարկում է իր նկատմամբ այդ դրույթների կիրառման իրավաչափությունը, հիմք ընդունելով դրանց տրված մեկնաբանությունը, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման:

### 3. Գործի քննությանը հրավիրյալների պարզաբանումները

3.1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ, **նախ** դիմողը բարձրացնում է ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականության, այլ իրավունքի բացի հարց, որը Սահմանադրական դատարանի քննության առարկա չէ և գտնվում է բացառապես օրենսդրի իրավասության շրջանակներում, և **երկրորդ**՝ դիմողն իրականում բարձրացնում է ոչ թե նորմերի հակասահմանադրականության, այլ դրանց կիրառման իրավաչափության հարց:

3.2. Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը նույնպես գտնում է, որ դիմողը բարձրացնում է իրավադրույթների կիրառման իրավաչափության հարց:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ նշում է. «Դիմումատուի հիմնավորումներն առարկայագուրկ են և բացակայում է տրամաբանական կապակցվածությունը իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված մեկնաբանության և վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության միջև»:

3.3. Մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ արարքի հանցավորությունը վերացնող օրենքի հետ գործ ունենք նաև այն պարագայում, երբ հանցանքը չի դադարում հանցագործություն լինելուց և չի վերացվում, սակայն, հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է (մասնակի ապաքրեականացում):

Վերլուծելով քրեադատավարական օրենսդրության համապատասխան նորմերը՝ Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացնում է, որ արարքի հանցավորությունը վերացնող օրենքի հետադարձ ուժի սկզբունքը կիրառման ենթակա է դատավարության ցանկացած փուլում:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը փոփոխելով՝ փոխվում է նաև տվյալ հանցակազմի սուբյեկտը, ինչը որոշ պաշտոնատար անձանց համար հանգեցնում է արարքի ապաքրեականացման: Մարդու իրավունքների պաշտպանը կարծում է, որ նման դեպքերում իրավունքի ուժով պետք է բացառվի գործի հարուցումը կամ քրեական հետապնդումը, այլապես Սահմանադրության և միջազգային չափանիշներին համապատասխան չի կիրառվի արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժի սկզբունքը՝ դրանով իսկ հակասելով Սահմանադրության 72 և 81-րդ հոդվածներին:

#### **4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

1) արդյոք արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու կանոնը գործում է նաև այն օրենքների փոփոխության դեպքում, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմով,

2) արդյոք «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած» սահմանադրական եզրույթը՝ որպես անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման նախապայման, ներառում է նաև անձին ներկայացված քրեական մեղադրանքի օրինականությունը,

3) արդյոք արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքը ներառում է նաև քրեական գործի մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննելիս մեղադրյալին ներկայացված մեղադրանքի օրինականությունը նրա կողմից վիճարկելու իրավունքը,

4) քննարկվող հարցի վերաբերյալ ինչպիսի՞ դիրքորոշումներ է արտահայտել Վճռաբեկ դատարանը, և արդյոք տևականորեն ձևավորված դատական պրակտիկայից չհիմնավորված, կամայական շեղումը կարող է հանգեցնել Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթների և դրանցից բխող՝ օրենքով սահմանված լիազորությունների ոչ արդյունավետ իրականացմամբ պայմանավորված Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների խախտման:

Վերոգրյալի հիման վրա՝ Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը քննության է առնում Սահմանադրության 72-րդ հոդվածի 1-ին և 3-րդ նախադասություններին, 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 61-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության տեսանկյունից:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ **վիճարկվող դրույթները** քրեական գործով դիմողի մեղքի ապացուցված լինելու առումով դեռևս չեն կիրառվել, և դիմողը դրանց սահմանադրականությունը վիճարկում է միայն իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որով հնարավոր է դարձել մեղադրանքի առաջադրումը և կալանքի՝ որպես խափանման միջոցի ընտրությունը, Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ **իրավասու չէ ամբողջ ծավալով քննության առնել այդ դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը** և, հատկապես, գնահատել դրանց առկայության իրավաչափությունը:

Նկատի ունենալով, որ անձի՝ անձնական ազատության իրավունքը սահմանափակող միջոցի կալանքի կիրառումը ենթադրում է **Սահմանադրությանը համապատասխանող քրեական օրենքի վրա հիմնված մեղադրանքի առկայություն**, Սահմանադրական դատարանը փաստում է, որ այդ սահմաններում առկա է վերջնական դատական ակտ, և վիճարկվող դրույթների սահմանադրականությանը՝ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, Սահմանադրական դատարանը կանդրադառնա միայն կալանքի հիմքում դրված մեղադրանքի իրավաչափությանն առնչվող հարցի շրջանակներում:

**5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**5.1.** Օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում ապօրինի հարստացման, մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրա-

պետության օրենքով սահմանված՝ **հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի**՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացման և (կամ) պարտավորությունների նվազման համար, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են:

Օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է սահմանում **հայտարարատու պաշտոնատար անձի**, ինչպես նաև նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թե՛ Օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին, թե՛ 314.3-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված հանցակազմերը նախատեսում են հատուկ սուբյեկտ՝ **հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող կամ հայտարարատու պաշտոնատար անձ**:

Այս հանցակազմերի մեկնաբանությունից հետևում է, որ վերջիններս ձևակերպված են **բլանկետային դիսպոզիցիայով**, այսինքն՝ այդ հանցակազմերի որոշ տարրեր, այդ թվում՝ սուբյեկտային կազմը, կարող են որոշվել դրանցում նշված՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան դրույթների վերլուծության ու կոնկրետ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն սահմանող դրույթին հղում կատարելու միջոցով, քանի որ Օրենսգիրքը չի բացահայտում, թե ո՞վ է հայտարարագիր ներկայացնող կամ հայտարարատու պաշտոնատար անձը, և ուղղակիորեն հղում է անում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին:

**5.2. Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝** «Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: ... Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ»:



Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքների կիրառման վերաբերյալ նշված մոտեցումները համահունչ են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի պահանջներին (հոդվ. 15):

Չնայած այն հանգամանքին, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան ուղղակիորեն չի նշում, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող քրեական օրենքն ունի հետադարձ ուժ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հանգել է այն եզրակացության, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը, որն արգելում է անձին մեղավոր ճանաչել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել, երաշխավորում է նաև արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող քրեական օրենքի հետադարձ ուժը: Դատարանը գտել է, որ, եթե կան տարբերություններ հանցանքի կատարման պահին գործող օրենքի և մինչև դատարանի վերջնական որոշման կայացումը ուժի մեջ մտած հաջորդ քրեական օրենքի միջև, դատարանները պետք է կիրառեն այն դրույթները, որոնք առավել բարենպաստ պայմաններ են նախատեսում մեղադրյալի համար (*Scoppola v. Italy* (no. 2) app. 10249/03 GC Judgment 17/09/2009): Դատարանն այն կարծիքին է, որ ավելի ծանր պատժի կիրառումը միայն այն պատճառով, որ դա նախատեսված էր հանցանքի կատարման պահին, նշանակում է ի վնաս մեղադրյալի կիրառել ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության կանոնները: Ի հավելումն դա կնշանակի անտեսել մեղադրյալի համար բոլոր այն բարենպաստ օրենսդրական փոփոխությունները, որոնք կատարվել են մինչև նրա դատապարտումը, և նշանակել պատիժներ, որոնք պետությունը և հանրությունը դիտարկել են որպես չափազանց խիստ: Դատարանը նշել է, որ Եվրոպայում (և ընդհանրապես միջազգայնորեն) համաձայնություն է կայացվել այն մասին, որ քրեական իրավունքի հիմնարար սկզբունք է դարձել ավելի մեղմ պատիժ նախատեսող օրենքի, նույնիսկ այն օրենքի, որն ուժի մեջ է մտել հանցանքի կատարումից հետո, հետադարձ ուժը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժի հանգամանքը պայմանավորված է Սահմանադրությամբ օժտված իրավունքի ուժով, ինչպես նաև ՀՀ միջազգային պարտավորություններով և օրենսդրի որևէ հայեցողություն չի ենթադրում:

Իրավակիրառ պրակտիկայում առաջանում են խնդիրներ, երբ օրենսդիրը փոփոխություններ է մտցնում ոչ թե անմիջապես քրեական օրենքում, այլ միջձյուղային այն օրենսդրության մեջ, որն այս կամ այն կերպ որոշում է քրեաիրավական արգելքների բովանդակությունը կամ քրեական պատժի սահմանները: Այդ բարդությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ ձևական առումով դրանք չեն համարվում քրեական օրենքի փոփոխություն: Սակայն պետք է հաշվի առնել, որ Սահմանադրության 72-րդ հոդվածում օգտագործվում է ոչ թե «քրեական օրենք», այլ «օրենք» եզրույթը: Վերոնշյալ դրույթի և տառացի, և համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ օրենքի հետադարձ ուժի բացառության կանոնը տարածվում է նաև այն օրենքների վրա, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմով:

Ավելին, այն դեպքերում, երբ օրենսդիրը քրեական օրենքը շարադրելիս հղում է կատարում այլ օրենքների նորմերին, ապա դրանք որոշակիորեն վերածվում են քրեական իրավունքի աղբյուրի: Նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա կատարվում կամ ենթադրվում է հղում քրեաիրավական բլանկետային նորմով, էապես ազդում են հանցանքի իրավական բովանդակության և այդ հանցանքի համար քրեական պատասխանատվության կիրառման սահմանների վրա: Այսպիսով, **յուրաքանչյուր փոփոխություն այն օրենքներում, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմում, կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության ընդլայնման, նեղացման կամ վերացման:** Ամեն պարագայում, թեև միայն քրեական օրենքն է, որ, միացնելով հանցակազմի բոլոր տարրերը, սահմանում է արարքի հանցավորությունը, այնուամենայնիվ, քրեական օրենքը պետք է դիտարկել բլանկետային նորմերի հետ միասնության մեջ: **Հետևաբար՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու կանոնը վերաբերում է նաև այն օրենքներին, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմով:**

Սահմանադրության 72-րդ հոդվածում ձևակերպված «արարքի պատժելիությունը վերացնող ... օրենք» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ օրենքը համարվում է արարքի պատժելիությունը վերացնող, եթե

ա. այդ օրենքի իմաստով հանցագործություն չի հանդիսանում այն արարքը, որը նախկին օրենքով սահմանված էր որպես հանցագործություն (ապաքրեականացում),

բ. արարքը շարունակում է հանդիսանալ հանցագործություն, սակայն հանցակազմը այդ օրենքով ենթարկվում է այնպիսի փոփոխությունների, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է (մասնակի ապաքրեականացում):

Նշված հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը և, վերլուծելով Սահմանադրության, Օրենսգրքի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի որոշման կայացման պահին գործող վերաբերելի դրույթները, ինչպես նաև համապատասխան միջազգային-իրավական ակտերի վերաբերելի նորմերը, ԳԴ1/0013/01/11 քրեական գործով 2011 թվականի հոկտեմբերի 20-ի որոշման 17-րդ կետում արձանագրել է, որ.

«Քրեական օրենքը հետադարձ ուժ է ստանում, այսինքն՝ դրա գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց վրա հետևյալ դեպքերում.

1. նոր օրենքը վերացնում է արարքի հանցավորությունը (ապաքրեականացում),
2. նոր օրենքը մեղմացնում է պատիժը,
3. նոր օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

... Քրեական օրենքին հետադարձ ուժ տալու պայմանները սպառնիչ են և ունեն իմպերատիվ բնույթ, այսինքն՝ եթե նոր ընդունված օրենքը պարունակում է վերը նշված պայմաններից առնվազն մեկը, ապա իրավակիրառող մարմինը պարտավոր է դրա գործողությունը տարածել մինչև օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց...վրա...:

Այն դեպքերում, երբ նոր ընդունված օրենքը միաժամանակ բովանդակում է պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող դրույթներ, ապա օրենքը հետադարձ ուժ է ստանում միայն մեղմացման առումով»:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով և զարգացնելով վերոհիշյալ որոշման մեջ ձևավորված իրավական դիրքորոշումները, ԵԷԴ/0126/13/11 քրեական գործով 2013 թվականի փետրվարի 15-ի որոշման մեջ անդրադարձել է մասնակի ապաքրեականացման հարցին և որոշման 34-րդ կետում արձանագրել է.

«նոր քրեական օրենքը համարվում է արարքի հանցավորությունը բացառող, *inter alia*, եթե արարքը չի դադարում հանցագործություն լինելուց, սակայն հանցակազմն այնպիսի փոփոխությունների է ենթարկվում, որ հանցավոր համարվող արարքների շրջանակը նեղանում է»: Ընդ որում, ՎՃՌաբեկ դատարանի դիրքորոշմամբ սահմանվում է, որ այդպիսի դեպքերը հանդիսանում են մասնակի ապաքրեականացում և կարող են վերաբերել հանցակազմի առանձին տարրերին կամ հանցագործության հատկանիշներին:

**5.3.** Օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Հանցակազմի սուբյեկտը հանցագործության հանցակազմի չորս տարրերից մեկն է, որոնցից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է հանցակազմի բացակայության մասին, ուստիև բացառում է տվյալ արարքի հանցավորությունը և պատժելիությունը: Օրինակ՝ եթե օրենսդրական փոփոխության հետևանքով անձի պաշտոնը դուրս է բերվել զինձառայողների ցանկից, ապա այդ անձին զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության համար մեղադրանք առաջադրելը կխախտի Սահմանադրության 72-րդ հոդվածով սահմանված իրավական երաշխիքները:

Հետևաբար քրեական օրենքը հետադարձ ուժ ունի նաև այն դեպքերում, երբ տեղի է ունենում սուբյեկտային կազմով մասնակի ապաքրեականացում, այսինքն՝ երբ սուբյեկտային կազմից հանվում են այնպիսի սուբյեկտներ, որոնց համար նախկին օրենքով սահմանված էր քրեական պատասխանատվություն:

Սահմանադրական դատարանի նշյալ մեկնաբանությունը վերաբերում է ոչ միայն Օրենսգրքի սույն գործով վիճարկվող 310.1-րդ հոդվածի 1-ին մասին ու 314.3-րդ հոդվածին, այլև Օրենսգրքով նախատեսված ցանկացած այլ արարքի:

**5.4.** Օրենսգրքի առանձին դրույթների սահմանադրականության հարցերի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը որպես կանոն անդրադարձել է նաև դրանց կիրառմանն անմիջականորեն առնչվող քրեադատավարական նորմերին՝ կարևորելով դրանց իրացման արդյունքում մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորվածությունը և այդ նորմերի միա-

տեսակ կիրառության ապահովումը: Հաշվի առնելով նյութական և դատավարական իրավակարգավորումների փոխկապակցվածությունը՝ Սահմանադրական դատարանը սույն գործով նույնպես կարևորում է վիճարկվող դրույթների կիրառման ընթացակարգերը սահմանող, հատկապես կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նախադրյալներին առնչվող դատավարական նորմերի վերլուծությունը:

Այսպես՝ Քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի կարգավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական գործով մինչդատական վարույթում կալանավորման ձևով անձնական ազատության իրավունքի սահմանափակումը կարող է կիրառվել **միայն մեղադրյալի** նկատմամբ (Քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մաս): Իսկ մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին (Քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մաս):

Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից **հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է**: Այդ հիմքերի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին (Քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-2-րդ մասեր):

Միաժամանակ, Քրեական դատավարության օրենսգրքը սահմանում է, որ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն (Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ինչ վերաբերում է կալանավորման ձևով մեղադրյալի անձնական ազատության սահմանափակման ընթացակարգին, ապա կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման

միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը: Միջնորդությունը քննարկելիս դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ (Քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր):

**5.5.** Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունները, արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի, անձնական ազատության իրավունքի սահմանափակման, դրա իրավաչափության երաշխիքների ապահովման տեսանկյունից գնահատելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վերջին տարիներին այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է զբաղում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ: Վճռաբեկ դատարանը գտել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (տես՝ ԱԴԴ-1/0003/11/08 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի որոշման 12-րդ կետը):

Զարգացնելով և կոնկրետացնելով այս մոտեցումը՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու ընթացակարգի շրջանակներում Վճռաբեկ դատարանը որոշակիացրել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրները և սահմանել, որ, մասնավորապես, **կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը** (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի): Կալանավորման պայմանը **փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը** (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի): Ըստ Վճռաբեկ դատարանի՝ հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, Օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը (տես՝ ԵԿԴ/0678/06/10 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշման 19-րդ կետը):

Իր մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը սահմանել է կալանքի իրավաչափության գնահատման հաջորդ չափանիշը: Այսպես՝ ԵԿԴ/0503/06/10 քրեական գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ անձի ազատության սահմանափակման դեպքում դատարանները, ի թիվս կալանավորման հիմքերի և այլ պայմանների, քննարկման առարկա պետք է դարձնեն նաև Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ **քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը** (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի): Եթե կոնկրետ դեպքում առերևույթ առկա և կիրառելի է քրեական վարույթը բացառող հանգամանքներից որևէ մեկը, ապա կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը ենթակա է մերժման: Այսինքն՝ անձի ազատությունը սահմանափակելը կհամարվի օրինական և հիմնավորված

միայն կալանավորման հիմքերի և այլ պայմանների միաժամանակյա առկայության և քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում (որոշման 23-րդ կետ, ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Վճռաբեկ դատարանը կրկին արձանագրել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը հանդիսանում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության յուրահատուկ միջոց, որը կատարում է քրեական հետապնդման մարմիններին զսպող գործոնի դեր և ուղղված է ինչպես անձի իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելուն, այնպես էլ բացառելու քրեական գործով մինչդատական վարույթում այդ իրավունքների և ազատությունների անհիմն և անօրինական սահմանափակումները և խախտումները (որոշման 27-րդ կետ):

Բացի դրանից, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության անտեսմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելը դատական վերահսկողությունը դարձնում է ձևական և ոչ արդյունավետ միջոց (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի), որի հետևանքով էլ չի իրականացվում դատական վերահսկողության առաքելությունը՝ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը և այդ իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումների բացառումը (որոշման 28-րդ կետ):

Միաժամանակ, նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը սահմանել է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը գործում է որպես մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող միջոց, ուստի չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրան համապատասխան որոշում կայացնելու նպատակ, որը բուն արդարադատության իրականացման գործառույթ է: Դատարանն այս դեպքում որոշում է բացառապես անձի իրավունքների սահմանափակման օրինականության և հիմնավորվածության



հարցը: Դա նշանակում է, որ խափանման միջոց կալանքը ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս դատարանը, **հավաստելով քրեական վարույթը բացառող հանգամանքների առերևույթ առկայությունը և կիրառելիությունը, պարտավոր է ընդամենը մերժել նախաքննության մարմնի միջնորդությունը** (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի): Այլ կերպ՝ մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան, հակառակ դեպքում կխախտվեն քրեական դատավարության փուլային կառուցվածքը, ինչպես նաև քրեադատավարական գործառույթների տարանջատման և դատարանի անկախության սկզբունքները (որոշման 29-րդ կետ):

Վճռաբեկ դատարանը նաև դիրքորոշում է հայտնել առ այն, որ դատարանն իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, ըստ Վճռաբեկ դատարանի՝ քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, **այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա** (ԵԱՆԴ /0017/06/16 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի որոշման 15-րդ կետ, ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Մի շարք այլ որոշումներում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ, ի թիվս այլնի՝ քրեական գործի վարույթը բացառող հանգամանք է **նաև արարքի ապաքրեականացումը** (տես, մասնավորապես՝ ՏԴ2/0030/01/13 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի որոշման 18-րդ կետը և ԵԷԴ/0030/01/12 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման 18-րդ կետը):

Այսինքն՝ դատարանների համար պարզ և կանխատեսելի է դարձել, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու գործընթացի շրջանակներում պետք է քննարկվի և գնահատվի նաև մեղադրյալին վերագրվող արարքի ենթադրյալ ապաքրեականացման՝ որպես քրեական գործի վարույթը բացառող հանգամանքի հարցը, քանի որ դա ուղղակիորեն բխում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներից:

Վճռաբեկ դատարանը, զարգացնելով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանների վերաբերյալ իր մոտեցումները, դիրքորոշում է հայտնել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր են: Եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի: Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան (տես՝ ՏԴ2/0009/06/11 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման 13-րդ կետը):

Հետագայում Վճռաբեկ դատարանը սահմանել է ևս մեկ կանոն, որով կարևորել է կալանավորման ինքնուրույն պայմաններից մեկի ոչ միայն ձևական առկայության փաստը, այլև կալանավորման դատավարական կարգի պահպանման հանգամանքը: Այսպես՝

արձանագրվել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման արդյունքներով դատարանն ի թիվս այլնի պետք է պարզի կալանավորման ինքնուրույն պայմանի առկայությունը, մասնավորապես, այն, թե արդյոք անձին տրվել է մեղադրյալի դատավարական կարգավիճակ: Նշված հանգամանքը պարզելու նպատակով դատարանը պարտավոր է ստուգել, թե նախաքննության մարմնի կողմից ներկայացվել են արդյոք համապատասխան տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ այն մասին, որ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում է կայացվել, անձը տեղեկացվել է այդ որոշման մասին, բացի դրանից, նրան պարզաբանվել է առաջադրված մեղադրանքի էությունը, և հանձնվել են որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենն ու մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ցանկը: Հակառակ պարագայում, անձի կալանավորումը և համապատասխանաբար նաև նրա ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումը կհամարվի կամայական և անօրինական:

Վճռաբեկ դատարանը չի համաձայնել նաև վերաքննիչ դատարանի այն հետևության հետ, որ այդ հարցը ենթակա չէ քննարկման վերաքննիչ դատարանում առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման շրջանակներում, այլ ենթակա է բողոքարկման Քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանված կարգով (տես ԵԱՔԴ/0218/06/12 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի ապրիլի 18-ի որոշման 16-18-րդ կետերը):

Վկայակոչված որոշումների համալիր վերլուծությունից հետևում է, որ Վճռաբեկ դատարանը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու ընթացակարգի շրջանակներում պարտադիր է համարում **մեղադրյալին ներկայացված մեղադրանքի քննարկումը՝ դրանում հիմնավոր կասկածի առկայության, դրա դատավարական ձևակերպման, քրեական հետապնդումը բացառող հանգամանքների, այդ թվում՝ արարքի ապաքրեականացման հանգամանքը պարզելու տեսանկյունից**, սակայն անթույլատրելի է դիտում մեղադրանքի էության և հիմնավորվածության հարցի քննարկումը:

Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում **դատարանները չեն կարող գնահատել մեղադրանքի ապացուցվածությունը**, սակայն պարտավոր են կալանքը ընտրելու հարցը լուծելիս **ստուգել մեղադրյալին ներկայացված մեղադրանքի օրինականությունը**:

**5.6.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձևավորված դատական պրակտիկայի համաձայն՝ **մեղադրանքի օրինականությունը**, որպես կալանավորման պայման, իր մեջ, մասնավորապես, ներառում է անձի՝ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքին հասնելը, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելը, այն մեղադրյալին պատշաճ դատավարական կարգով ներկայացնելը, ինչպես նաև **տվյալ անձի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող**, այդ թվում՝ **արարքի ապաքրեականացման հանգամանքները** հաշվի առնելը:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ մեղադրյալին ներկայացված և կալանքի ընտրության համար դատարան ներկայացված մեղադրանքի օրինականությունը կարող է ստուգվել նաև նյութական և դատավարական այլ չափանիշների հիման վրա: Մասնավորապես՝ կալանավորման քննարկվող պայմանը կբացակայի նաև այն դեպքում, երբ մեղադրյալին վերագրվող արարքը քրեորեն պատժելի չէ (օրինակ՝ նախատեսված է որպես վարչական իրավախախտում) կամ երբ առկա է «սխալ» հանցագործության սուբյեկտի հարցում (օրինակ՝ երբ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության համար մեղադրանք է ներկայացվել զինծառայող չհանդիսացող անձին): Նույն կերպ մեղադրանքի օրինականության պահանջն ապահովված չի լինի, եթե անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշումը կայացնի ոչ պատշաճ, այսինքն, օրենքով չլիազորված սուբյեկտը (օրինակ՝ հետաքննության մարմինը կամ քննչական խմբի անդամը (ըստ Քրեական դատավարության օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի՝ այդ որոշումը կարող է ընդունել միայն քննչական խմբի ղեկավարը)), կամ երբ այդ որոշումը կայացվի առանց քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու:

Վերոնշյալ բոլոր դեպքերում առկա մեղադրանքի «թերություններն» այնպիսին են, որ դրանց բացահայտման և հաստատման համար մեղադրանքի հիմքում դրված փաստերի և/կամ ապա-

ցույցների բովանդակային քննարկում ու վերլուծություն չի պահանջվում, ուստի դրանց արձանագրումը և գնահատումը լիովին տեղավորվում են մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողության շրջանակներում:

Ելնելով նաև տևական ժամանակահատվածի ընթացքում ձևավորված դատական պրակտիկայի արդյունքներից Սահմանադրական դատարանը հանգում է հետևության, որ մեղադրյալին ներկայացված **մեղադրանքի օրինականությունը հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը պարզելու պարտադիր նախապայման է**, որի անտեսումը կարող է հանգեցնել անձնական ազատության ոչ իրավաչափ սահմանափակման:

**5.7.** Սահմանադրական դատարանը փաստում է, որ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովումը Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթն է: Անհատական դիմումի քննության շրջանակներում վիճարկվող նորմատիվ իրավական ակտին հանրային իշխանության որևէ մարմնի, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը, չի կարող ինքնին Սահմանադրական դատարանի գնահատման առարկա դառնալ, եթե չի աղերսվում Սահմանադրությանը:

Ուստի Վճռաբեկ դատարանի վերը հիշատակված իրավակիրառ պրակտիկան գնահատելով Սահմանադրության՝ սույն գործով կիրառման ենթակա դրույթների լույսի ներքո՝ Սահմանադրական դատարանը հանգում է հետևյալ եզրակացության.

1) Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած» արտահայտության սահմանադրական բովանդակությունը, հաշվի առնելով կալանավորելու եղանակով անձի անձնական ազատությանն առավել ինտենսիվ միջամտության համար բոլոր անհրաժեշտ նախադրյալների պատշաճ հիմնավորման պահանջը, ներառում է նաև **մեղադրանքի իրավաչափությունը, որը, իր հերթին, պետք է խարսխվի քրեական հետապնդումը բացառող բոլոր հանգամանքները, այդ թվում և հատկապես՝ արարքի ապաքրեականացումը** ժխտելու վրա: Նման մոտեցումը բխում է նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից: Վերջինս, քննության առնելով նախնական կալանքի իրավաչափության հարցը, շեշտել է, որ անձին ազատությունից զրկելու

համար ակնհայտ է, որ չի կարող լինել նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, եթե նրան վերագրվող գործողությունը կամ անգործությունը կատարման պահին քրեական օրենքով հանցանք չի համարվել (Wloch v. Poland, app. 27785/95, Judgment 19/10/2000, §§ 108-109 և Kandzhov v. Bulgaria, app. 68294/01, Judgment 06/11/2008, § 57):

2) մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետությունը՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ուժով, ենթադրում է **մեղադրանքի իրավաչափության պարտադիր ստուգում դատարանի** կողմից՝ առանց կանխորոշելու գործի ըստ էության քննության ժամանակ պարզելու ենթակա փաստական և իրավական հանգամանքները,

3) կալանավորման անհրաժեշտությունը պետք է հաստատվի փաստական, այդ թվում՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանքները հերքող տվյալներով, և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը՝ որպես անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի երաշխիքներից մեկը՝ ենթադրում է կալանավորման անհրաժեշտության մասին վկայող փաստերի առկայության հաստատում,

4) վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, ներառյալ՝ համապատասխան դատական ակտի իրավաչափության պատշաճ գնահատումը, նույնպես պետք է երաշխավորվեն՝ այդ ատյանների գործառույթների առանձնահատկությունների հաշվառմամբ:

**5.8.** Միաժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի վերը վկայակոչված դիրքորոշումներից հետևում է.

1) կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ **կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը,**

2) անձի ազատությունը սահմանափակելը օրինական և հիմնավորված է **միայն կալանավորման հիմքերի և այլ պայմանների միաժամանակյա առկայության և քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում,**

3) քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության անտեսմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելը **դատական վերահսկողությունը դարձնում է ձևական և ոչ արդյունավետ միջոց:**

Սահմանադրական դատարանը նշում է նաև, որ Վճռաբեկ դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումները չեն կարող անտեսվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելիս՝ հաշվի առնելով հատկապես Քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջն առ այն, որ **վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության**, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Սա այն հիմնական միջոցներից մեկն է, որով երաշխավորվում է Վճռաբեկ դատարանի՝ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի արդյունավետ իրականացումը:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պարտադիր լիազորության շրջանակներում վճռաբեկ բողոքի գնահատման ազատությանը, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ ազատությունը սահմանափակվում է Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված՝ տվյալ բողոքի քննությանը նախորդող տևական պրակտիկայով, որը կաշկանդում է Վճռաբեկ դատարանին և պահանջում դրանից հրաժարվելու կամ այն փոփոխելու դեպքերում պատշաճ հիմնավորում, ինչպես նաև ենթադրում է, որ այդպիսի դեպքերում Վճռաբեկ դատարանը հետագայում պետք է հետևողականորեն ղեկավարվի իր նոր իրավական դիրքորոշումներով: Ուստի, որևէ չհիմնավորված, կամայական շեղում նախորդող պրակտիկայից անթույլատրելի է:

**5.9.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը ենթադրում է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովում, ապա վերաքննիչ և վճռաբեկ ատյանների խնդիրն է Սահմանադրությամբ սահմանված գործառույթների և օրենքով

սահմանված լիազորությունների շրջանակներում երաշխավորել մինչդատական վարույթի նկատմամբ առաջին ատյանի դատարանի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ իրենց հերթին ապահովելով այն վիճարկող՝ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացրած անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Ուստի, մինչդատական վարույթի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը ենթադրում է նաև դիմողի կողմից ներկայացված՝ **արարքի ապաքրեականացման մասին առերևույթ վկայող փաստերը**, մասնավորապես՝ հանցագործության սուբյեկտի ենթադրյալ վերացման փաստը **Սահմանադրության 72-րդ հոդվածի 3-րդ նախադասության հրամայական պահանջի շրջանակներում** պատշաճ ուշադրության արժանացնելը **բոլոր դատական ատյաններում՝** հատկապես հաշվի առնելով **կալանավորման՝ որպես անձի անձնական ազատությանն առավել ինտենսիվ միջամտության, ծանրության աստիճանը:**

5.10. Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված Վճռաբեկ դատարանի գործառույթները, ներառյալ՝ այդ գործառույթներն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում իրականացնելու պահանջը՝ համակցված Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, վկայում են, որ Վճռաբեկ դատարանը (ինչպես և այլ դատարաններ կամ վարչական մարմիններ) **կաշկանդված է տևականորեն ձևավորված և հետևողականորեն կենսագործված իր իսկ պրակտիկայով, քանի դեռ պատշաճ կերպով չի հիմնավորել դրանից հրաժարվելու կամ այն փոխելու անհրաժեշտությունը:**

Նշված գործառույթների արդյունավետ իրականացումը, ի թիվս այլնի, ենթադրում է նաև Քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածով սահմանված՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու լիազորության պատշաճ իրականացում: **Վճռաբեկ դատարանը ոչ թե հայեցողական, այլ պարտադիր ատյան է**, ուստի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելը Վճռաբեկ դատարանի **ոչ թե հայեցողական, այլ պարտադիր լիազորությունն է:** Թեև դա չի բացառում վճռաբեկ բողոքի ընդունելիության հիմքերի որոշումը՝ դրանով պայմանավորված **գնահատման ազատության սահմաններում**, սակայն այդ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում վճռաբեկ բողոքը քննության ընդունելը չի կարող պայ-

2(94)2019

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦



մանավորվել Վճռաբեկ դատարանի հայեցողությամբ: Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի դերին՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի ապրիլի 9-ի ՄԴՈ-690 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն»:

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, վարույթ չընդունելով դիմողի վճռաբեկ բողոքը, անտեսել է առաջին և վերաքննիչ ատյանների դատարանների որոշումների **առերևույթ հակասությունն** իր իսկ որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին, այլ կերպ՝ **կամայականորեն, առանց անհրաժեշտ հիմնավորումների շեղվել է իր արտահայտած դիրքորոշումներից**, ինչը հանգեցրել է դիմողի՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, ինչպես նաև 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքների խախտմանը:

**5.11.** Սահմանադրական դատարանը շեշտում է, որ կոնկրետ քրեական գործով կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու ժամանակ մեղադրյալի կողմից մեղադրանքի օրինականությունը վիճարկելը պետք է դիտարկել որպես նրա անձնական ազատության պաշտպանության անհրաժեշտ և հասանելի միջոց: Ուստի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ձևաչափում մեղադրյալին ներկայացված մեղադրանքի օրինականությունը վիճարկելու արդյունավետ հնարավորություն չտալը կամ դրա օգտին բերված փաստարկները հաշվի չառնելն անհիմն սահմանափակում են նրա իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի իրականացումը, իսկ վերադաս ատյանների կողմից այս փաստն անտեսելը դատական պաշտպանությունը դարձնում է ոչ արդյունավետ նաև այդ ատյաններում:

**5.12.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ անձնական ազատությունից զրկելուն վերաբերող ցանկացած փաստ վիճարկման դեպքում պետք է դառնա դատական վերահսկողության

առարկա, իսկ դատարանները կաշկանդված են նաև այդ հարցով իրենց կողմից տևականորեն ձևավորված պրակտիկայով, որից շեղումը թույլատրելի է միայն պատշաճ հիմնավորման դեպքում և պետք է ներառի շեղվելու վերաբերյալ ողջամիտ փաստարկներ:

**5.13.** Վերոգրյալի ամփոփման արդյունքում Սահմանադրական դատարանը փաստում է, որ սույն դիմումի առարկայի սահմաններում վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը, քանի որ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հանգեցնում է ոչ թե վիճարկվող դրույթների բովանդակությունը, այլ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասը և 314.3-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը հետևյալ մեկնաբանությամբ.

1) արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու սահմանադրական սկզբունքը վերաբերում է ոչ միայն քրեական օրենքին, այլ նաև այն օրենքներին, որոնց հղում է կատարվում Քրեական օրենսգրքի բլանկետային նորմերով,

2) Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած» արտահայտությունը ենթադրում է, որ անձին ներկայացված քրեական մեղադրանքն իրավաչափ է, բացակայում են քրեական հետապնդումը բացառող, ինչպես նաև արարքի պատժելիությունը հետադարձ ուժով վերացնող հանգամանքները,

3) իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքը ներառում է նաև քրեական գործի մինչդատական վարույթում կալանքը որպես խափան-

ման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննելիս մեղադրյալին ներկայացված մեղադրանքի իրավաչափությունը նրա կողմից վիճարկելու իրավունքը, որը պետք է երաշխավորվի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող դրույթները դիմողի նկատմամբ կիրառվել են այլ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

16 ապրիլի 2019 թվականի  
ՍԴՈ-1453



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

**Հ Ա Տ ՈՒ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք**

**«ՎԱՉԱԳԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 310.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ  
ԵՎ 314.3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 16.04.2019Թ.  
ՍԴՈ-1453 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 16.04.2019թ. ՍԴՈ-1453 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումներից տարբերվող հետևյալ տեսակետը.

1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ Սահմանադրական դատարան կարող են դիմել՝ «...յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

Սահմանադրության հիշյալ իրավակարգավորումն իր ընթացակարգային բովանդակությամբ որոշակիացվել է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին և դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում կոնկրետ գործի շրջանակում անհատական դիմում կարող է ներկայացվել Սահմանադրական դատարան: Դրանք են. ա) երբ դիմողը կոնկրետ գործի շրջանակում հանդիսանում է դատավարության մասնակից, բ) երբ դիմողի նկատմամբ առկա է դատարանի վերջնական ակտը, գ) երբ վիճարկում է դատական այդ ակտով դիմողի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, դ) երբ սպառվել են դիմողի հիմնական իրավունքների դատական պաշտպանության բոլոր միջոցները, ե) երբ դիմողի նկատմամբ նորմատիվ իրավական այդ ակտի կիրառումը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի հիշատակված իրավակարգավորումների բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի իրացման հարցում և՛ սահմանադիրը, և՛ օրենսդիրը ֆիզիկական կամ իրավաբանական անձին առաջադրել են նշված իրավապայմանները միաժամանակյա պահպանելու պարտականություն, և դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած անձը չի կարող հանդիսանալ Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ:

Քննության առարկա սույն գործի շրջանակում, կարծում եմ, Սահմանադրական դատարանին ուղղված դիմումով չեն պահպանվել անհատական դիմումի ընդունելիության իրավապայմանները հետևյալ հիմնավորմամբ. 1) դիմողի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող նորմերը կարող էին կիրառվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով,

ինչը առկա չէ, 2) դա միաժամանակ նշանակում է, որ տվյալ գործի շրջանակում առկա չէ դիմողի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտ, 3) հետևաբար, չեն սպառվել նաև վերջինիս իրավունքների դատական պաշտպանության միջոցները:

2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և դրա հիման վրա «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակում՝ անհատական դիմումների ընդունելիության պահանջ է սահմանվել նաև դիմողի նկատմամբ նորմատիվ իրավական ակտի կիրառումը, որը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Քննության առարկա գործի շրջանակում Սահմանադրական դատարանի որոշման պատճառաբանական մասում շարադրված դիմողի հիմնավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ վերջինս մի դեպքում բարձրացրել է տվյալ գործով դատական ակտերի օրինականության և այդ ակտերով նորմատիվ իրավական ակտի դրույթների, այդ թվում՝ քրեական վարույթի շրջանակներում խափանման միջոցների կիրառման իրավաչափության հարց, որը քրեական իրավունքի վիճարկվող նորմերի սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներից դուրս է և հետևաբար ենթակա չէ Սահմանադրական դատարանին, իսկ մեկ այլ դեպքում՝ առաջադրել է հարցեր մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում հանցակազմի սուբյեկտի որոշման, այդ հանցակազմի սուբյեկտային մասով ապաքրեականացման, մեղսագրվող արարքի հատկանիշներով քրեական հետապնդում իրականացնելու իրավաչափության և այլնի վերաբերյալ, որոնց լուծումը կարող է տրվել միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա:

Այսինքն, դիմողի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականության հիմքում առավելապես դրվել են այնպիսի հիմնավորումներ, որոնք կարող են կոնկրետ սահմանադրական վերահսկողության շրջանակներում քննության առարկա լինել միայն անհատական դիմումի հիման վրա, եթե առկա է

օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը: Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների սահմանադրականության հիմքում ընկած այն հիմնավորումներին, որոնք ունեն ընդհանուր նշանակություն, ապա դրանք կարող են քննության առարկա լինել վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքերով Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր՝ «Վաչագան Ղազարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասի և 314.3-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունն ամբողջությամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում ընդունելու կամ գործի վարույթը կարճելու համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

**Հ Ա Տ ՈՒ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք**

**«ՎԱԶԱԳԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 310.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ  
ԵՎ 314.3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 16.04.2019Թ. ՍԴՈ-1453  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՀ սահմանադրական դատարանի՝ 16.04.2019թ. ՍԴՈ-1453 որոշման վերաբերյալ ունեմ հետևյալ առարկությունը:

Վաչագան Ղազարյանի դիմումով գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ենթակա էր կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել «...յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

Հիմք ընդունելով Սահմանադրության վերոհիշյալ նորմատիվ պահանջները՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի իրավակարգավորմամբ օրենս-



դիրք մանրամասնել է անհատական դիմումներով Սահմանադրական դատարան դիմելիս անձանց իրավունքներն ու պարտականությունները՝ միաժամանակ նաև նույն օրենքի 28-րդ և 29-րդ հոդվածներով հստակեցնելով անհատական դիմումներով գործը քննության ընդունելիս Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակը:

Սահմանադրության 169-րդ հոդվածի եւ վերջինիս հիման վրա՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջներից է ուղղակիորեն բխում այն հիմնական իրավապայմանը, համաձայն որի՝ անձն իրավասու է իր հիմնական իրավունքների պաշտպանության նպատակով Սահմանադրական դատարանում վիճարկել նորմատիվ ակտի այն դրույթի սահմանադրականությունը, որը կիրառվել է իր նկատմամբ՝ դատարանի վերջնական ակտով, երբ սպառվել են նաև դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Սահմանադրական դատարանը հիշյալ իրավապայմանների սահմանադրաիրավական բովանդակությանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում:

Տվյալ դեպքում դիմողի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի վիճարկվող նորմերը կարող էին կիրառվել միայն դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով, ինչն ըստ գործում առկա նյութերի տեղի չի ունեցել եւ դիմողը քրեական օրենսգրքի հիշյալ նորմերի սահմանադրականությունը վիճարկելիս փաստորեն գտնվել է դեռևս մեղադրյալի կարգավիճակում: Դիմողի՝ որպես մեղսագրվող արարքի սուբյեկտ հանդիսանալ կամ չհանդիսանալու, մեղսագրվող արարքի հատկանիշներով առհասարակ քրեական հետապնդում իրականացնելու իրավաչափության եւ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված փոխկապակցված այլ հարցերի վերջնական լուծումը կարող է տրվել միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա, որը քննվող գործով առկա չէ: Իսկ քրեական վարույթի շրջանակներում խափանման միջոցների կիրառման իրավաչափության հարցերը, որոնց անդրադարձել էր դիմողը, դուրս են իր կողմից վիճարկվող քրեաիրավական նորմերի սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներից:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Հետեւաբար, գտնում եմ, որ գործի վարույթը Սահմանադրական դատարանում ենթակա էր կարճման, քանի որ դիմողը վերոշարադրյալ իրավապայմանների շրջանցմամբ իրավասու չէր դիմելու Սահմանադրական դատարան:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ

Հ. ՆԱԶԱՐՅԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
1-ԻՆ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ  
2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 ապրիլի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի Հանրապետության նախագահի, գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 73-րդ հոդվածների,

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ Ազգային ժողովի կողմից ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի հոկտեմբերի 2-ին, Հանրապետության նախագահի կողմից չի ստորագրվել և ուժի մեջ չի մտել:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օրենքի 50-րդ հոդվածում՝

6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Եթե Կանոնակարգի 51-րդ հոդվածով սահմանված կարգով նիստի իրավագործությունը՝

1) ապահովվում է, ապա հարցի քննարկումն ավարտվելուց հետո նախագահողը հայտարարում է հատուկ նիստն ավարտված.

2) սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված հարցի քննարկման համար չի ապահովվում՝ պայմանավորված արտակարգ իրավիճակներով, ինչպես նաև երբ խոչընդոտվում է պատգամավորների մասնակցությունն Ազգային ժողովի նիստին, այդ թվում՝ սպառնալիքի միջոցով, ապա Ազգային ժողովի նիստը համարվում է ընդհատված, որի վերաբերյալ Ազգային ժողովի նախագահը հանդես է գալիս հայտարարությամբ: Այդ դեպքում նիստը գումարվում է հաջորդ օրը՝ ժամը 10:00-ին: Նիստն ընդհատելու՝ սույն կետով նախատեսված կանոնները կիրառվում են նաև վերսկսված նիստի նկատմամբ.

3) չի ապահովվում, և առկա չէ սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքը, ապա հատուկ նիստը համարվում է չկայացած»:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

### **1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը վիճարկում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի սահմանադրականությունը, որոնք կարգավորում են վարչապետի ընտրության նպատակով գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստերի անցկացման հարցերը: Վիճարկվող իրավադրույթների համաձայն վարչապետի ընտրության նպատակով գումարված Ազգային ժողովի հատուկ նիստը համարվում է ընդհատված այն դեպքերում, երբ արտակարգ իրավիճակի կամ այլ խոչընդոտի պատճառով պատգամավորները չեն կարողանում մասնակցել այդ նիստին:

Հանրապետության նախագահը գտնում է, որ վիճարկվող դրույթների գործողությունը կարող է հանգեցնել մի իրավիճակի, երբ Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված Սահմանադրությամբ սահմանված ժամկետը փաստացի կարող է երկարաձգվել՝ դրանով առաջացնելով ողջամիտ ժամկետներում վարչապետի ընտրության կազմակերպման ռիսկեր:

Բացի դրանից, դիմողը նշում է, որ հիշյալ փոփոխությունների և լրացումների արդյունքում խախտվում է իրավական որոշակիության սկզբունքը, քանի որ վիճարկվող դրույթներում օգտագործվում է «արտակարգ իրավիճակներ» եզրույթը, սակայն չի հստակեցվում, թե դրա գնահատման համար որ իրավական ակտով պետք է առաջնորդվել:

Հանրապետության նախագահը հայտնում է նաև, որ տվյալ դեպքում՝ վիճարկվող դրույթներով չեն նախատեսվում հատուկ նիստի չկայացած համարվելուց հետո հարցը սահմանադրաիրավական պահանջին համահունչ քվեարկությամբ ավարտելը երաշխավորող կառուցակարգեր:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը հայտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված կարգավորումներն առաջացնում են Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջների իրացման անհամապատասխանություն և խնդրում է որոշել վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը նշում է, որ Սահմանադրության 149-րդ հոդվածով սահմանված յոթնօրյա ժամկետի մարումը չի կարող առաջացնել իրավական հետևանք, քանի որ այդ պայմաններում ուղղակիորեն խախտվում են Սահմանադրության 94-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց՝ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքի խախտման վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ պատասխանողը հայտնում է, որ վիճարկվող դրույթի իմաստով «արտակարգ իրավիճակներ» են այն հանգամանքները, որոնց ի հայտ գալու դեպքում պատգամավորներն իրենցից անկախ հանգամանքներով ծագած անկասելի և արտակարգ ուժի պատճառով չեն կարող դրսևորել իրենց կամաարտահայտությունը և մասնակցել վարչապետի ընտրության համար հրավիրված հատուկ նիստին:

Ինչ վերաբերում է վիճարկվող այն դրույթի սահմանադրականությանը, համաձայն որի՝ եթե չի ապահովվում հատուկ նիստի իրավագործությունը և միևնույն ժամանակ բացակայում են նիստն ընդհատված համարելու հիմքերը՝ հատուկ նիստը համարվում է չկայացած, ապա այս դրույթը նախատեսված է և՛ վիճարկվող փոփոխություններով, և՛ «Ազգային ժողովի կանոնակարգ» գործող ՀՀ սահմանադրական օրենքով: Վկայակոչելով Սահմանադրության 51-րդ, 140-րդ, 149-րդ հոդվածները՝ պատասխանողը եզրակացնում է, որ Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված «վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո» ձևակերպման ներքո պետք է ներառել ոչ միայն այն դեպքերը,

երբ հատուկ նիստի սկզբում սահմանված կարգով գրանցվում է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին, այլն երբ որևէ խմբակցություն չի առաջադրում վարչապետի թեկնածու կամ երբ հատուկ նիստի սկզբում պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին սահմանված կարգով չի գրանցվել:

Ելնելով վերոգրյալից պատասխանողը գտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրության պահանջներին:

08.04.2019թ. Սահմանադրական դատարանում մուտքագրված լրացուցիչ բացատրությամբ պատասխանողը համալրել է իր նախորդ բացատրությունը: Ըստ լրացուցիչ բացատրության պատասխանողը գտնում է, որ վիճարկվող Օրենքը թե՛ իրավական-բովանդակային, թե՛ ընդունման ընթացակարգային (ըստ ձևի) պահպանվածության տեսանկյունից խնդրահարույց է:

Մասնավորապես, պատասխանողը գտնում է, որ Օրենքով ամրագրված համապատասխան փոփոխությունների արդյունքով պայմանավորված իրավական գործընթացները կարող են հանգեցնել այնպիսի իրավիճակի, որի հետևանքով Սահմանադրությամբ սահմանված կարգով վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից հետո սահմանված յոթնօրյա ժամկետը փաստացի կարող է երկարաձգվել: Ավելին՝ սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող իրավանորմերը խնդրահարույց են նաև իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Պատասխանողը հայտնում է, որ վիճարկվող իրավադրույթներով չեն սահմանվում համապատասխան իրավական կառուցակարգեր, որոնք պետք է ապահովեին հատուկ նիստը չկայացած համարվելուց հետո համապատասխան հարցի՝ Սահմանադրության պահանջներին համահունչ քվեարկության կազմակերպումը, որն առաջացնում է իրավական բաց:

Լրացուցիչ բացատրություններով պատասխանողը գտնում է, որ Օրենքն ընդունելիս չի պահպանվել Ազգային ժողովի նիստերի հրապարակայնության սահմանադրաիրավական պահանջը: Չեն պահպանվել նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 60 և 61-րդ հոդվածների պահանջները:

Ամփոփելով իր հիմնավորումները՝ պատասխանողը գտնում է, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը հակասում է Սահմանադրության պահանջներին:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք վիճարկվող դրույթների գործողությունը կարող է հանգեցնել Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի խախտման,

- արդյոք վիճարկվող նորմերում օգտագործված «արտակարգ իրավիճակներ» եզրույթի գնահատման չափանիշները «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում չսահմանելը խախտում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը,

- արդյոք վիճարկվող դրույթներով նախատեսված՝ հատուկ նիստը չկայացած համարելու վերաբերյալ դրույթը հակասում է Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին,

- արդյոք «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի ցանկացած խախտում ինքնաբերաբար հանգեցնում է Սահմանադրության խախտման և, հետևապես, վիճարկելի է դառնում Սահմանադրական դատարանում, և արդյոք պահպանվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքն ընդունելու Սահմանադրությամբ նախատեսված կարգը:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության փոփոխությունների արդյունքում կառավարման կիսանախագահական հա-



մակարգից անցում կատարվեց խորհրդարանական համակարգի, որը բնութագրվում է մի շարք հատկանիշներով, որոնցից են Կառավարության ձևավորումը խորհրդարանական եղանակով և Կառավարության պատասխանատվությունը խորհրդարանի առջև:

Սահմանադրությամբ ամրագրվել է **Ազգային ժողովի առանցքային դերակատարությունը ժողովրդի կամքի ձևավորման հարցում:**

Ազգային ժողովի տեղն ու դերը սահմանադրական մարմինների համակարգում ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրությամբ (հոդված 88-րդ): Ազգային ժողովի կարգավիճակի առաջնային բնութագրիչն արտացոլված է Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է: Իսկ Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ **պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին**, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և հանդուժանքներով (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Խորհրդարանական կառավարման համակարգը ենթադրում է նաև Ազգային ժողովի դերի շեշտակի մեծացում պետական իշխանության այլ մարմինների ձևավորման հարցում: Այս առումով Ազգային ժողովը, անմիջականորեն ձևավորվելով պետական իշխանության միակ աղբյուրի և կրողի՝ ժողովրդի կողմից և ձեռք բերելով անմիջական ժողովրդավարական լեգիտիմացիա, այդ հատկությունը միջնորդավորված կերպով փոխանցում է իր կողմից ձևավորված պետական մարմիններին և ընտրված պաշտոնատար անձանց:

Հարկ է նկատել, որ Ազգային ժողովն արձակելու՝ Սահմանադրությամբ նախատեսված նախադրյալներից մեկը կապված է հենց այդ լիազորությունն իրացնելու հնարավորության բացակայության հետ: Ըստ այդմ՝ Ազգային ժողովն արձակվում է այն դեպքում, երբ ի վիճակի չէ ընտրել վարչապետ (հոդված 149-րդ, մաս 3-րդ): Ազգային ժողովն արձակելու մեկ այլ հիմք ամրագրված է Սահմանադրության 151-րդ հոդվածի 4-րդ մասում (վարչապետին ընտրելուց հետո Ազգային ժողովի կողմից Կառավարության ծրագրին հավանություն չտալը):

Ազգային ժողովն արձակելու՝ Սահմանադրությամբ նախատեսված հստակ և սպառիչ հիմքերի առկայությունը բխում է խորհրդարանական կառավարման համակարգին բնորոշ այն տրամաբանու-

թյունից, որ Ազգային ժողովը պետք է գործի այնքան ժամանակ, քանի դեռ ունի կառավարություն ձևավորելու համար անհրաժեշտ մեծամասնություն: Մյուս կողմից՝ այդ նույն տրամաբանության շրջանակներում, Ազգային ժողովն արձակելու կանոնակարգումներն ուղղված են այնպիսի հակակշիռների ստեղծմանը, որոնք կապահովեն Կառավարության կայունությունը:

Կառավարության ղեկավարի ընտրության հարցում Ազգային ժողովի լիազորություններն ամրագրված են Սահմանադրության 115 և 149-րդ հոդվածներում:

Սահմանադրության 149-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հանրապետության նախագահը նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն սկսվելուց հետո անհապաղ վարչապետ է նշանակում Սահմանադրության 89-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված խորհրդարանական մեծամասնության ներկայացրած թեկնածուին:

2. Վարչապետի հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ: Ազգային ժողովը վարչապետին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3. Վարչապետ չընտրվելու դեպքում քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն, որին մասնակցելու իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի առաջադրած վարչապետի թեկնածուները: Եթե պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

4. Վարչապետի ընտրությունն անցկացվում է անվանական քվեարկությամբ:

5. Հանրապետության նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին»:

Այսպիսով, վարչապետի կողմից հրաժարական ներկայացվելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու այլ դեպքերում Կառավարության հրաժարականն ընդունվելուց հետո յոթնօրյա ժամ-

կետում Ազգային ժողովի խմբակցություններն իրավունք ունեն առաջադրելու վարչապետի թեկնածուներ: Եթե առաջին փուլում վարչապետ չի ընտրվում, ապա քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն: Եթե այս փուլում ևս պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վարչապետ չի ընտրվում, ապա Ազգային ժողովն արձակվում է իրավունքի ուժով:

Այսպիսով, Սահմանադրության 149-րդ հոդվածը հիշատակում է վարչապետի ընտրության գործընթացի կազմակերպմանն առնչվող միայն երկու ժամկետ՝ 1) Ազգային ժողովի խմբակցությունների կողմից վարչապետի թեկնածուներ **առաջադրելու համար** նախատեսված յոթնօրյա ժամկետը և 2) առաջին անգամ վարչապետ չընտրվելու պարագայում վարչապետի **նոր ընտրություն անցկացնելու** համար նախատեսված յոթնօրյա ժամկետը, որի հաշվարկն սկսվում է առաջին փուլի քվեարկությունից հետո:

Այս դրույթներից հետևում է, որ վարչապետի ընտրությունն Ազգային ժողովում տեղի ունեցող գործընթաց է, որն առնվազն ներառում է թեկնածուների առաջադրումը, թեկնածուներին առնչվող որոշակի աշխատանք թեկնածուի ներկայացումը, թեկնածուի ելույթը, թեկնածուին ու նրան ներկայացնողին ուղղված հարցերը, թեկնածուի եզրափակիչ ելույթը և այլն (թեև Սահմանադրության մեջ ուղղակիորեն ամրագրված չէ, այնուամենայնիվ, Ազգային ժողովի լիազորմար նիստում նման քննարկումները անխուսափելի են, որպեսզի չիմաստազրկվեն վարչապետի ընտրության փուլերը):

Եթե այս գործընթացի արդյունքում վարչապետ չի ընտրվում, ապա քվեարկությունից յոթ օր հետո անցկացվում է վարչապետի նոր ընտրություն: Հարկ է նկատել, որ Սահմանադիրն այս դեպքում օգտագործել է, ոչ թե «յոթ օրվա ընթացքում», կամ «յոթերորդ օրը» եզրույթները, այլ օգտագործել է «յոթ օր հետո» եզրույթը, որը ոչ թե տվյալ գործողությունները կատարելու վերջնաժամկետ է, այլ այդ գործողություններին նախապատրաստվելու համար սահմանված ողջամիտ ժամկետ: Այլ կերպ՝ վարչապետի ընտրության գործընթացի ոչ բոլոր փուլերի առնչությամբ են Սահմանադրության վերոհիշյալ դրույթներով սպառիչ ժամկետներ սահմանվել: Մասնավորապես՝ վարչապետի ընտրության միայն առաջին թեկնածուների առաջադրման փուլի համար է վերջնաժամկետ սահմանվել:

սակայն, օրինակ՝ քվեարկության կազմակերպման վերջնաժամկետ Սահմանադրությամբ սահմանված չէ, որը, ի դեպ, ելակետ է վարչապետի ընտրության երկրորդ փուլի անցկացման ժամկետը հաշվարկելու համար:

Համակարգային ամբողջության մեջ սա նշանակում է, որ Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ մասը վարչապետի ընտրության առաջին փուլի համար վերջնաժամկետ չի սահմանել, և քանի որ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչապետի ընտրության երկրորդ փուլի ժամկետի հաշվարկի սկիզբը պայմանավորված է առաջին փուլի ավարտով, ապա պետք է արձանագրել, որ 149-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի իմաստով վարչապետի ընտրության վերջնաժամկետի հարցն այդ դրույթներով լուծված չէ: Սա նշանակում է, որ սահմանադիրն օրենսդրին հայեցողության ավելի լայն շրջանակ է տրամադրել Սահմանադրությամբ չկարգավորված հարցերի լուծման նպատակով օպտիմալ տարբերակներ գտնելու և ամրագրելու համար, ինչն էլ օրենսդիրը իրականացրել է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով:

Օրենքում **սահմանադրական ժամկետների պահպանման երաշխիքների ամրագրումը**, Սահմանադրության այլ պահանջների պահպանման պայմանով, **օրենսդրի հայեցողությունն է:** Դրա դրսևորումներից մեկն է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 50-րդ հոդվածի 2.1-ին մասը, ըստ որի՝ «Կանոնակարգի 140-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում վարչապետի ընտրության հարցը քննարկվում է վարչապետի թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը՝ ժամը 12:00-ին, իրավունքի ուժով գումարվող Ազգային ժողովի հատուկ նիստում»:

Իրավունքի ուժով խորհրդարանի արձակման ինստիտուտը նորույթ է Հայաստանի Հանրապետությունում: Ինչպես արդեն նշվեց՝ Սահմանադրությունը նախատեսում է իրավունքի ուժով խորհրդարանի արձակման հետևյալ դեպքերը. երբ Ազգային ժողովն ի վիճակի չէ ընտրել վարչապետ (Սահմանադրության արդեն վկայակոչված 149-րդ հոդվածի ուժով) կամ երբ Ազգային ժողովը հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին (Սահմանադրության 151-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի ուժով):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված բուլտր դեպքերում էլ խոսքն Ազգային ժողովի բնականոն գործունեության շրջանակներում նրա (Սահմանադրությամբ սահմանված) լիազորությունների չիրականացման մասին է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ի դեմս Ազգային ժողովի գործ ունենք անմիջական ժողովրդավարական լեգիտիմացիա ունեցող, սահմանադրական մարմինների համակարգում առանցքային դերակատարություն ունեցող ժողովրդի ներկայացուցչական բարձրագույն մարմնի հետ, Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով՝ իրավունքի ուժով Ազգային ժողովի արձակման հարցը կարող է առաջ գալ միայն այն պարագայում, եթե մինչ այդ ապահովված են եղել Ազգային ժողովի բնականոն գործունեության հիմնական երաշխիքները:

Այս առումով անհրաժեշտ են այնպիսի օրենսդրական կառուցակարգեր, որոնք ունակ կլինեն ապահովել Ազգային ժողովի կայուն աշխատանքը, թույլ չեն տա ժողովրդի կողմից անմիջականորեն ձևավորված Ազգային ժողովն իրավունքի ուժով արձակել այն դեպքերում, երբ պատգամավորներն օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չեն ունեցել դրսևորելու իրենց կամքը:

Այդպիսի երաշխիքների ամրագրմանը և ապահովմանն են կոչված Օրենքի վիճարկվող դրույթները:

Մասնավորապես, Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Օրենքի 50-րդ հոդվածում

6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Եթե Կանոնակարգի 51-րդ հոդվածով սահմանված կարգով նիստի իրավազորությունը

1) ապահովվում է, ապա հարցի քննարկումն ավարտվելուց հետո նախագահողը հայտարարում է հատուկ նիստն ավարտված.

2) սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված հարցի քննարկման համար չի ապահովվում՝ պայմանավորված արտակարգ իրավիճակներով, ինչպես նաև երբ խոչընդոտվում է պատգամավորների մասնակցությունն Ազգային ժողովի նիստին, այդ թվում՝ սպառնալիքի միջոցով, ապա Ազգային ժողովի նիստը համարվում է ընդհատված, որի վերաբերյալ Ազգային ժողովի նախագահը հանդես է գալիս հայտարարությամբ: Այդ դեպքում նիստը գումարվում է հաջորդ օրը՝ ժամը 10:00-ին: Նիստն ընդհատելու սույն կետով նախատեսված կանոնները կիրառվում են նաև վերսկսված նիստի նկատմամբ.

3) չի ապահովվում, և առկա չէ սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքը, ապա հատուկ նիստը համարվում է չկայացած» (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ Ազգային ժողովի հատուկ նիստը համարվում է ընդհատված երկու նախապայմանների դեպքում, այն է՝ 1) առկա է արտակարգ իրավիճակ, և (կամ) որևէ այլ խոչընդոտ (այդ թվում՝ սպառնալիք), 2) նշված հանգամանքի առկայությունն ուղղակիորեն անհնարին է դարձնում պատգամավորների մասնակցությունն Ազգային ժողովի հիշյալ նիստին: Այս նախապայմանների առկայության դեպքում վարչապետի ընտրության նպատակով գումարված հատուկ նիստն ընդհատվում է և իրավունքի ուժով գումարվում է հաջորդ օրը՝ ժամը 10:00-ին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման երաշխիքների առկայությունն անհրաժեշտ է խորհրդարանի բնականոն գործունեության ապահովման համար (տվյալ դեպքում՝ պատգամավորների ազատ կամաարտահայտության դրսևորման և վարչապետի ընտրության ընթացակարգի պատշաճ կազմակերպման համար): Եթե պատգամավորներն իրենցից անկախ (օբյեկտիվ) պատճառներով, այլ ոչ թե իրենց կամքով, չեն կարողանում իրականացնել իրենց պարտադիր լիազորությունները, և եթե դրա հետևանքով չի ապահովվում Ազգային ժողովի նիստի իրավագորությունը, ապա խոսք չի կարող լինել իրավունքի ուժով Ազգային ժողովի արձակման մասին:

Իրավունքի ուժով Ազգային ժողովի արձակումն ինքնանպատակ չէ և չի կարող մեխանիկական բնույթ կրել. այն հիմնվում է լեգիտիմ նախադրյալների վրա, որոնք պետք է կենսագործվեն բացառապես այն ժամանակ, երբ **Ազգային ժողովն օբյեկտիվորեն ի վիճակի չէ կատարելու իր առանցքային սահմանադրական լիազորությունները**, տվյալ դեպքում՝ ընտրելու վարչապետ, **ընդ որում՝ եթե նրա բնականոն գործունեությունն օրենսդրորեն և գործնականում երաշխավորված է:**

Հակառակ դեպքում՝ Ազգային ժողովի լիազորությունների իրականացման համար արհեստական խոչընդոտներ ստեղծելու միջոցով հնարավոր է հասնել իրավունքի ուժով Ազգային ժողովի արձակմանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովման բոլոր երաշխիքների ապահովման դեպքում միայն կարելի է խոսել Ազգային ժողովի

կողմից Սահմանադրությամբ սահմանված ժամկետների խախտման և դրանով՝ Սահմանադրությամբ սահմանված դեպքերում նաև Ազգային ժողովի արձակման հիմքերի ի հայտ գալու մասին:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ դիմողի փաստարկները՝ Սահմանադրությամբ սահմանված ժամկետների խախտման կասկածի առնչությամբ փարատվում են, քանի որ վիճարկվող դրույթների կանոնակարգումներն ուղղված են հենց այդ ժամկետներից հետո Ազգային ժողովում բովանդակային գործընթացի երաշխավորմանը, այն է՝ վարչապետի ընտրության պատշաճ կազմակերպմանը, և այդ լեգիտիմ նպատակով Սահմանադրությամբ սահմանված վերջնաժամկետների վրա հասնելու հետաձգմանը: Դրանով փոփոխվում է նաև վերջնաժամկետների հաշվարկման ելակետը. եթե Ազգային ժողովի հատուկ նիստը համարվում է ընդհատված, ապա Սահմանադրությամբ ամրագրված ժամկետներն իրավաբանորեն պահպանվում են: Իսկ երբ Ազգային ժողովի նիստը համարվում է չկայացած, ժամկետների հոսելու և ավարտվելու խնդիրը վերանում է, քանի որ փաստվում է, որ վարչապետի ընտրության համար գումարված հատուկ նիստ չի էլ եղել:

Միննույն ժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ, թեև վարչապետի ընտրության հարցի առնչությամբ օրենսդիրը, հաշվի առնելով նաև օբյեկտիվ պատճառները, կարող է տարբեր կանոնակարգումներ ամրագրել, սակայն այդ կանոնակարգումները չեն կարող անսպառ ձգձգել վարչապետի ընտրությունը: Այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է վարչապետի առաջին ընտրության և վարչապետի նոր ընտրության գործընթացների ողջամիտ առավելագույն վերջնաժամկետներ սահմանել: Եթե վարչապետի ընտրության հարցի քննարկման համար Ազգային ժողովի նիստի իրավագործությունը չի ապահովվում նույնիսկ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված դեպքերում՝ արտակարգ իրավիճակներում, Ազգային ժողովի նիստին պատգամավորների մասնակցությունը խոչընդոտելու միջոցով, ապա այդ իրավիճակը չի կարող անորոշ ժամկետով պահպանվել, քանի որ դա կնշանակի անորոշ ժամկետով չունենալ վարչապետ, որն էլ իր հերթին կհանգեցնի սահմանադրական մի շարք այլ պահանջների չկատարման:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ վիճարկվող դրույթները սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չեն:

4.2. Սահմանադրական դատարանն իր՝ 02.12.2014թ. ՄԴՈ-1176 և մի շարք այլ որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1322) իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Տվյալ դեպքում, դիմողի պնդմամբ՝ Օրենքի վիճարկվող դրույթներում օգտագործվում է «արտակարգ իրավիճակներ» եզրույթը, սակայն չի հստակեցվում, թե դրա գնահատման համար ուր իրավական ակտով պետք է առաջնորդվել: Նշվածը հստակորեն չամրագրելով՝ առերևույթ կարող է առաջանալ «արտակարգ իրավիճակներ» եզրույթի գնահատման չափանիշների հնարավոր անորոշություն: Ըստ դիմողի՝ նման իրավակարգավորումների բացակայությունը կարող է ռիսկեր պարունակել Սահմանադրության 149-րդ հոդվածի դրույթների լիարժեք իրացման տեսանկյունից:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ պարտադիր չէ, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը «արտակարգ իրավիճակների» բնորոշում տա՝ հղում անելով համապատասխան օրենքի դրույթներին: Եթե կա որևէ օրենք, որում այդ բնորոշումն արդեն առկա է, ապա իրավական որոշակիության տեսանկյունից վիճարկման առարկա կարող էր դառնալ հենց այդ բնորոշման որոշակիությունը, բայց ոչ այն հանգամանքը, որ «Ազգային ժողովի կանոնակարգում» առկա չէ հղում այդ օրենքին:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածում տրված է *արտակարգ իրավիճակի հասկացությունը, ըստ որի՝ արտակարգ իրավիճակը որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական (բնապահպանական) աղետի, համաճարակի, անասնահամաճարակի (էպիզոոտիա), բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ*



հիվանդության (էպիֆիտոտիա), զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակն է, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

Մինևույն ժամանակ, դիմողը չի վկայակոչել որևէ հակասական իրավակիրառ պրակտիկա, որը ձևավորված լիներ հիշյալ օրենքում «արտակարգ իրավիճակներ» հասկացության կիրառման առնչությամբ և հանգեցնէր այդ հասկացության տարակերպ ընկալման:

Սահմանադրական դատարանը կարևոր է համարում շեշտել, որ վիճարկվող դրույթի շրջանակներում «արտակարգ իրավիճակներ» կարող են հանդիսանալ բոլոր այն անկանխատեսելի կամ անխուսափելի երևույթները, որոնք ուղղակիորեն խոչընդոտում են պատգամավորների մասնակցությանն Ազգային ժողովի հատուկ նիստին: Այսինքն, վիճարկվող դրույթների իմաստով ոչ թե ցանկացած արտակարգ իրավիճակի մասին կարող է լինել խոսքը, այլ միայն այնպիսի արտակարգ իրավիճակների, որոնք որպես պատճառ ինքնուրույնաբար առաջացնում են հետևանք՝ խոչընդոտում են պատգամավորների մասնակցությանը համապատասխան նիստին:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող դրույթներում օգտագործված «արտակարգ իրավիճակներ» եզրույթի գնահատման չափորոշիչներ չսահմանելը չի խախտում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը և չի պարունակում Սահմանադրության 149-րդ հոդվածի պահանջների լիարժեք իրացման որևէ ռիսկ:

**4.3.** «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե Կանոնակարգի 51-րդ հոդվածով սահմանված կարգով նիստի իրավագործությունը չի ապահովվում, և առկա չէ Ազգային ժողովի նիստն ընդհատված հայտարարելու դեպքը, ապա հատուկ նիստը համարվում է չկայացած:

Ըստ դիմողի՝ նշված կարգավորումն առերևույթ Սահմանադրության 149-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի տառացի և համակարգային վերլուծությունից բխող պահանջին անհամապատասխանության ռիսկեր է պարունակում: Մասնավորապես, առկա է

օրենսդրական բաց, քանի որ Օրենքով չեն նախատեսվում հատուկ նիստի չկայացած համարվելուց հետո հարցը սահմանադրաիրավական պահանջին համահունչ քվեարկությամբ ավարտելը երաշխավորելու բավարար կառուցակարգեր:

Սահմանադրական դատարանն իր՝ 08.04.2014թ. ՍԴՈ-1143 որոշմամբ նշել է, որ օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սոսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ **իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը:**

Տվյալ դեպքում, Սահմանադրության 102-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի նիստն իրավագոր է, **եթե նիստի սկզբում գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:**

«Ազգային ժողովի կանոնակարգ» գործող ՀՀ սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ազգային ժողովի նիստն իրավագոր է, եթե նիստի սկզբում սահմանված կարգով գրանցվել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պատգամավորը գրանցվում է անձամբ: Գրանցումը համագոր է քվեարկությանը և գրանցմանը պատգամավորի մասնակցությունը հաշվառվում է քվեարկությունների թվում:

Նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե Կանոնակարգի 51-րդ հոդվածով սահմանված կարգով նիստի իրավագորությունը չի ապահովվում, ապա հատուկ նիստը **համարվում է չկայացած:**

Ելնելով Ազգային ժողովի նիստը չկայացած համարելու էությունից՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Ազգային ժողովի նիստի իրավագորությունը չապահովելու հետևանքով նիստը **չկայացած համարելը ոչ թե վիճարկվող դրույթներով նախատեսված նորույթ է, այլ ամրագրված է նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» գործող ՀՀ սահմանադրական օրենքում:**

Ինչ վերաբերում է վարչապետի ընտրության նպատակով գումարված հատուկ նիստը չկայացած համարելու իրավական հետևանքներին, ապա դրանք բացահայտելու նպատակով Սահ-

մանադրական դատարանը, նախ՝ անհրաժեշտ է համարում վերլուծել Սահմանադրության 149-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները:

Սահմանադրության 149-րդ հոդվածի մեկնաբանությունից, մասնավորապես, հետևում է, որ վարչապետի պաշտոնը թափուր մնալուց հետո հնարավոր են հետևյալ իրավիճակները.

1) խմբակցությունները յոթնօրյա ժամկետում չեն առաջադրում վարչապետի թեկնածու,

2) թեկնածու (կամ թեկնածուներ) առաջադրվում է (են), սակայն վարչապետի ընտրության համար գումարվող հատուկ նիստի սկզբում չի գրանցվում պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին,

3) թեկնածու (կամ թեկնածուներ) առաջադրվում է (են) և հատուկ նիստի սկզբում գրանցվում է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին, սակայն թեկնածուն չի ստանում ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

Այսպիսով, Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված՝ վարչապետի նոր ընտրության համար հիմք հանդիսացող իրավաբանական փաստը, այն է՝ վարչապետ չընտրվելու հանգամանքը, ի հայտ է գալիս ոչ միայն այն դեպքում, երբ հատուկ նիստն իրավագոր է եղել, սակայն թեկնածուն չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ, այլ նաև այն դեպքերում, երբ խմբակցությունները յոթնօրյա ժամկետում չեն առաջադրել վարչապետի թեկնածու կամ **երբ նիստի իրավագորությունը չի ապահովվել, և այն համարվել է չկայացած** (քանի որ այդ դեպքում օբյեկտիվորեն չի խոչընդոտվում պատգամավորի կողմից իր կամքն արտահայտելու հնարավորությունը):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ երեք հնարավոր դեպքերից ցանկացած մեկը հանգեցնում է այն իրավիճակին, երբ վարչապետ չի ընտրվում, ինչն էլ, իր հերթին, Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչապետի ընտրության երկրորդ փուլի անցկացման համար անհրաժեշտ իրավաբանական նախադրյալն է, ուստի այդ երեք դեպքերից (այդ թվում նաև՝ նիստը չկայացած համարվելու) որևէ մեկի ի հայտ գալն ընդհանուր առմամբ **չի կասեցնում Սահմանադրության 149-րդ հոդվածով սահմանված ժամկետները, այլ, հակառակը, ուղղակիորեն հիմք է դրանց կիրառման համար:**

Վերոգրյալ վերլուծությունների համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա չէ իրավական բաց, **քանի որ հատուկ նիստը չկայացած համարվելու վերաբերյալ վիճարկվող դրույթը որևէ կերպ չի խաթարում վարչապետի նոր ընտրությունը**, և ակնհայտ է, որ նախատեսված են հատուկ նիստը չկայացած համարվելուց հետո հարցը սահմանադրական պահանջներին համահունչ քվեարկությամբ ավարտելը երաշխավորող կառուցակարգեր:

**4.4.** Սահմանադրական դատարանը, անդրադառնալով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքն ընդունելու՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածության հարցին, արձանագրում է, որ, Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, Ազգային ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության հիշյալ դրույթն անհրաժեշտ է դիտարկել Սահմանադրության մյուս վերաբերելի դրույթների համակարգային տրամաբանության շրջանակներում:

Համաձայն Սահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրական դատարանն իրականացնում է սահմանադրական արդարադատություն՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս Սահմանադրական դատարանն անկախ է **և ենթարկվում է միայն Սահմանադրությանը** (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի): Վերջին կանոնը հատուկ կանոն է Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համեմատ, որից ածանցվում է Սահմանադրական դատարանի կաշկանդվածությունը բացառապես Սահմանադրությամբ, այլ ոչ թե նաև օրենքով, ինչպես մյուս դատարանների դեպքում է:

Սահմանադրական դատարանի գործառույթը հատուկ՝ սահմանադրական արդարադատության միջոցով Սահմանադրության գերակայությունն ապահովելն է, որի համար հենց Սահմանադրությամբ է սահմանվում Սահմանադրական դատարանի լիազորությունների սպառիչ ցանկը, ինչը բխում է Սահմանադրության 167-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջից: Իսկ համաձայն Սահմանադրա-

կան դատարանի հիշյալ գործառույթից ածանցվող վերաբերելի լիազորության՝ Սահմանադրական դատարանը որոշում է (այդ թվում) օրենքների համապատասխանությունը Սահմանադրությանը (Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետ):

Դա նշանակում է, որ օրենքների ընդունման գործընթացում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի միայն այն խախտումները կարող են դառնալ Սահմանադրական դատարանում վեճի առարկա, որոնց արդյունքում խախտվել են Սահմանադրության վերաբերելի դրույթները: Այսպես եթե «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի խախտման արդյունքում խախտվել է Սահմանադրությամբ ամրագրված քվեարկության կարգը, որն ազդել է կամ կարող էր ազդել Սահմանադրությամբ պահանջվող ձայներով օրենք կամ որոշում ընդունելու վրա, ապա այդպիսի օրենքը կամ որոշումը կարող են ըստ ընդունման կարգի դառնալ Սահմանադրական դատարանում քննության առարկա:

Չնայած այն հանգամանքին, որ «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-58-Ն օրենքն այլևս չի գործում, և նոր՝ համանուն սահմանադրական օրենքը նման հատուկ կարգավորում չի պարունակում, այդուհանդերձ, հարկ է նշել, որ ՀՕ-58-Ն օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ի շարս այլ չափանիշների, վիճարկվող իրավական ակտի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը հաշվի էր առնում նաև իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու՝ **Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը**, իսկ նույն հոդվածի նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց **լիազորությունների թույլատրելի սահմանները** (ընդգծումը՝ Սահմանադրական դատարանի):

Թեև հիշյալ դրույթը չի վերարտադրվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում, քանի որ այն սահմանադրականության գնահատման մասնավոր դեպքերի թվարկում էր, և օրենսդիրն այդ հիմքով այլևս անհրաժեշտություն չի տեսել ոչ սպառիչ եղանակով թվարկելու առանձին մասնավոր դեպքեր, ակնհայտ է, որ նաև ներկայում, ի թիվս այլնի, որևէ օրենքի

կամ Ազգային ժողովի որոշման ընդունման կամ գործողության մեջ դնելու՝ **միայն Սահմանադրությամբ նախատեսված կարգն է** սահմանադրականության գնահատման մասշտաբը, ինչպես նաև **Ազգային ժողովի** (Սահմանադրությամբ սպառիչ ամրագրված) **լիազորությունների թույլատրելի սահմանները**: Ուստի ակնհայտ է նաև, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէ գնահատել սահմանադրական կամ սովորական օրենքների և իր ընդդատությանը վերապահված այլ իրավական ակտերի ցանկացած խախտումներ կամ դրանց համապատասխանությունը ոչ թե Սահմանադրությանը, այլ դրանց նկատմամբ գերակայող այլ իրավական ակտերին: Այդպիսի վերահսկողությունը հանրային իշխանության այլ մարմինների, հատկապես՝ այլ դատարանների իրավասության մեջ է: Հակառակ դեպքում՝ Սահմանադրական դատարանը կարող է ծանրաբեռնվել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի ցանկացած խախտումով կամ, օրինակ՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ այլ նորմատիվ իրավական ակտերի՝ իրենց հանդեպ գերակայող նորմատիվ իրավական ակտին համապատասխանությունը որոշելու վերաբերյալ վեճերով, որոնք դուրս են Սահմանադրական դատարանի սահմանադրական գործառույթի շրջանակներից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Ազգային ժողովի՝ իր կանոնակարգի համաձայն գործելու սահմանադրական պահանջի խախտումները կարող են Սահմանադրական դատարանում վեճի առարկա դառնալ միայն այդ խախտումների արդյունքում Սահմանադրության որևէ պահանջ խախտվելու դեպքերում:

Օրենքի (վիճարկվող այլ իրավական ակտի) սահմանադրականության գնահատման համար այդ օրենքը (իրավական ակտը) ընդունելու և գործողության մեջ դնելու՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածության նշանակության խնդրին Սահմանադրական դատարանն իր որոշումներում ևս անդրադարձել է: Այսպես՝ 07.07.2015թ. ՄԴՈ-1224 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշված խնդրի վերաբերյալ հետևյալ դիրքորոշումն է արտահայտել. «...օրենքների ընդունման խորհրդարանական կամ ինչպես հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջի տեսանկյունից՝ արտախորհրդարանական ընթացակարգերի ցանկացած խախտում անթույլատրելի է օրենսդրական գործընթացի

շրջանակներում, անհամատեղելի է օրենսդրական գործունեության կանոնների հետ, սակայն այդ խախտումներից ոչ բոլորն են, որ սահմանադրականության տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունեն: **Վերջիններիս թվին են դասվում միայն այն կանոնների խախտումները, որոնք ուղղակիորեն հիմնված են Սահմանադրության պահանջների վրա, օրենքի ընդունման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար որոշիչ նշանակություն ունեն և/կամ այնքան էական են, որ առանց այդ կանոնների պահպանման անհնար է արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը, հետևաբար՝ նաև օրենսդրի կողմից ներկայացվող ՀՀ ժողովրդի կամքը»:**

Սահմանադրությամբ իրենց ամրագրումն են ստացել օրենսդրական գործունեության (Ազգային ժողովում օրենքների (որոշումների) ընդունման ընթացակարգին առնչվող) միայն հիմնական՝ առանցքային պահանջները: Դրանք առնչակցվում են, մասնավորապես, Ազգային ժողովի նիստերի հրապարակայնության (Սահմանադրության 101-րդ հոդված), իրավագրության (Սահմանադրության 102-րդ հոդված), օրենքների, այդ թվում՝ սահմանադրական օրենքների ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակի, քվեարկությունների մասնակցող պատգամավորների անհրաժեշտ նվազագույն քանակի (Սահմանադրության 103-րդ հոդված), օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների (Սահմանադրության 109-րդ հոդված), ինչպես նաև Հանրապետության նախագահի կողմից օրենքը ստորագրելու և հրապարակելու (Սահմանադրության 129-րդ հոդված) հետ կապված հարցերին, և իրենց էության մեջ կոչված են երաշխավորելու Ազգային ժողովի գործունեության լեգիտիմությունը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ընդունման ընթացակարգի, ներառյալ քվեարկության արդյունքների վերաբերյալ Սահմանադրական դատարան ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև Ազգային ժողովի պաշտոնական կայքում տեղադրված 2018 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած երեք նիստերի տեսանյութերի, այդ նիստերի սղագրությունների և արձանագրությունների ուսումնասիրության և դրանց համադրման միջոցով հասանելի են դառնում

սույն գործով քննության առարկա օրենքի ընդունման գործընթացին վերաբերող և օրենքն ընդունելու՝ Սահմանադրությամբ նախատեսված ընթացակարգերը պահպանված լինելու հիմքով այդ օրենքի սահմանադրականության հարցը որոշելու համար անհրաժեշտ և վերաբերելի բոլոր տեղեկությունները: Ի դեպ, դա վկայում է նաև այն մասին, որ Ազգային ժողովի նիստերի հրապարակայնության վերաբերյալ սահմանադրական պահանջը խախտված չի եղել:

Ըստ այդմ՝ սույն որոշման նախորդ պարբերության մեջ հիշատակված տեղեկություններից և այլ փաստական նյութերից հետևում է, որ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես են եկել այդ իրավունքով օժտված սուբյեկտները, ապահովվել է նիստի հրապարակայնությունը (այն եղել է բաց, դրան հնարավորություն են ունեցել ներկա գտնվել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձինք), առկա է եղել Օրենքի ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակը և քվեարկությանը մասնակցած պատգամավորների անհրաժեշտ նվազագույն քանակը:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա չեն վիճարկվող Օրենքն ընդունելու՝ Սահմանադրության պահանջների վրա հիմնված այնպիսի խախտումներ, որոնք նշանակություն ունեն կամ կարող են ունենալ Օրենքի ընդունման սահմանադրականության հարցում որոշում ընդունելու համար, և որոնք հանգեցրել են այնպիսի իրավիճակի, երբ անհնար է արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը:

Հետևաբար, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը նաև դրա ընդունման՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածության սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 73-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:



1. Ազգային ժողովի կողմից ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված 50-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

19 ապրիլի 2019 թվականի  
ՍԴՈ-1454



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

**Հ Ա Տ ՈՒ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք**

**«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԳԱՅԻՆ  
ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
1-ԻՆ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ  
2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 19.04.2019թ. ՄԴՈ-1454  
ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 19.04.2019թ. ՄԴՈ-1454 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումներից տարբերվող հետևյալ մոտեցումները.

1. Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել «.... Հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասով (...) սահմանված դեպքերում»: Միաժամանակ, Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահին ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում

կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով»:

Սահմանադրության հիշյալ իրավակարգավորումներն իրենց ընթացակարգային բովանդակությամբ որոշակիացվել են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 73-րդ հոդվածում, որը, նշված սահմանադրական դրույթներին և դրանց հիմքում ընկած սահմանադրական վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է Հանրապետության նախագահի լիազորությունների շրջանակը Ազգային ժողովի ընդունած օրենքը չստորագրելու դեպքում՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելիս:

Հիմք ընդունելով Սահմանադրության վերոհիշյալ նորմատիվ պահանջները՝ օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորման հիման վրա հստակեցրել է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակը՝ սահմանելով հետևյալը. Ազգային ժողովի ընդունած օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով Սահմանադրական դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

«1) Ազգային ժողովի ընդունած օրենքը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին.

2) Ազգային ժողովի ընդունած օրենքն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին»:

Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի հիշատակված իրավակարգավորումների պահանջներից ուղղակիորեն բխում է այն իրավապայմանը, որ Սահմանադրական դատարանը պետք է քննության առարկա դիտարկեր Ազգային ժողովի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 2-ին ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքն ամբողջությամբ և ոչ թե այդ օրենքի միայն 2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթները:

Ուստի, կարծում եմ, որ քննության առարկա գործի շրջանակում Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասը պետք է վերաբերվեր Ազգային ժողովի կողմից 2018 թվականի հոկտեմբերի

2-ին ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը:

2. Վիճելի իրավակարգավորման սահմանադրականության հարցն անհրաժեշտ է քննարկել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչ իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից: Սահմանադրական դատարանն իրավացիորեն նշել է. «... պարտադիր չէ, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը «արտակարգ իրավիճակների» բնորոշում տա՝ հղում անելով համապատասխան օրենքի դրույթներին: Եթե կա որևէ օրենք, որում այդ բնորոշումն արդեն առկա է, ապա իրավական որոշակիության տեսանկյունից վիճարկման առարկա կարող էր դառնալ հենց այդ բնորոշման որոշակիությունը, բայց ոչ այն հանգամանքը, որ «Ազգային ժողովի կանոնակարգում» առկա չէ հղում այդ օրենքին»:

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ վիճելի իրավակարգավորումների մեջ օգտագործվող «խոչընդոտվում է պատգամավորի մասնակցությունը Ազգային ժողովի նիստին», «սպառնալիքի միջոցով խոչընդոտվում է պատգամավորի մասնակցությունը Ազգային ժողովի նիստին», «խոչընդոտվում է Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը» արտահայտությունների պահանջներն իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության:

Ակնհայտ է, որ տվյալ իրավակարգավորումների համատեքստում Ազգային ժողովի բնականոն գործունեությանը ոչ իրավաչափ գործողությամբ խոչընդոտելու կամ սահմանափակելու գնահատման ենթակա հանգամանքները բազմազան են, և դրանց կամայական մեկնաբանությունը գործնականում կարող է ստեղծել միևնույն իրավիճակներում իրավունքի սուբյեկտների նկատմամբ տարբեր վերաբերմունքի դրսևորման վտանգ:

Միաժամանակ, վիճարկվող դրույթներում օգտագործված «խոչընդոտվում է պատգամավորի մասնակցությունը Ազգային ժողովի նիստին», «սպառնալիքի միջոցով խոչընդոտել պատգա-

մավորի մասնակցությունը Ազգային ժողովի նիստին», «խոչընդոտվում է Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը» եզրույթների գնահատման իրավական չափորոշիչներ չսահմանելը, այդ թվում նաև դրանց սահմանադրաիրավական բովանդակության բացակայությունը, ինքնին խնդրահարույց են դառնում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի, ինչպես նաև Սահմանադրության 102-րդ հոդվածով ամրագրված Ազգային ժողովի իրավագործության ապահովման և 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությունով սահմանված՝ սահմանադրական օրենքի իրավակարգավորմանը ներկայացվող պահանջների պահպանման տեսանկյունից:

Հաշվի առնելով Եվրոպական դատարանի այն իրավական դիրքորոշումը, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը» (Case of Hilda Hafsteinsdottir v. Iceland, application no.40905/98, 08.06.2004), կարծում եմ, որ վիճարկվող իրավակարգավորումների տրամաբանության ներքո այնպիսի հանգամանքների վկայակոչումը, որ Ազգային ժողովի նիստի իրավագործություն չապահովելը պայմանավորված արտակարգ իրավիճակներով կամ այդ նիստին պատգամավորի մասնակցությունը խոչընդոտելու, այդ թվում՝ սպառնալիքի միջոցով, ինչպես նաև գնահատելով դրանք այդ իրավագործության իրավական հիմքի համադրման տրամաբանության շրջանակում, բավականին խնդրահարույց է նաև իրական հակասության առկայությունը պարզելու և դրա լուծման իրավական հնարավորությունը գնահատելու առումներով:

Ավելին, վիճահարույց են նաև այն հարցերը, թե ինչպես կարող է Ազգային ժողովի նախագահի կողմից գնահատվել նիստի իրավագործությունը չապահովելու փաստի պատճառները, երբ տվյալ նիստին խոչընդոտվում է պատգամավորների մասնակցությունը, այդ թվում՝ սպառնալիքի միջոցով խոչընդոտման հանգամանքով, կամ, Ազգային ժողովի նախագահին ինչպիսի ընթացակարգերով կարող է փոխանցվել այդ խոչընդոտների և դրանց հաղթահարման մասին տեղեկատվությունը և այլն:

Իսկ որպես ընդհանրական մոտեցում, անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն, որ քննության առարկա օրենսդրական կարգավորումների շրջանակում նման իրավիճակային լուծումները չեն բխում

նան պետության պոզիտիվ պարտավորության բովանդակությունից Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանության շրջանակում երաշխավորելու սահմանադրական մարմինների, այդ թվում նաև՝ Ազգային ժողովի բնականոն գործունեությունը՝ հասարակական կարգի ու անվտանգության, ինչպես նաև սահմանադրական կարգի պաշտպանության տեսանկյունից: Բացի դրանից, նման լուծումները չեն բխում նաև հանրային կարևոր նշանակություն ունեցող հասարակական հարաբերությունների համակարգային կարգավորման տրամաբանությունից:

Այս հիմնավորումներով պայմանավորված՝ կարծում եմ, որ վիճարկվող դրույթներում օգտագործված «խոչընդոտվում է պատգամավորի մասնակցությունը Ազգային ժողովի նիստին», «սպառնալիքի միջոցով խոչընդոտվում է պատգամավորի մասնակցությունը Ազգային ժողովի նիստին», «խոչընդոտվում է Ազգային ժողովի նիստի բնականոն ընթացքը» եզրույթների գնահատման չափորոշիչները օրենսդրական կարգավորման մակարդակում չսահմանելը ինքնին խնդրահարույց է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի իրացման, հետևաբար Սահմանադրության 149-րդ հոդվածի պահանջների լիարժեք իրացման ռիսկերի առաջացման տեսանկյունից:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն, Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր՝ «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը մասամբ Սահմանադրության 1-ին հոդվածին, 6-րդ հոդվածի 1-ին մասին, 102-րդ հոդվածին, 103-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող ճանաչելու համար:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՍԱԿԻ ԸՆԴ ՍԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1172-ԸՆԴ  
ՀՈԴՎԱԾԻ 2-ԸՆԴ ՄԱՍԻ 2-ԸՆԴ ԿԵՏԻ, «ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 10-ԸՆԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ԸՆԴ ԿԵՏԻ, 12-ԸՆԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ  
ՄԱՍԻ 2-ԸՆԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 ապրիլի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում) դիմող «ՍԱԿԻ ԸՆԴ ՍԱՆՍ» փակ բաժնետիրական ընկերության, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՍԱԿԻ ԸՆԴ ՍԱՆՍ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ մտել՝ 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը և ապրանքային նշանի օգտագործումը» վերտառությամբ 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանվում է՝

«2. Գրանցված ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի արգելելու երրորդ անձանց, առանց իր թույլտվության, առևտրային գործունեության ընթացքում օգտագործել ցանկացած նիշ, որը

2) նույնական կամ նման է գրանցված ապրանքային նշանին և օգտագործվում է այնպիսի ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, եթե այդ նշանի օգտագործումն սպառողների մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ գրանցված ապրանքային նշանին զուգորդումը»:

Օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը գործում է 2010 թվականի ապրիլի 29-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ՀՕ-61-Ն) նախատեսված խմբագրությամբ:

«Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի ապրիլի 29-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի մայիսի 22-ին և ուժի մեջ մտել՝ 2010 թվականի հուլիսի 1-ից:



Օրենքի՝ «Ապրանքային նշանի գրանցումը մերժելու հարաբերական հիմքերը» վերտառությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է՝

«1. Որպես ապրանքային նշան՝ գրանցման ենթակա չէ այն նիշը, որը՝

2) նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը (շփոթելու աստիճան նմանությունը)»:

Օրենքի «Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է՝

«1. Գրանցված ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի արգելելու երրորդ անձանց առանց իր թույլտվության առևտրային գործունեության ընթացքում օգտագործել ցանկացած նիշ, որը՝

2) նույնական կամ նման է գրանցված ապրանքային նշանին և օգտագործվում է այնպիսի ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, եթե այդ նիշի օգտագործումը հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ գրանցված ապրանքային նշանին զուգորդումը»:

Գործի քննության առիթը «ՄԱԿԻ ԸՆԴ ՄԱՆՍ» փակ բաժնետիրական ընկերության՝ 2018 թվականի նոյեմբերի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, կողմերի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգիրքը, Օրենքը և մի շարք այլ վերաբերելի իրավական ակտեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Ե Ց 8**.

### 1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ ինչպես Օրենսգրքով, այնպես էլ Օրենքով սահմանված չեն «շփոթություն առաջացնելու վտանգ» հասկացությունը և դրա գնահատման օբյեկտիվ չափորոշիչները: Նշված

հարցը որոշակիորեն կարգավորված է 2010 թվականի նոյեմբերի 18-ի «Ապրանքային նշանների պետական գրանցամատյանի վարման և քաղվածքների տրամադրման, կոլեկտիվ նշանը կամ դրա հայտը համապատասխանաբար անձի ապրանքային նշանի կամ ապրանքային նշանի հայտի և հակառակը փոխակերպելու, ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու, ապրանքային նշանների լիցենզիաները, դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումները լրացնելու, ներկայացնելու և քննարկելու, ապրանքային նշանների գրանցման գործողության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման կարգերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 1538-Ն որոշման N 3-րդ հավելվածի 112-րդ կետով, համաձայն որի «... ապրանքային նշանների որակումը որպես շփոթելու աստիճանի նման, իրականացվում է միջին սպառողի վրա նրանց թողած տպավորության գնահատմամբ հաշվի առնելով սույն կարգի 114-րդ կետի պահանջները»: Այս համատեքստում դիմողը գտնում է, որ գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքը՝ առանց իր թույլտվության երրորդ անձանց արգելելու առևտրային գործունեության ընթացքում օգտագործելու մեկ այլ գրանցված ապրանքային նշան, որը նույնական կամ նման է գրանցված ապրանքային նշանին և օգտագործվում է այնպիսի ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնք նույնական կամ նույնատիպ են այն ապրանքներին և (կամ) ծառայություններին, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, եթե այդ նշանի օգտագործումն սպառողների մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ գրանցված ապրանքային նշանի զուգորդումը, կարող է լինել օրինաչափ, համաչափ և իրավական առումով որոշակի բացառապես այն դեպքում, եթե առնվազն օրենքով սահմանված լինեն այն չափանիշներն ու կառուցակարգերը, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի գնահատել սպառողի մոտ շփոթություն առաջացնելու իրական, այն է՝ օբյեկտիվ չափանիշների կիրառման արդյունքում վեր հանված փաստացի հնարավորությունը:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներ, դիմողը, մասնավորապես, նշում է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն ըստ էության կիրառելի է նաև մտավոր

սեփականության նկատմամբ, իսկ անդամ պետությունները պարտավոր են ոչ միայն ձեռնպահ մնալ անձի սեփականության իրավունքը խախտելուց, այլ նաև ընդունել այնպիսի օրենսդրություն, որը կպաշտպանի անձի սեփականության իրավունքն այլ անձանց ոտնձգություններից:

Վերոշարադրյալի հաշվառմամբ դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումների հետևանքով, Սահմանադրությամբ սահմանված իրավական որոշակիության և հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը բացառապես օրենքով սահմանելու սկզբունքների խախտման արդյունքում խախտվում են արդեն իսկ գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ կամ ապրանքային նշանի գրանցման համար դիմում ներկայացնող անձի՝ Սահմանադրության 59 և 60-րդ հոդվածներով սահմանված հիմնական իրավունքներն ու ազատությունները:

Ելնելով վերոգրյալից, դիմողը խնդրում է Օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը ճանաչել Սահմանադրության 10, 11, 59, 60, 75 և 78-րդ հոդվածներով սահմանված պահանջներին հակասող և անվավեր:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ օրենսդիրը հստակ ամրագրել է սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքներով պայմանավորված՝ ապրանքային նշաններին առնչվող անհրաժեշտ կանոնակարգումների ապահովման իրավական հիմքեր: Պատասխանողի կարծիքով՝ ապրանքային նշանի հիմնական գործառույթն ապրանքային նշանի անհատականացնող և տարբերակիչ գործոնն է, որով սպառողներին հնարավորություն է տրվում նույնականացնել համապատասխան ապրանքը և վերջինիս ծագման աղբյուրը:

Պատասխանողը նշում է, որ «Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև 4-րդ մասի 2-րդ կետը, փոխկապակցության մեջ գտնվելով վերոգրյալ նորմերի հետ, վերաբերում են ապրանքային նշանի գրանցման մերժման երեք հիմքերին, որտեղ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ առաջինը՝ այն նիշը, որը նույնական է ավելի վաղ ապրանքային

նշանին, որը գրանցված է նույն ապրանքների և/կամ ծառայությունների համար, երկրորդը՝ նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և/կամ ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին գուգորդվելը (շփոթելու աստիճանի նմանությունը), և երրորդը՝ եթե ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, որը գրանցվել է նույն կամ նույնատիպ ապրանքների և/կամ ծառայությունների համար, և չերկարաձգման պատճառով այդ գրանցման գործողությունը դադարեցվել է ապրանքային նշանի հայտի ներկայացման թվականին նախորդող երկամյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ավելի վաղ ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությունը, կամ վերջինս չի օգտագործում իր ապրանքային նշանը»:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում պատասխանողը փաստում է, որ օրենսդիրը՝ վիճարկվող դրույթներում ամրագրելով ապրանքային նշանների «շփոթելու աստիճանի նմանություն» արտահայտությունը, ակնհայտորեն ամրագրել է ապրանքային նշանին ներկայացվող հիմնական պահանջը՝ մեկ ապրանքային նշանը մյուսներից տարբերակելու, առանձնացնելու հնարավորությունը, որտեղ ապրանքային նշանն առաջին իսկ հայացքից պետք է օժտված լինի այնպիսի արտաքին հատկանիշներով, որ հնարավոր լինի հստակ տարբերակել այլ ընկերությունների նույնատիպ ապրանքի համար օգտագործվող ապրանքային նշաններից:

Պատասխանողը նշում է, որ դիմողի կողմից մատնանշված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1538-Ն որոշմամբ ոչ թե տրվում է ապրանքային նշանների «շփոթություն առաջացնելու վտանգ» հասկացության սահմանումը, այլ հիշյալ իրավական ակտով սահմանվում և կանոնակարգվում են, մասնավորապես, ապրանքային նշանների որակման կարգը, պատկերային ու ծավալային ապրանքային նշանների տարանջատման ընթացակարգերը, շփոթելու աստիճանի նմանության որոշմամբ պայմանավորված ապրանքների առանձնահատկություններին ներկայացվող ձևաչափը, ապրանքային

նշանների՝ որպես շփոթելու աստիճանի նման որակման վերաբերյալ տպավորության գնահատման կարգը, առանձին գրաֆիկական նմանության որոշման չափանիշները:

Նկատի ունենալով վերոհիշյալ մոտեցումները՝ պատասխանողը գտնում է, որ սույն սահմանադրավական վեճի առարկա հանդիսացող իրավական դրույթները հստակ միտված են պաշտպանելու անձի սեփականության իրավունքը, մասնավորապես՝ բացառելու մտավոր սեփականության իրավունքի համատեքստում ավելի վաղ գրանցված ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքի նկատմամբ հնարավոր ոտնձգությունները և խախտումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը գտնում է՝ Օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում են Սահմանադրության պահանջներին:

### **3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) արդյոք Քաղաքացիական օրենսգրքի, ինչպես նաև «Ապրանքային նշանների մասին» օրենքի վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայի հաշվառմամբ, չեն խախտում ապրանքային նշանի իրավատիրոջ Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված իրավունքները,

2) արդյոք վիճարկվող դրույթները համահունչ են Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքին և արդյոք նախատեսված են իրավունքների իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր,

3) արդյոք վիճարկվող դրույթների կիրառման արդյունքում կարող է խախտվել Սահմանադրության 59-րդ հոդվածով նախատեսված՝ անձի տնտեսական գործունեության ազատությունը, ինչի արդյունքում չի երաշխավորվի տնտեսական մրցակցությունը:

### **4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության 60-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»: Սահմա-

նելով օրենսդրի հայեցողության լայն շրջանակ՝ Սահմանադրության մեջ անդրադարձ չի կատարվել «մտավոր սեփականություն» հասկացության բովանդակությանը:

Մտավոր սեփականությանը վերաբերող իրավակարգավորումներին նվիրված են Օրենսգրքի մի շարք դրույթներ, այդ թվում՝ Օրենսգրքի «Մտավոր սեփականություն» վերտառությամբ 10-րդ գլուխը:

Համաձայն Օրենսգրքի 140-րդ հոդվածի՝ օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում ու կարգով ճանաչվում է քաղաքացու կամ իրավաբանական անձի բացառիկ իրավունքը մտավոր գործունեության օբյեկտիվ արտահայտված արդյունքների և դրանց հավասարեցված իրավաբանական անձի, արտադրանքի, կատարվող աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների անհատականացման միջոցների (մասնավորապես՝ ֆիրմային անվանում, ապրանքային նշան, սպասարկման նշան) նկատմամբ: Ի տարբերություն Օրենսգրքի «Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը» վերտառությամբ 163-րդ հոդվածի, որով սահմանված են մասնավորապես՝ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավագործությունները, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավատիրոջ իրավասությունները նախատեսված են «Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքները» վերտառությամբ 1104-րդ հոդվածում: Ըստ համապատասխան հոդվածի.

«1. Մտավոր գործունեության արդյունքների կամ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների (այսուհետ՝ անհատականացման միջոցներ) նկատմամբ գույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն իր հայեցողությամբ ցանկացած ձևով և եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի:

2. Ուրիշ անձանց կողմից մտավոր սեփականության այն օբյեկտների օգտագործումը, որոնց նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է դրանց իրավատիրոջը, թույլատրվում է միայն վերջինիս համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

3. Մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ բացառիկ իրավունքի տիրապետողն իրավունք ունի լրիվ կամ մասնակիորեն

այլ անձի փոխանցել այդ իրավունքը, նրան թույլատրել օգտագործելու և տնօրինելու այդ օբյեկտը, եթե դա չի հակասում սույն օրենսգրքի և այլ օրենքների կանոններին:

4. Բացառիկ իրավունքների սահմանափակումները՝ ներառյալ մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքն այլ անձանց տրամադրելու միջոցով, այդ իրավունքներն անվավեր ճանաչելն ու դրանց դադարեցնելը (չեղյալ հայտարարելը) թույլատրվում են սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում, սահմաններում ու կարգով, պայմանով, որ դրանք վնաս չպատճառեն մտավոր սեփականության օբյեկտների բնականոն օգտագործմանը և անհիմն չտոնահարեն հեղինակների իրավունքները՝ հաշվի առնելով երրորդ անձանց օրինական շահերը»:

Մտավոր սեփականության պաշտպանությանը նվիրված դրույթը սահմանադիրը նախատեսել է սեփականության իրավունքին նվիրված Սահմանադրության 60-րդ հոդվածում՝ դրանով իսկ ընդգծելով սեփականության իրավունքի և մտավոր սեփականության ինստիտուտների միասեռ լինելու հանգամանքը:

Համաձայն Օրենսգրքի 1100-րդ հոդվածի՝ մտավոր սեփականության օբյեկտների շարքին են դասվում, ի թիվս այլնի, նաև ապրանքային նշանները (սպասարկման նշանները)՝ որպես ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցներ:

Ապրանքային նշանների՝ որպես մտավոր սեփականության օբյեկտների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի «ապրանքային նշանը գրանցելու արդյունքում դիմողի կողմից ձեռք բերված ֆինանսական իրավունքների և շահերի համալիրը (ինչպիսիք են վաճառքի կամ լիցենզիա տրամադրելու իրավունքը) պարունակում է ... կամ կարող է պարունակել նշանակալի ֆինանսական արժեք»: Այդ իսկ պատճառով ապրանքային նշանի գրանցումը հայցելը վերաբերելի է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի գործողության ոլորտին, քանի որ հիմք է հանդիսանում գույքային բնույթի իրավունքների առաջացման համար (**Anheuser-Busch Inc v. Portugal, 2007**):

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև սեփականության իրավունքին նվիրված Սահմանադրության 60-րդ հոդվածի դրույթներն ընդհանուր առմամբ վերա-

բերում են նաև մտավոր սեփականության իրավունքին, այնուամենայնիվ, սեփականության իրավունքին, այդ թվում՝ սեփականության իրավունքի պաշտպանությանը նվիրված ոչ բոլոր դրույթներն են իրենց բնույթով կիրառելի մտավոր սեփականության նկատմամբ: Մասնավորապես, Օրենսգրքի 274-րդ հոդվածով նախատեսված՝ ուրիշի ապօրինի տիրապետումից իր գույքը հետ պահանջելու սեփականատիրոջ իրավունքը կիրառելի չէ ապրանքային նշանների իրավատերերի իրավունքների պաշտպանության համար:

Համաձայն Օրենսգրքի 1110-րդ հոդվածի՝ բացառիկ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ինչպես Օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր եղանակներով, այնպես էլ մտավոր սեփականությանը բնորոշ հատուկ եղանակներով, այդ թվում՝ Օրենքով նախատեսված՝ ապրանքային նշանների իրավատերերի իրավունքների պաշտպանությանն ուղղված եղանակներով:

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը շեշտում է, որ մտավոր սեփականության պաշտպանությանը վերաբերող օրենսդրությունը չպետք է խախտի Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջը, ըստ որի՝ ոչ ոք չի կարող գրկվել սեփականությունից (տվյալ դեպքում՝ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքից), բացառությամբ դատական կարգով օրենքով սահմանված դեպքերի:

**4.2.** Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա), որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 25-ին, 1-ին հոդվածը սահմանում է, որ ապրանքային նշանների նմուշներն արդյունաբերական սեփականության օբյեկտներ են, իսկ արդյունաբերական սեփականությունը հասկացվում է ամենալայն իմաստով և տարածվում է նաև գյուղատնտեսական արտադրության և արդյունահանող արդյունաբերության բնագավառների և արտադրական կամ բնական ծագման արտադրանքների վրա: Կոնվենցիայի 6-րդ bis հոդվածը սահմանում է. «Միության երկրները պարտավորվում են կամ վարչակազմի նախաձեռնությամբ, եթե դա թույլատրվում է տվյալ երկրի օրենսդրությամբ, կամ շահագրգիռ անձի միջնորդությամբ մերժել կամ ճանաչել ան-



վավեր գրանցումը և արգելել ապրանքային նշանի կիրառումը, որն իրենից ներկայացնում է վերարտադրում, իմիտացիա կամ այլ նշանի փոխանցում, որոնք կարող են առաջացնել այլ նշանի հետ խառնում, որը գրանցման երկրի կամ կիրառման երկրի իրավասու մարմնի սահմանմամբ արդեն այդ երկրում հանդիսանում է հանրաճանաչ որպես այն անձի նշան, որն օգտվում է սույն Կոնվենցիայի առավելություններից և օգտագործվում է իդենտիկ կամ նման ապրանքների համար: Այդ դրույթը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ նշանի էական բաղկացուցիչ մասը իրենից ներկայացնում է այնպիսի հանրաճանաչ նշանի վերարտադրում կամ իմիտացիա, որը կարող է դրա հետ առաջացնել շփոթեցում»:

Այսպիսով՝ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի ամրագրման և դրա պաշտպանության իմաստը կայանում է նրանում, որ սպառողներին հնարավորություն է տրվում տարբերակել շուկայում առկա ապրանքները՝ թույլ չտալով երրորդ անձանց ապօրինի օգտագործել գրանցված ապրանքային նշանը, ինչի արդյունքում պաշտպանվում են ապրանքային նշանի իրավատիրոջ իրավունքներն ու շահերը: Այդ պատճառով օրենսդիրն արգելում է ոչ միայն արդեն իսկ գրանցված ապրանքային նշանի ապօրինի օգտագործման հնարավորությունը, այլ նաև այնպիսի ապրանքային նշանների օգտագործումը, որոնք նմանության պատճառով կարող են շփոթության մեջ գցել սպառողներին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի վիճարկվող 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը գրեթե նույնությամբ վերարտադրում է Օրենսգրքի վիճարկվող 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթը: Միակ տարբերությունն այն է, որ Օրենսգրքում կիրառվում է «սպառողների մոտ շփոթություն առաջացնելու վտանգ» եզրույթը, մինչդեռ Օրենքն օգտագործում է «հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ» եզրույթը, որոնք սույն գործի շրջանակներում ունեն միևնույն բովանդակային ծանրաբեռնվածությունը:

Վերոհիշյալ տրամաբանությունն է դրված նաև Օրենքի վիճարկվող 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքում, համաձայն որի՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական

կամ նույնատիպ լինելը հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը (շփոթելու աստիճան նմանությունը):

Սահմանելով ապրանքային նշանի իրավատիրոջ վերոնշյալ բացառիկ իրավունքը՝ օրենսդիրը, հաշվի առնելով շփոթության աստիճանի նմանություն ունեցող ապրանքային նշանների իրավատերերի միջև ի հայտ եկող հնարավոր վեճերի լուծման անհրաժեշտությունը, սահմանել է ավելի վաղ ապրանքային նշանի հասկացությունը՝ պաշտպանելով ապրանքային նշանի գրանցման համար հայտն առավել վաղ ներկայացրած հայտատուների շահերը:

Համաձայն Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «... ավելի վաղ ապրանքային նշաններն իրենցից ներկայացնում են՝

1) ապրանքային նշաններ, որոնց հայտի ներկայացման թվականը, կամ եթե սույն օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկվել է առաջնություն՝ այդ առաջնության թվականը նախորդում է քննարկվող հայտի ներկայացման թվականին, կամ եթե սույն օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկվել է առաջնություն՝ այդ առաջնության թվականին, և հանդիսանում են՝

ա. Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող ապրանքային նշաններ,

բ. միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող ապրանքային նշաններ.

2) սույն մասի 1-ին կետում նշված ապրանքային նշանների հայտեր, այդ ապրանքային նշանների հետագա գրանցման (իրավական պահպանություն տրամադրելու) պայմանով.

3) ապրանքային նշաններ, որոնք սույն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ են ճանաչված հայտարկված ապրանքային նշանի հայտի ներկայացման կամ սույն օրենքի 42-րդ հոդվածի համաձայն խնդրարկված առաջնության թվականի դրությամբ»:

**4.3.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև վիճարկվող դրույթների վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկային:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն իր՝ 18.07.2014թ. թիվ ՎԴ/4241/05/11 վարչական գործով որոշմամբ արձանագրել է հե-

տևյալը. «Սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով, իսկ մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, բացի վերոգրյալ երաշխիքներից, իրականացվում է նաև օրենքի ուժով»:

Այդ որոշմամբ, հղում անելով իր՝ 12.12.2007թ. թիվ 3-1763(ՏԴ) քաղաքացիական գործով որոշմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապրանքային նշանների նմանության խնդրին և արձանագրել հետևյալը. «Նշանների նմանությունը գնահատելիս հարկավոր է դրանք համեմատել այն տեսքով, որով դրանք գրանցվել են:

Ինչ վերաբերում է բառային (տառային) ապրանքային նշաններին, ապա այդ նշանները, որպես կանոն, դասվում են այն ապրանքային նշանների շարքին, որոնք ընկալվում են միաժամանակ տեսողական, իմաստային և ձայնային եղանակով: Այսինքն՝ բառային ապրանքային նշանն առկա է և իրականացնում է իր առջև դրված գործառույթները՝ անկախ դրա հավելումներից, հետևաբար, երկու նշանները պետք է գնահատվեն ինքնուրույնաբար՝ առանց հաշվի առնելու դրանց ներկայացման եղանակը, իսկ համեմատության առարկա պետք է դառնա միայն համապատասխան նշանը՝ առանց հաշվի առնելու այդ նշանի գեղագրությունը: Այսինքն՝ ապրանքային նշաններում պաշտպանության օբյեկտ է հանդիսանում միայն հիմնական տարբերակիչ տարրը, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան նշանին կատարված հավելումներն այնքանով են փոխում այդ նշանը, որ հիմնական տարրը կորցնում է իր անհատականությունը և տարբերակիչ նշանակությունը»:

Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ապրանքային նշանի համեմատության ընթացքում նախ և առաջ պետք է հաշվի առնվի տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը՝ անկախ լրացուցիչ և գուտ խորհրդանշական տարրերի առկայությունից: Այսինքն, եթե ապրանքային նշանում կրկնվում է տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը, ապա կարելի է եզրակացնել, որ այն ունի շփոթելու աստիճան նմանություն:

Վերոգրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես վիճարկվող դրույթները, այնպես էլ ձևավորված իրավակիրառ պրակտիկան ուղղված են ավելի վաղ ապրանքային

նշանի իրավատիրոջ՝ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված իրավունքների և շահերի պաշտպանությանը: Այդ պատճառով Օրենսգրքի և Օրենքի վիճարկվող դրույթներն իրավակիրատ պրակտիկայի հաշվառմամբ չեն խախտում ապրանքային նշանի իրավատիրոջ՝ Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված իրավունքները, իսկ վիճարկվող դրույթներով նախատեսված սահմանափակումները պիտանի և անհրաժեշտ են ավելի վաղ ապրանքային նշանի իրավատիրոջ իրավաչափ շահերը պաշտպանելու համար:

**4.4.** Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի՝ վերջինս կարգավորում է ապրանքային և սպասարկման նշանների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Միաժամանակ Օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ «Ապրանքային նշանների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և այլ իրավական ակտերից»:

Հիմնվելով Օրենքի 19-րդ հոդվածի 7-րդ, 27-րդ հոդվածի 11-րդ, 32-րդ հոդվածի 4-րդ, 40-րդ հոդվածի 5-րդ մասերի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին, 49-րդ հոդվածի 1-ին, 50-րդ հոդվածի 2-րդ, 51-րդ հոդվածի 7-րդ և 52-րդ հոդվածի 3-րդ մասերի վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2010 թվականի նոյեմբերի 18-ին ընդունել է «Ապրանքային նշանների պետական գրանցամատյանի վարման և քաղվածքների տրամադրման, կոլեկտիվ նշանը կամ դրա հայտը համապատասխանաբար անձի ապրանքային նշանի կամ ապրանքային նշանի հայտի և հակառակը փոխակերպելու, ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու, ապրանքային նշանների լիցենզիաները, դրանց փոփոխությունները և չեղյալ հայտարարելը գրանցելու մասին դիմումները լրացնելու, ներկայացնելու և քննարկելու, ապրանքային նշանների գրանցման գործո-

դության ժամկետի երկարաձգման մասին դիմումների ձևակերպման և քննարկման կարգերը հաստատելու մասին» թիվ 1538-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում): Այդ Որոշմամբ Կառավարությունը սահմանել է, ի թիվս այնի, «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգը», որում անդրադարձ է կատարվել ապրանքային նշանի՝ այլ նշանին շփոթելու աստիճանի նմանության հարցերին:

Ինչ վերաբերում է վիճարկվող դրույթների իրավական որոշակիության խնդրին, մասնավորապես՝ «նույնական», «նույնատիպ», «շփոթություն առաջացնելու վտանգ», «գրանցված ապրանքային նշանի գուգորդումը», «շփոթելու աստիճան նմանությունը» եզրույթների իրավական հստակությանը, ապա Մահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «... Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով:»...» (ՄԴՈ-1322, 22 նոյեմբերի 2016թ.) և «... թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է: ...» (ՄԴՈ-997, 15 նոյեմբերի 2011թ.):

Հարկ է նշել նաև, որ Վճռաբեկ դատարանն իր՝ 12.12.2007թ. 3-1763(ՏԴ) և 18.07.2014թ. ՎԴ/4241/05/11 գործերով կայացված որոշումներով արդեն իսկ անդրադարձել է ապրանքային նշանների ոլորտում իրավական որոշակիության վերաբերյալ դիմողի բարձրացրած խնդիրներին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, կարևորելով իրավակիրառ պրակտիկայում համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելու հարցը, արտահայտել է իրավական դիրքորոշումներ:

րոշում, համաձայն որի՝ համակցված ապրանքային նշանների նմանակման հարցը որոշելիս վերջիններս համեմատվում են նաև այն նշանների հետ (բառային, պատկերային և այլն), որոնք որպես տարբեր ներառված են համապատասխան համակցված ապրանքային նշանի մեջ (տե՛ս, թիվ 3-1763(ՏԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ապրանքային նշանի համեմատության ընթացքում նախ և առաջ պետք է հաշվի առնվի տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը անկախ լրացուցիչ և զուտ սիմվոլիկ տարրերի առկայությունից: Այսինքն՝ եթե ապրանքային նշանում կրկնվում է տարբերակիչ նշանակություն ունեցող տարրը, ապա կարելի է եզրակացնել, որ այն ունի շփոթելու աստիճան նմանություն:

Մեկ այլ, թիվ ՎԴ/4241/05/11 վարչական գործով 18.07.2014թ. որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «... ապրանքային նշանի նմանակման փաստն արձանագրելու համար պարտադիր է նաև սուբյեկտիվ տարրի առկայությունը, այն է՝ սպառողի մոտ շփոթություն առաջանալու վտանգի առկայությունը: Շփոթության վտանգն առկա է այն դեպքում, երբ նմանակումը սպառողին մղում է այն մտքին, որ այդ նշանով անհատականացված ապրանքն իրեն նախկինում հայտնի արտադրողի ապրանքն է, ինչը նրան ստիպում է կամ կարող է ստիպել ընտրելու ոչ այն ապրանքը, որը նա փնտրում է: Ընդ որում, իրավախախտման փաստն արձանագրելու համար բավարար է «շփոթության իրական հավանականությունը», այլ ոչ «փաստացի շփոթությունը»:

Ելնելով վերոգրյալից Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթները բավարար չափով որոշակի են և կանխատեսելի, իսկ ապրանքային նշանի իրավատերերի իրավունքների իրականացմանն ուղղված ընթացակարգերը բավարարում են Սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

**4.5.** Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան՝ ապրանքային նշանն այն նիշն է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար:

Կոնվենցիայի 10-րդ bis հոդվածը սահմանում է.

«1) Միության երկրները պարտավոր են Միությունում մասնակցող երկրների քաղաքացիներին արդյունավետ պահպանությամբ ապահովել ոչ բարեխիղճ մրցակցությունից:

2) Ոչ բարեխիղճ մրցակցության գործողություն է համարվում մրցակցության ցանկացած գործողություն, որը հակասում է արդյունաբերական և առևտրական գործերում արդար սովորություններին:

3) Մասնավորապես արգելման ենթակա են.

1) բոլոր գործողությունները, որոնք ընդունակ են որևէ ձևով շփոթություն առաջացնելու ձեռնարկության, մթերքների կամ արդյունաբերական կամ առևտրական գործունեության մրցակցի նկատմամբ, ...»:

Այսինքն, ապրանքային նշանների իրավական պաշտպանությունն ուղղված է տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի արդյունավետ իրականացման ապահովմանը:

Ինչ վերաբերում է այն ապրանքային նշաններին, որոնց օգտագործումը հանրության մեջ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ապա Օրենքով սահմանված են մի շարք երաշխիքներ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ապրանքային նշանների իրավատերերի շահերը պաշտպանելու համար: Այսպես՝

1) Օրենքի 43-44-րդ հոդվածների համաձայն՝ ապրանքային նշանը գրանցելու հայտն ենթակա է փորձաքննության, որի շրջանակներում շահագրգիռ անձի կողմից կարող է ներկայացվել դիտողություն կամ առարկություն: Այս առումով հայտատուի համար արդեն իսկ կանխատեսելի է դառնում գրանցման վերաբերյալ առարկություններ ներկայացրած անձի կողմից հետագայում գրանցումը դատական կարգով վիճարկելու հավանականությունը.

2) Օրենքի 23-րդ հոդվածին համապատասխան՝ ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու հայցը կամ իրավունքների պաշտպանության գործով հակընդդեմ հայցը կարող է ներկայացնել ավելի վաղ ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի տիրապետողը՝ ապրանքային նշանի գրանցման մասին տեղեկությունները «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրում հրապարակելու օրվանից հետո՝ 5 տարվա ընթացքում.

3) ապրանքային նշանը չի կարող անվավեր ճանաչվել, եթե իրավունքի տիրապետողը կամ նրա իրավահաջորդը իր համաձայնությունն է տվել ապրանքային նշանի գրանցման համար մինչև

տվյալ ապրանքային նշանն անվավեր ճանաչելու մասին հայց կամ հակընդդեմ հայց ներկայացնելը.

4) Օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է, որ «Եթե ավելի վաղ ապրանքային նշանի կամ ավելի վաղ որևէ իրավունքի իրավատերը հինգ հաջորդական տարիների ընթացքում գիտակցաբար հանդուրժել է ավելի ուշ գրանցված ապրանքային նշանի օգտագործումը, այլևս չի կարող սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայց կամ հակընդդեմ հայց ներկայացվել դատարան ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու մասին կամ արգելելու ավելի ուշ ապրանքային նշանի օգտագործումը այն ապրանքների և (կամ) ծառայությունների նկատմամբ, որոնց համար ավելի ուշ ապրանքային նշանը օգտագործվել է, պայմանով, որ ավելի ուշ ապրանքային նշանի գրանցումը չի կատարվել անբարեխիղճ նպատակներով»:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի կողմից տրամադրված այն տեղեկատվությանը, համաձայն որի սույն գործով վիճարկվող Օրենսգրքի դրույթների ուժի մեջ մտնելու պահից (01.07.2010թ.) լիազոր մարմնի կողմից գրանցված 32.113 (որից 19.043-ը՝ միջազգային ընթացակարգերով) ապրանքային նշաններից, հիմք ընդունելով սույն գործով վիճարկվող դրույթները, դատական կարգով անվավեր է ճանաչվել թվով միայն 15 գրանցում (0.005% ոչ ավելի): Այս հանգամանքը ևս վկայում է, որ վիճարկվող դրույթները գործնականում էական խոչընդոտներ չեն ստեղծել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և տնտեսական մրցակցությանը խոչընդոտելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:



2. «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

23 ապրիլի 2019 թվականի  
ՍԴՈ-1455



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ  
ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 ապրիլի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Ավանեսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի հոկտեմբերի 19-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Հանրապետության կառավարության ներկայացուցիչի կողմից»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)2019

պետության կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի հոկտեմբերի 19-ին Երևանում երկու երկրների ներդրողների համար հավասարության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա բարենպաստ պայմաններ ստեղծելու և գործարար նախաձեռնությունների խթանման նպատակով:

Համաձայնագիրն ունի երկու հավելված, որոնք Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- խրախուսել և բարենպաստ պայմաններ ստեղծել ՀՀ տարածքում կորեական կողմի ներդրողների կողմից ներդրումներ կատարելու համար և ընդունել այդ ներդրումները՝ ՀՀ օրենքներին և կանոնակարգերին համապատասխան (հոդված 2(1)),
- կորեական կողմի ներդրողի ներդրումներին տրամադրել միջազգային սովորութային իրավունքին համապատասխան ռեժիմ, ներառյալ արդարացի ու հավասար ռեժիմ և լիարժեք պաշտպանություն ու անվտանգություն (հոդված 2, (2)),
- չձեռնարկել կորեական կողմի ներդրողների կողմից իրականացվող ներդրումների կառավարման, պահպանման, օգտագործման, տիրապետման և տնօրինման դեմ ուղղված որևէ անհիմն կամ խտրական գործողություններ, ինչպես նաև կորեական կողմի ներ-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019  
107

դրողների կողմից իրականացվող ներդրումների նկատմամբ չսահմանել անհիմն կամ խտրական գործողություններ՝ կապված տեղական բաղադրիչի, տեխնոլոգիայի փոխանցման կամ արտահանում իրականացնելու պահանջների հետ (հոդված 2, (5)),

- ՀՀ տարածքում կորեական կողմի ներդրողների նկատմամբ, իրենց ներդրումների կառավարման, պահպանման, օգտագործման, տիրապետման կամ տնօրինման մասով, սահմանել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը տրամադրվում է ՀՀ սեփական ներդրողներին (այսուհետ՝ ազգային ռեժիմ) կամ ցանկացած երրորդ պետության ներդրողներին (այսուհետ՝ առավել բարենպաստ ռեժիմ) նույնանման պայմաններում՝ կախված այն հանգամանքից, թե դրանցից որն է առավել բարենպաստ (հոդված 3, (1)),

- ՀՀ տարածքում կորեական կողմի ներդրողների կողմից ՀՀ օրենքներին և կանոնակարգերին համապատասխան կատարված ներդրումների նկատմամբ, այդ ներդրումների կառավարման, պահպանման, օգտագործման, տիրապետման կամ տնօրինման մասով, սահմանել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը տրամադրվում է ՀՀ սեփական ներդրողների ներդրումներին (ազգային ռեժիմ) կամ ցանկացած երրորդ պետության ներդրողների ներդրումներին (առավել բարենպաստ ռեժիմ) նույնանման պայմաններում՝ կախված այն հանգամանքից, թե դրանցից որն է առավել բարենպաստ (հոդված 3 (2)),

- ապահովել, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ազգային ռեժիմը և առավել բարենպաստ ռեժիմը չտարածվեն նույն հոդվածի 4-րդ կետում շարադրված դեպքերի վրա (հոդված 3(4)),

- առավել հստակության համար ապահովել, որ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով սահմանված առավել բարենպաստ ռեժիմը չտարածվի Համաձայնագրի 11-րդ հոդվածի վրա (հոդված 3 (6)),

- կորեական կողմի ներդրողներին, ովքեր ներդրում կատարելու արդյունքում կորուստներ են կրել ՀՀ տարածքում պատերազմի կամ այլ զինված ընդհարման, ազգային մակարդակով արտակարգ իրավիճակի, ապստամբության, խռովության, զանգվածային անկարգությունների կամ այլ նմանատիպ իրավիճակների պատճառով, տրամադրել կորուստների վերականգնման, հատուցման,

փոխհատուցման կամ որևէ այլ ձևով լուծման կապակցությամբ այնպիսի ռեժիմ, որը ոչ պակաս բարենպաստ է, քան այն ռեժիմն է, որը հայկական կողմը տրամադրում է իր սեփական ներդրողներին կամ որևէ երրորդ պետության ներդրողներին (հոդված 4 (1)),

- չսահմանափակելով Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները՝ կորեական կողմի ներդրողներին, որոնք այդ կետում նշված որևէ իրավիճակի հետևանքով ՀՀ տարածքում կրում են այնպիսի կորուստներ, որոնք առաջացնում են Համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետում շարադրված հետևանքներ՝ տրամադրել վերականգնում, փոխհատուցում կամ այդպիսի կորուստների դիմաց համապատասխան դեպքում՝ երկուսը միասին: Ցանկացած փոխհատուցում տրամադրել պատշաճ ժամանակին, համարժեք և արդյունավետ՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան, *mutatis mutandis* (հոդված 4 (2)),

- ապահովել, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն չօտարվի կամ չազգայնացվի որևէ ներդրում օտարմանը կամ ազգայնացմանը (այսուհետ «օտարում») համարժեք գործողություններով բացառությամբ Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված դեպքերի, ինչպես նաև ապահովել Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետով սահմանված փոխհատուցման վճարումը նույն հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով (հոդված 5 (1, 2)),

- ապահովել, որ օտարումից տուժած կորեական կողմի ներդրողները ունենան ՀՀ դատական կամ այլ անկախ մարմնի կողմից իրենց գործի անհապաղ քննության և Համաձայնագրի 5-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին համապատասխան իրենց ներդրումների գնահատման իրավունք (հոդված 5 (5)),

- ապահովել, որ Համաձայնագրի 5-րդ հոդվածը չկիրառվի մտավոր սեփականության իրավունքների առնչությամբ (հոդված 5 (6)),

- կորեական կողմի ներդրողի համար երաշխավորել դեպի ՀՀ տարածք և ՀՀ տարածքից դուրս կատարվող ներդրումների հետ կապված բոլոր վճարումների ազատ փոխանցումը (հոդված 6(1)),

- օտարերկրացիների մուտքին և կացությանը՝ վերաբերող օրենքներին և կանոնակարգերին համապատասխան՝ թույլատրել կորեական կողմի ներդրող հանդիսացող ֆիզիկական անձանց և կորեական կողմի ներդրողների կողմից աշխատանքի ընդունված անձնակազմին մուտք գործել և մնալ ՀՀ տարածքում՝ ներդրումների հետ կապված գործունեության մեջ ներգրավվելու նպատակով (հոդված 9),

• կորեական կողմի հետ վեճերը լուծել Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված կարգով (հոդված 10),

• հայկական կողմի և կորեական կողմի ներդրողի միջև ներդրումների հետ կապված վեճերը լուծել Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով (հոդված 11):

3. Մահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Համաձայնագրում հղում է կատարվել հետևյալ միջազգային փաստաթղթին. «Մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագրին («ՄՄԻԱՀ» համաձայնագիր), որը 2002 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ Ազգային ժողովի Ն-322-2 որոշմամբ (16.12.2002թ. ՄԴՈ-401) Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված «Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին» Մարաբեշի համաձայնագրի անբաժանելի մասն է կազմում:

4. Համաձայնագրի վավերացումը բխում է ՀՀ Մահմանադրության 13-րդ հոդվածում ամրագրված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Մահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Մահմանադրական դատարանի մասին սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**»:

1. 2018 թվականի հոկտեմբերի 19-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կորեայի Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Մահմանադրությանը:

2. Մահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

23 ապրիլի 2019 թվականի  
ՄԴՈ-1456



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԱԼՄԱԹԻՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ՝ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ  
ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 ապրիլի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի սեպտեմբերի 12-ին Ալմաթիում ստորագրված՝ «Հայաստանի Հան-

րապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Համաձայնագրի ստորագրման նպատակը՝ քաղաքացիական պաշտպանության, բնական և տեխնածին ռիսկերի կանխման, արտակարգ իրավիճակների վերացման, արտակարգ իրավիճակների առաջացման հանգեցնող արդյունաբերական վթարների, աղետների և տարերային աղետների դեպքում կամավոր և փոխադարձ օգնության տրամադրման համար քաղաքացիական պաշտպանության մասնագետների ուսուցման բնագավառում Կողմերի միջև փոխգործակցության ապահովումն է:

Համաձայնագրով, ի թիվս այլնի, սահմանվում են օգնության ցուցաբերման ձևերը, կարգը, օգնություն ցուցաբերող անձնակազմի կարգավիճակը, ենթակայությունը, կարգավորվում են օգնության ցուցաբերման հետ կապված գույքային հարցերը, ինչպես նաև սահմանվում են անհրաժեշտության դեպքում թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր պարունակող անհրաժեշտ քանակությամբ բժշկական դեղամիջոցների՝ ընդունող Կողմի տարածք ներմուծման և օգտագործման կարգը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- աջակցել քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և հաստատությունների միջև համագործակցությանը (հոդված 5),



- որպես ուղարկող Կողմ հանդես գալու պարագայում՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածով սահմանված գործունեությանը մասնակցելիս, երբ այն անմիջականորեն կապված չէ արտակարգ իրավիճակների վերացման ժամանակ օգնության ցուցաբերման հետ, հոգալ Կողմերի ներկայացուցիչների՝ մինչև նշանակման կետը հասնելու ճանապարհածախսը, կեցության և սննդի ծախսերը, եթե Կողմերն այլ բան չեն պայմանավորվել (հոդված 6, կետ 1),

- որպես ընդունող Կողմ՝ հոգալ համատեղ գիտաժողովների, սեմինարների, աշխատանքային խորհրդակցությունների, ուսումնական վարժանքների և մարզումների կազմակերպման, ինչպես նաև Կողմերի ներկայացուցիչների տեղաշարժի հետ կապված ծախսերը, եթե Կողմերն այլ բան չեն պայմանավորվել (հոդված 6, կետ 2),

- որպես հարցում ստացած Կողմ, ամենասեղմ ժամկետներում դիտարկել հարցումը և հարցում կատարող մյուս Կողմին տեղեկացնել օգնության ցուցաբերման հնարավորության, ձևի, ծավալի, պայմանների մասին՝ նշելով օգնության ցուցաբերման խմբերի կազմը, փորձագետների մասնագիտությունները և ներկրվող գույքի ու փրկարարական սարքավորումների կազմը, արտակարգ իրավիճակի գոտի հասնելու համար կիրառվող փոխադրամիջոցի տեսակը և պետական սահմանի հատման նախատեսվող կետը (հոդված 7, կետ 4),

- որպես հարցում կատարող Կողմ՝ հոգալ տրամադրող մյուս Կողմի օգնության ցուցաբերման խմբերի կեցության, ինչպես նաև սննդի ծախսերը՝ Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կարգով (հոդված 8, կետ 1),

- որպես հարցում կատարող Կողմ՝ ապահովել տրամադրող մյուս Կողմի օգնության ցուցաբերման խմբերի բժշկական սպասարկումը տվյալ Կողմի տարածքում գտնվելու ընթացքում (հոդված 8, կետ 2),

- որպես հարցում կատարող Կողմ՝ իրեն օգնություն ցուցաբերելու հարցումը չեղարկելու պարագայում, օգնության ցուցաբերման հարցումը չեղարկելու պահից 34 օրացուցային օրվա ընթացքում փոխհատուցել տրամադրող մյուս Կողմի կրած ծախսերը՝ կատարված աշխատանքի արդյունքների վերաբերյալ հաշվետվության հիման վրա (հոդված 8, կետ 3),

- որպես տրամադրող Կողմ հանդես գալու պարագայում՝ ապահովել օգնության ցուցաբերման խմբերի անդամների ապահովագրությունը, որի ձևակերպման ծախսերը ներառվում են օգնության ցուցաբերման ընդհանուր ծախսերում (հոդված 8, կետ 4),

- արտակարգ իրավիճակների վերացման ընթացքում օգնությունը ցուցաբերել օգնության ցուցաբերման խմբեր, բժշկական խմբեր, սարքավորումներ և փրկարարական միջոցներ, բժշկական դեղամիջոցներ ուղարկելու միջոցով՝ կախված արտակարգ իրավիճակի բնույթից և ծավալներից (հոդված 9, կետ 1),

- որպես տարանցման պետություն հանդես գալու պարագայում՝ համաձայն Կողմի մաքսային օրենսդրության, նպաստել տվյալ Կողմի տարածքով դեպի երրորդ պետություններ տրամադրող մյուս Կողմի վթարափրկարարական կազմավորումների, գույքի և նյութական ապահովման ապրանքների անարգել փոխադրմանը՝ այդ պետությունների հետ արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում կնքված համագործակցության մասին համաձայնագրերի հիման վրա (հոդված 10),

- անհրաժեշտության դեպքում, որպես հարցում կատարած Կողմ, տրամադրող մյուս Կողմի օգնության ցուցաբերման խմբերին տրամադրել թարգմանիչներ և կապի միջոցներ, ինչպես նաև ապահովել նրանց անվտանգությունը (հոդված 11, կետ 6),

- օգնության ցուցաբերման խմբերի հնարավորինս շտապ ժամանման նպատակով պարզեցնել պետական սահմանի հատման պայմանները (հոդված 12, կետ 1),

- ապահովել, որպեսզի արտակարգ իրավիճակների վերացման ժամանակ օգնության ցուցաբերման համար անհրաժեշտ գույքն ու փրկարարական սարքավորումները, որոնք ներկրվում են համապատասխան Կողմի տարածք կամ արտահանվում են այդ տարածքից, մաքսային ընթացակարգերն անցնեն առաջնահերթության կարգով՝ տվյալ Կողմի օրենսդրությանը համապատասխան (հոդված 13, կետ 1),

- որպես տրամադրող Կողմ՝ օգնության ցուցաբերման խմբերին արգելել հարցում կատարող մյուս Կողմի տարածք ներկրել կամ այդ տարածքից արտահանել որևէ ապրանք՝ բացի գույքից և փրկարարական սարքավորումներից (հոդված 13, կետ 3),

- որպես տրամադրող Կողմ՝ ապահովել, որպեսզի օգնության ցուցաբերման աշխատանքների ավարտից հետո ներկրված գույքն արտահանվի հարցում կատարող մյուս Կողմի տարածքից (հոդված 13, կետ 4),

- որպես հարցում կատարող Կողմ՝ ապահովել, որպեսզի բժշկական օգնության ցուցաբերման խմբերն անհրաժեշտության դեպքում մյուս Կողմի տարածք ներկրեն թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր պարունակող անհրաժեշտ քանակությամբ բժշկական դեղամիջոցներ՝ այդ նյութերի անվանացուցակը, քանակները և օգտագործման վայրը պարտադիր կերպով համաձայնեցնելով մյուս Կողմի թմրանյութերի նկատմամբ վերահսկողությունն իրականացնող իրավասու մարմնի հետ (հոդված 13, կետ 5),

- որպես տրամադրող Կողմ՝ ապահովել, որպեսզի թմրանյութեր և հոգեմետ նյութեր պարունակող չօգտագործված բժշկական դեղամիջոցներն արտահանվեն հարցում կատարող մյուս Կողմի տարածքից (հոդված 13, կետ 7),

- որպես հարցում կատարող Կողմ՝ թույլատրել օդանավերի թռիչքներ մյուս Կողմի տարածքի որոշակի կետում (հոդված 14, կետ 2),

- որպես հարցում կատարող Կողմ՝ հատուցել տրամադրող մյուս Կողմի՝ օգնության ցուցաբերման հետ կապված ծախսերը, եթե այդ Կողմի հետ այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել (հոդված 16, կետ 1),

- տրամադրող Կողմին ազատել օդանավերի թռիչքի, վայրէջքի, օդանավակայանում կայանման և այնտեղից թռիչքի, ինչպես նաև թռիչքների կառավարման ծառայությունների համար վճարից (հոդված 16, կետ 2),

- որպես հարցում կատարող Կողմ՝ փոխհատուցել օդանավերի վառելիքի ծախսերը, եթե մյուս Կողմի հետ այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել (հոդված 16, կետ 3),

- որպես հարցում կատարող Կողմ՝ տրամադրող մյուս Կողմին վճարել փոխհատուցում մարդկանց զոհվելու կամ հաշմանդամ դառնալու, ինչպես նաև մյուս Կողմի սարքավորումները կամ այլ սեփականությունը վնասելու կամ ոչնչացնելու դեպքերում, եթե այդ վնասը հասցվել է Համաձայնագրի իրականացման հետ կապված խնդիրները լուծելիս: Փոխհատուցման չափերի մասին յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ձեռք բերել առանձին պայմանավորվածություն (հոդված 17, կետ 1),

- որպես հարցում կատարող Կողմ՝ մյուս Կողմի օրենսդրությանը համապատասխան փոխհատուցել տրամադրող Կողմի օգնության ցուցաբերման խմբի անդամի կողմից հարցում կատարող Կողմի տարածքում Համաձայնագրի իրականացման հետ կապված խնդիրները լուծելիս իրավաբանական կամ ֆիզիկական անձին հասցված վնասը (հոդված 17, կետ 2),

- որպես տրամադրող Կողմ՝ մյուս Կողմի օրենսդրությանը համապատասխան հատուցել օգնության ցուցաբերման խմբի անդամի կողմից դիտավորությամբ կամ կոպիտ անզգուշությամբ պատճառված վնասը՝ անկախ մեղավորության աստիճանից (հոդված 17, կետ 3),

- Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը և օգնության ցուցաբերումն իրականացնել Կողմերի օրենսդրությամբ նախատեսված բյուջետային միջոցների սահմաններում (հոդված 18):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին, մասնավորապես՝ նպատակաուղղված են պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2018 թվականի սեպտեմբերի 12-ին Ալմաթիում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

23 ապրիլի 2019 թվականի  
ՍԴՈ-1457



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՎԼԱԴԻՄԻՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԻ 66-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ «Գ» ԵՎ «Ե» ԿԵՏԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

30 ապրիլի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ՝ Վ. Զուռնայանի, գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վլադիմիր Մկրտչյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)2019

և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2004 թվականի մարտի 16-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 31-ին:

Օրենքի՝ «Իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելը» վերտառությամբ 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերը համապատասխանաբար սահմանում են.

«3. Բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե

....

գ) վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարեր այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պատշաճ չի կատարել.

....

ե) նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրան կատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը»:

Օրենքի վերոնշյալ դրույթները որևէ փոփոխության և լրացման չեն ենթարկվել:

Գործի քննության առիթը Վլադիմիր Մկրտչյանի՝ 2018 թվականի նոյեմբերի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը գտնում է, որ Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերով սահմանված իրավակարգավորումները հակասում են Սահմանադրության 5-րդ, 6-րդ, 8-րդ, 60-րդ, 73-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին այն պատճառաբանությամբ, որ.

- դիտարկվող իրավակարգավորումները Սահմանադրությամբ սահմանված հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս բավարար չափով չեն սահմանում այն կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար,

- դիտարկվող իրավակարգավորումները չեն սահմանում այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, դրանք բավարար չափով որոշակի չեն, որի արդյունքում էլ այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի չեն լինելու դրսևորելու համապատասխան վարքագիծ,

- Սահմանադրությամբ սահմանված հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պիտանի և անհրաժեշտ չեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, համարժեք չեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը,

- դիտարկվող իրավակարգավորումները թույլ են տալիս հետադարձ ուժ հաղորդել անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին կամ այլ նորմատիվ իրավական ակտերին:

Ըստ դիմողի օրենսդրությունը և, մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը պարունակում է բազմաթիվ նորմեր, որոնք հարկադրաբար ապահովում են վարչական ակտի հասցեատիրոջ կողմից իր պարտականությունների կատարումը կամ պատշաճ կատարումը: Հետևաբար, ըստ դիմողի, եթե վարչական ակտի հասցեատերը չի կատարել կամ պատշաճ չի կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը, ապա այն հնարավոր է կատարել հարկադրանք կիրառելու միջոցով, որպիսի պայմաններում անհրաժեշտություն չի առաջանա ամբողջությամբ անվավեր ճանաչել վարչական ակտը:

Դիմողը գտնում է նաև, որ անձի հայցադիմումի հիման վրա վարչական ակտն անվավեր ճանաչելու համար դեռևս բավարար չէ



դրա՝ օրենսդրությանը հակասող լինելու հանգամանքը: Անհրաժեշտ է նաև, որ տվյալ ակտը խախտի տվյալ անձի՝ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները կամ ստեղծի դրանց խախտման վտանգ:

Դիմողը գտնում է. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» և «ե» կետերով սահմանված դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 5-րդ, 6-րդ, 8-րդ 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին, քանի որ դրանք չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, դրանցով հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս չեն սահմանվել այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը, իսկ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պիտանի և անհրաժեշտ չեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, համարժեք չեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը, առարկելով դիմողի կողմից ներկայացված փաստարկներին, գտնում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված են բավարար իրավական կառուցակարգեր և ընթացակարգեր Սահմանադրությամբ (60-րդ, 79-րդ հոդվածներ) սահմանված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար, իսկ այդ իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները ոչ միայն համահունչ են (Օրենքի 66-րդ հոդված), այլև բխում են համապատասխան սահմանադրաիրավական նորմերի պահանջներից:

Պատասխանողը վերոշարադրյալ իրավական ակտերի և Օրենքի համակարգային վերլուծության հիման վրա անհրաժեշտ է համարում արձանագրել, որ օրենսդիրը նպատակ է հետապնդել սահմանելու այնպիսի իրավական կարգավորում, որը, ի թիվս այլնի, կերաշխավորի ինչպես սեփականության իրավունքի, այնպես էլ գերակա հանրային շահով պայմանավորված՝ սեփականության իրավունքի սահմանափակման պահանջի լիարժեք և արդյունավետ իրականացում:

Պատասխանողի կարծիքով՝ Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» և «ե» կետերը համապատասխանում են Սահմանադրության պահանջներին:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. արդյոք իրավաչափ վարչական ակտի հասցեատիրոջ կողմից վարչական ակտի հետ կապված՝ օրենքով նախատեսված և դրա հիման վրա վարչական ակտով անձի վրա դրված որևէ պարտականության չկատարումը կարող է իրավաչափ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու օրենսդրական հիմք հանդիսանալ,

2. արդյոք խնդրո առարկա իրավակարգավորումները թույլ են տալիս հետադարձ ուժ հաղորդել անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքներին կամ այլ նորմատիվ իրավական ակտերին,

3. արդյոք վիճարկվող իրավակարգավորումները սահմանափակում են որևէ հիմնական իրավունք և սահմանափակման դեպքում՝ համապատասխանում են արդյոք համաչափության սկզբունքին,

4. արդյոք վիճարկվող իրավակարգավորումները որոշակի են,

5. արդյոք Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետին դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ չի խախտվում անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի պնդումները վիճարկվող դրույթների Սահմանադրության 5, 6, 8 և 60-րդ հոդվածներին հակասելու վերաբերյալ, ըստ էության չեն առնչվում դիմումի առարկային:

Սահմանադրական դատարանը սույն գործի քննությունն իրականացնելիս գնահատում է վիճարկվող իրավակարգավորումների համապատասխանությունը Սահմանադրության 39, 61, 73, 75, 78 և 79-րդ հոդվածների պահանջներին:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ այդ օրենքի իմաստով **բարենպաստ** վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ ան-

ձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, իսկ Օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **իրավաչափ** է այն վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող դրույթները վերաբերում են այն վարչական ակտերին, որոնք ընդունվել են օրենքների պահանջներին համապատասխան և անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի վիճարկվող «գ» կետն ամրագրում է, որ բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարել այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պատշաճ չի կատարել: Այսինքն՝ այս դեպքը վերաբերում է **պայմանով վարչական ակտերին**. վարչական ակտով նախատեսված իրավունքներից կամ անձի իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայմանից օգտվելու **իրավական նախադրյալը օրենքով նախատեսված և վարչական ակտով տվյալ անձի վրա դրված որևէ պարտականություն կատարելն է**: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն» ձևակերպումը նշանակում է, որ **պարտականությունը պետք է օրենքով նախատեսված լինի** և վարչական ակտի միջոցով ուղղված լինի դրա հասցեատիրոջը: Ուստի, Սահմանադրության 39-րդ հոդվածի երկրորդ նախադասության պահանջն առ այն, որ **ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով**, պահպանված է:

Բարենպաստ իրավաչափ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու այս հիմքը վերաբերում է այն դեպքերին, երբ վարչական ակտի բարենպաստ պայմանից (օգուտից) շահառու անձը կարող է օգտվել **միայն օրենքով սահմանված և վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը պատշաճ կերպով կատարելու պայմանով**, ինչը նշանակում է, որ այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքը վարչական ակտով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019

նախատեսված բարենպաստ պայմանի ի հայտ չգալն է, այսինքն, վարչական ակտի հասցեատիրոջ մեղքով իր համար սահմանված բարենպաստ հետևանքների չառաջանալը:

Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վարչական ակտով կոնկրետացված՝ օրենքով սահմանված պարտականությունը կամ այլ սահմանափակումը (ոչ բարենպաստ պայմանը) վարչական ակտով տրամադրված իրավունքից կամ այլ բարենպաստ պայմանից օգտվելու նախադրյալ չէ, **Օրենքի այս վիճարկվող դրույթը կիրառելի չէ:**

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք որևէ պարտականություն դնելը սահմանափակում է անձի համապատասխան իրավունքը կամ ազատությունը, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն առնվազն սահմանափակում է անձի ազատ գործելու հիմնական իրավունքը և կարող է ազդեցություն թողնել նաև այս հիմնական իրավունքի համեմատ ավելի հատուկ հիմնական իրավունքների իրականացման վրա: Ինչ վերաբերում է բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելուն, ապա վստահության պաշտպանության երաշխավորված սահմաններում այն ինքնին միջամտություն է անձի իրավունքների և ազատությունների իրականացմանը:

Տվյալ դեպքում սահմանափակումը բարենպաստ վարչական ակտով նախատեսված օգուտի տրամադրումը շահառու անձին օրենքով սահմանված պարտականության պատշաճ կատարման հետ զուգորդելն է, որի նպատակը շահառու անձին նրա համար բարենպաստ պայմանի ամրագրման միջոցով օրենքով նախատեսված և դեռևս չկատարված պարտականության պատշաճ կատարմանն ուղղորդելն է, ինչը Սահմանադրական դատարանը գնահատում է որպես իրավաչափ նպատակ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս եղանակով անձին իր իրավաչափ կերպով ամրագրված պարտականությունների պատշաճ կատարմանն ուղղորդելը Օրենքի մակարդակով սահմանված հստակ (և հատուկ) կառուցակարգ է, որով անձի համար կանխատեսելի հետևանքների, այն է՝ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու լիազորություն ամրագրելու եղանակով պարզ է կամ պետք է որ պարզ դառնա, որ վարչական ակտով սահմանված բարենպաստ պայմանից ինքը կարող է օգտվել միայն

իր վրա դրված պարտականությունը պատշաճ կերպով կատարելու դեպքում, հակառակ դեպքում՝ ինքը զրկվում է այդ հնարավորությունից:

Վարչական ակտով սահմանված պայմանն ընդամենը կոնկրետացնում է օրենքով սահմանված պարտականությունը կոնկրետ իրավահարաբերությունների մասով, այդ թվում՝ կոնկրետ հասցեատիրոջ համար, ինչն իրավական պետությանը հարիք օրենսդրական երաշխիք է օրենքների կատարումն ապահովելու համար, որը, իր հերթին, իրավական անվտանգության բաղադրիչներից մեկն է: Հետևապես, այս կառուցակարգը Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջների տեսանկյունից խնդրահարույց չէ:

Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական ակտով նախատեսված օգուտը պարտականության պատշաճ կատարմամբ պայմանավորելը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ դրանք բովանդակային առումով փոխկապակցված են միմյանց հետ: Այլ դեպքերում այս կառուցակարգը չի կարող կիրառվել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ թույլատրելի դեպքերում օրենսդիրն ընտրել է պիտանի միջոց հասնելու վերոնշյալ իրավաչափ նպատակին: Ուրիշ այլընտրանքային որևէ միջոց, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, չէր կարող համապատասխանել պայմանով վարչական ակտերի էությանը, այսինքն՝ լինել պիտանի, քանի որ պետք է ենթադրեր տրամադրվող օգուտի և պարտականության տարանջատում այն դեպքում, երբ դրանք փոխկապակցված են:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 66-րդ հոդվածի «գ» կետը համապատասխանում է իրավական որոշակիության պահանջին, քանի որ հստակ է ձևակերպված և հնարավորություն է տալիս ակտի հասցեատիրոջը համապատասխանեցնել իր վարքագիծն օրենքի պահանջներին, իսկ ընտրված միջոցը՝ վարչական ակտով տրամադրվող օգուտն օրենքով սահմանված պարտականության պատշաճ կատարմամբ պայմանավորելը, պիտանի միջոց է իրավունքների և պարտականությունների բովանդակային փոխկապակցվածության դեպքերում օրենքի պահանջների կատարման իրավաչափ նպատակին հասնելու համար, ուստի Սահմանադրության 79-րդ հոդվածի տեսանկյունից խնդրահարույց չէ:

Բացի դրանից, Օրենքով նախատեսված կառուցակարգը՝ որպես Օրենքի համակարգի մաս, արդյունավետ հնարավորություն է ստեղծում շահառու անձի համար իրականացնելու վարչական ակտով իրեն տրամադրված իրավունքը՝ պատշաճ կերպով կատարելով իր վրա դրված պարտականությունը, կամ վիճարկելու՝ ընդունված վարչական ակտի իրավաչափությունը, այլ կերպ՝ վարչական ակտով անձի վրա կարող է դրվել միայն օրենքով սահմանված պարտականություն, իսկ Օրենքի 109-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է նաև բարենպաստ իրավաչափ վարչական ակտեր ուժը կորցնելու դեպքում՝ վստահության պաշտպանության ուժով, շահառու անձանց պատճառված վնասների հատուցման կառուցակարգ:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի իմաստով (այլ) օրենքով սահմանված պարտականությունն ամրագրող դրույթի սահմանադրականությունը դիմողի կողմից վիճարկման առարկա չի եղել, ուստի Սահմանադրական դատարանը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ մասի ուժով՝ համակցված նույն օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի հետ, իրավասու չէ գնահատել այդ դրույթի համապատասխանությունը Սահմանադրությանը:

4.2. Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի վիճարկվող «ե» կետի համաձայն՝ բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը: Այս դեպքում խոսքը բարենպաստ իրավաչափ վարչական ակտն ուժը կորցնելու մեկ այլ հիմքի մասին է, որի սահմանադրականությունը, ի լրումն վերոնշյալ չափանիշների, պետք է գնահատվի նաև Սահմանադրության 73-րդ հոդվածի տեսանկյունից:

Օրենքի վերոնշյալ դրույթի վերլուծությունը վկայում է, որ բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) եթե նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը,

2) եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը,

3) եթե այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել:

Այս պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վիճարկվող դրույթի հիման վրա բարենպաստ իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելն անթույլատրելի է: Նշված պայմանների առկայությունը յուրաքանչյուր կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում պետք է գնահատվի վարչական մարմնի, իսկ դատական պաշտպանության ժամանակ նաև դատարանի կողմից, և արդյունքում՝ վարչական մարմինը, իսկ դատական պաշտպանության ժամանակ նաև դատարանը պետք է հանգի այն եզրակացության, որ

1) վարչական ակտի ուժը կորցնելը պայմանավորող որևէ նորմատիվ իրավական ակտ ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, որոնք կբացառեն նման վարչական ակտի ընդունումը, եթե այդ պահանջները վարչական ակտի ընդունման ժամանակ գործած լինեին,

2) իրապես առկա է գերակայող հանրային շահ, որն անհրաժեշտ է նույնականացնել, իսկ այդ շահի հնարավոր խախտումը կարող է կանխվել միայն այդ ակտն ուժը կորցնելու դեպքում,

3) վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել:

Այս համատեքստում հարկ է նշել, որ այնքանով, որքանով օրենսդիրն ուղղակիորեն չի սահմանել վարչական ակտի հասցեատիրոջ կողմից վարչական ակտով տրամադրված **բոլոր** օգուտներից և

**ամբողջովին** օգտվելու պայմանը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական ակտով տրամադրված օգուտներից օգտվելն իր բովանդակության մեջ ներառում է ոչ միայն բոլոր օգուտներից և ամբողջովին օգտվելը, այլ նաև օգուտների մի մասից կամ որևէ օգուտից մասնակի օգտվելը, ինչի առկայությունը, ինչպես վերը նշվեց, յուրաքանչյուր կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում պետք է գնահատվի վարչական մարմնի, իսկ դատական պաշտպանության ժամանակ՝ նաև դատարանի կողմից:

«Գերակայող հանրային շահ» դրույթն առանցքային նշանակություն ունի միջամտության իրավաչափությունը գնահատելու համար: Սահմանադրության վերլուծությունը վկայում է, որ առհասարակ հանրային շահն այն սահմանադրական արժեքն է, որի պաշտպանության համար հիմնական իրավունքը կամ ազատությունը կարող է սահմանափակվել:

Գերակայող հանրային շահի ամրագրումը վիճարկվող դրույթում նշանակում է, որ այն իրավունքը կամ ազատությունը, որը սահմանափակվում է բարենպաստ վարչական ակտն ուժը կորցնելու ժամանակ, պետք է ավելի նվազ նշանակություն ունենա սահմանափակման այդ կոնկրետ դեպքում, քան դրանով սահմանափակվող իրավունքը կամ ազատությունը: Ուստի, վարչական մարմինը, իսկ դատական պաշտպանության ժամանակ՝ նաև դատարանը **պարտավոր են գնահատել հանրային շահի նշանակությունը:**

Միևնույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ որքան ավելի կարևոր նշանակություն ունի իրավունքը կամ ազատությունը, որին միջամտում է պետությունը, և որքան ավելի ինտենսիվ է միջամտությունն իրավունքին կամ ազատությանը, այդքան ավելի ծանրակշիռ կերպով պետք է հիմնավորվի միջամտության անհրաժեշտությունը վարչական և դատական ակտերում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ եթե նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, և այդ վարչական ակտի հասցեատերը սույն որոշմամբ տրված Օրենքի հիշյալ դրույթի՝ օգուտներից օգտվելուն վերաբերող մեկնաբանության սահմաններում չի օգտվել վարչական ակտով



տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, ապա **գերակայող հանրային շահի ապահովման նպատակով բարենպաստ իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելը** չի կարող ինքնին գնահատվել որպես ոչ իրավաչափ միջամտություն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության:

Անդրադառնալով անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի ենթադրյալ խախտմանը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը չի վերաբերում և չի կարող վերաբերել այն դեպքերին, երբ անձն ամբողջովին կամ մասնակիորեն ստացել է վարչական ակտով նախատեսված օգուտը, ուստի խոսքը վատթարացման մասին չէ, քանի որ իրավահարաբերությունները չեն ավարտվել: Բացի դրանից, վնասի հատուցման լիարժեք հնարավորությունը թույլ է տալիս արդյունավետ կերպով իրականացնել վարչական ակտի հասցեատիրոջ վստահության պաշտպանության իրավունքը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ այս հիմքով բարենպաստ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելը չի կարող փոխկապակցվել Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով սահմանված հիմքի հետ. այս հիմքը բարենպաստ վարչական ակտն ուժը կորցնելու այլընտրանքներից մեկն է: Ընդ որում՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ պարտականության պատշաճ կատարմամբ պայմանավորված վարչական ակտի դեպքում այդ պարտականության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը չեն կարող չհանգեցնել տվյալ վարչական ակտով նախատեսված օգուտի չտրամադրմանը, ուստի վստահության պաշտպանության իրավունքը՝ այդ օգուտի մասով, չի կարող ի հայտ գալ ինքնաշխատ՝ սոսկ այդպիսի վարչական ակտի ընդունման և ուժի մեջ մտնելու հիմքով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի վիճարկվող «ե» կետի պահանջները շարադրված են հստակ, պարզ են բոլոր հասցեատերերի համար, իսկ օրենքում գնահատողական հասկացությունների օգտագործումն ինքնին ընդունված է և չի կարող հանգեցնել հակասության Սահմանադրությանը:

Օրենքի այս դրույթը հետապնդում է գերակայող հանրային շահը կենսագործելու նպատակ, չի ենթադրում ուժը կորցնելիք բարենպաստ վարչական ակտերի հետադարձ ներգործություն անձի ստացած օգուտի վրա, ինչպես նաև որևէ կերպ չի սահմանափակում հնարավոր վնասների հատուցման նրա իրավունքը:

**5. Վիճարկվող դրույթներին դատարանի վերջնական ակտով տրված մեկնաբանությունը**

Սույն գործով վիճարկվող դրույթների վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանը 14.06.2018թ. որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սույն դեպքում վարչական ակտ կայացնելիս վարչական մարմինը սահմանել է նաև որոշակի հատուկ պայմաններ, որոնք ակտի հասցեատերը պարտավոր էր պահպանել: Հատուկ պայմաններից 1-ը վերաբերում է անձանց հասցվելիք վնասների փոխհատուցմանը: Ակտում մասնավորապես նշվել է՝ կառուցապատողը պետք է նախքան շինարարությունը սկսելը և դրա ընթացքում հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գար կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ:

Գործի քննության արդյունքում պարզ է դառնում, որ երրորդ անձի կողմից չի պահպանվել վարչական ակտով սահմանված պայմանը՝ կառուցապատողը համաձայնության չի եկել կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների՝ մասնավորապես, հայցվորի հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորին սեփականությամբ պատկանող տարածքը և կառուցապատվող տարածքը գտնվում են հարևանությամբ, և կառուցապատման արդյունքում հայցվորին վնաս է պատճառվում:

Այսինքն, Կառուցապատողը չի կատարել վարչական ակտի հետ կապված օրենքով նախատեսված պարտականությունները, որը պետք է կատարեր որպես այդ ակտի հասցեատեր:

Նշվածի արդյունքում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առկա է վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով սահմանված հիմքը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վերաքննիչ վարչական դատարանի իրավական դիրքորոշումներն այս մասով Սահմանադրական դատարանի գնահատման առարկա չեն կարող դառնալ, քանի որ չեն առնչվում վիճարկվող դրույթի Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց մեկնաբանությանը, իսկ հնարավոր դատական սխալների ուղղումը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակներից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ վարչական դատարանն Օրենքի վիճարկվող 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետի վերաբերյալ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Անդրադառնալով նույն հոդվածի նույն մասի «ե» կետով սահմանված՝ վարչական ակտի ուժը կորցրած ճանաչելու հիմքին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է. վարչական ակտը նշված մասի վկայակոչմամբ կարող է ուժը կորցրած ճանաչվել միայն այն դեպքում, եթե առկա են սույն մասով նշված բոլոր պահանջները, մասնավորապես.

վարչական ակտի ընդունումից հետո տեղի է ունեցել նորմատիվ իրավական ակտի փոփոխություն,

փոփոխությունը հանդիսանում է այնպիսին, որ փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունել սովյալ վարչական ակտը,

վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով իրեն տրամադրված օգուտներից,

վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը:

Տվյալ դեպքում պետք է քննարկման առարկա դարձնել նաև այն հանգամանքը, թե արդյոք պահպանված են նշված նորմով վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու բոլոր պայմանները:

Ինչպես արդեն վերը նշվել է, վարչական ակտի կայացումից հետո տեղի է ունեցել նորմատիվ իրավական ակտի փոփոխություն, սույն դեպքում պարզ է դառնում, որ եթե նորմատիվ իրավական ակտի փոփոխությունը տեղի ունենար մինչև վարչական ակտի կայացումը, ապա վարչական մարմինը հնարավորություն կունենար կայացնել այլ վարչական ակտ: **Ինչ վերաբերում է անձի կողմից վարչական ակտով իրեն տրամադրված օգուտներից օգտվելու հանգամանքին, ապա հարկ է նշել, որ սույն գործի քննության արդյուն-**

**քում պարզվեց, որ ակտի հասցեատերը դեռ չի իրացրել վարչական ակտով իրեն տրված իրավունքը, այսինքն՝ շինարարությունն իրականացված չէ:**

Անդրադառնալով վերը նշված նորմում կիրառվող «վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը» արտահայտությանը, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում վարչական ակտի ուժի մեջ մնալը կարող է հանգեցնել գերակայող հանրային շահի խախտման՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ եթե իրականացվի տվյալ շինարարությունը, ապա շենքերի միջև հեռավորությունը կլինի գործող իրավակարգավորման շրջանակներով սահմանվածից դուրս, որի արդյունքում խախտվում են ոչ միայն սեփականատիրոջ (հայցվորի), այլ հանրության շահերը, քանզի ցանկացած տարերային աղետի, հրդեհի և նմանատիպ իրավիճակներում անհրաժեշտություն է առաջանալու պաշտպանելու յուրաքանչյուր անձի իրավունքը, իսկ կառուցվելիք շենքն ուղղակիորեն ազդելու է անձանց իրավունքների պաշտպանություն իրականացնելու վրա: Հետևաբար, առաջացած վեճն իր էությունը շոշափում է ոչ միայն հայցվորի և երրորդ անձի սեփականության իրավունքները, այլև վերաբերում է բնակչության անվտանգությանը, որն իրենից ներկայացնում է գերակայող հանրային շահ:

Ամբողջ վերոգրյալի արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն դեպքում առկա են նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով սահմանված՝ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու անվերապահ հիմքեր և վարչական մարմինը նշված հիմքերի առկայության պայմաններում պարտավոր էր ուժը կորցրած ճանաչել երրորդ անձին տրված շինարարության թույլտվությունը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վերաքննիչ վարչական դատարանի դիրքորոշումից պարզ է դառնում, որ դատարանը վիճարկվող նորմը կիրառելիս **«իրեն տրամադրված օգուտներից օգտվելու»** ձևակերպմանը տվել է նեղ մեկնաբանություն, այն չի հիմնավորել, մասնավորապես՝ դատարանը չի անդրադարձել այն հարցին, թե ի՞նչ է նշանակում տրամադրված օգուտից օգտվելը, տվյալ դեպքում կատարված ո՞ր ծավալի աշխատանք(ներ)ը կարող

է գնահատվել որպես օգուտից օգտվել: Վերաքննիչ վարչական դատարանն արձանագրել է, որ **ակտի հասցեատերը դեռ չի իրացրել վարչական ակտով իրեն տրված իրավունքը, այսինքն՝ շինարարությունն իրականացված չէ:** Հետևաբար, ըստ Վերաքննիչ վարչական դատարանի մեկնաբանության, միայն **վարչական ակտով տրամադրված իրավունքի ամբողջ ծավալով իրացումը կարող է դիտարկվել որպես իրեն տրամադրված օգուտներից օգտվել:**

**Նման մեկնաբանությունը չի ապահովում անձի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը,** քանի որ ամբողջ օգուտներից մասնակիորեն օգտվելու հետևանքով անձը կրել է որոշակի վնասներ, որոնց առկայությունը՝ անկախ հետագայում դրանց հիմնավորվածությունն օրենքով սահմանված կարգով գնահատելու անհրաժեշտությունից և դրանց ծավալից, ըստ էության չի գնահատվել Վերաքննիչ վարչական դատարանի կողմից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ «վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից» դրույթը ներառում է ոչ միայն այդ ակտով ամրագրված որևէ իրավունքի կամ ազատության կամ բարենպաստ այլ պայմանի ամբողջական, այլև այդ իրավունքի կամ ազատության կամ պայմանի մասնակի իրականացումը հասցեատիրոջ կողմից, որը յուրաքանչյուր կոնկրետ գործի փաստական հանգամանքների շրջանակներում պետք է գնահատվի վարչական մարմնի, դատական պաշտպանության ժամանակ՝ նաև դատարանի կողմից:

3. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

30 ապրիլի 2019 թվականի  
ՍԴՈ-1458



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 419-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 մայիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ փաստաբան Ա. Վարդևանյանի, գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019  
135

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի ընդունումից հետո «Վճռաբեկ դատարանի լիազորությունները» վերտառությամբ 419-րդ հոդվածը փոփոխվել է երեք անգամ՝ ՀՕ-152-Ն օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի հուլիսի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2006 թվականի հուլիսի 12-ին և ուժի մեջ է մտել 2006 թվականի օգոստոսի 5-ից, ՀՕ-270-Ն օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 18-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 27-ից և ՀՕ-38-Ն օրենքով, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի փետրվարի 8-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի փետրվարի 26-ին և ուժի մեջ է մտել 2011 թվականի մարտի 19-ից:

Օրենսգրքի նշված հոդվածի վիճարկվող 2-րդ մասը սահմանում է.

«Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

Գործի քննության առիթը Ռեբերտ Քոչարյանի՝ 2019 թվականի հունվարի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործում առկա գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### 1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասի օրենսդրական ձևակերպման, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության և նույն Օրենսգրքում վճռաբեկ վարույ-



թում կալանքի իրավաչափության քննության ընթացակարգային և կառուցակարգային երաշխիքների բացակայության արդյունքում խախտվում են Սահմանադրության 27, 61, 63, 75 և 79-րդ հոդվածներում ամրագրված իր իրավունքները:

Դիմողը պնդում է, որ Օրենսգրքի 48-րդ գլխում ամրագրված մյուս դրույթները, որոնք համակարգային առումով փոխկապակցված են վիճարկվող իրավադրույթի հետ, վճռաբեկ վարույթում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու օրինականության և հիմնավորվածության քննության **ընթացակարգային և կառուցակարգային երաշխիքներ** չեն ապահովում, ինչը հանգեցնում է Սահմանադրության 27, 63 և 75-րդ հոդվածներում ամրագրված իրավունքների խախտման:

Ըստ դիմողի՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու օրինականության և հիմնավորվածության ստուգման իրավասությունն Օրենսգրքի 288-րդ հոդվածի հատուկ կարգավորմամբ օրենսդիրը վերապահել է վերաքննիչ դատարանին: Ի տարբերություն նշված հոդվածի, որով սահմանվում են կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու օրինականության և հիմնավորվածության ստուգման հատուկ կարգավորումներ և հստակ ժամկետներ, Օրենսգրքի 48-րդ գլխում՝ Վճռաբեկ դատարանի կողմից դրանք վարույթ ընդունելու հիմնավորումների, քննության սեղմ ժամկետների, ընթացակարգային այլ առանձնահատկությունների վերաբերյալ կարգավորումներ առհասարակ առկա չեն, ինչի արդյունքում խաթարվում են անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված անձնական ազատության, արդյունավետ դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքները և այդ իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովման սահմանադրական պահանջը:

Դիմողի համոզմամբ՝ Օրենսգրքով նախատեսված չեն նշված բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ, և դրանք թողնվել են **Վճռաբեկ դատարանի բացարձակ հայեցողությանը**:

Դիմողը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի իրավակիրառ պրակտիկան, եզրակացնում է, որ **իրավունքի բացի** գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների քննության հստակ ժամկետների, ընթացակարգային և կառու-

ցակարգային երաշխիքների բացակայության արդյունքում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ Վճռաբեկ դատարանը՝ իր սահմանադրական կարգավիճակով հանդիսանալով անձի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության միջոց, արձանագրում է մարդու իրավունքների խախտում, սակայն դրանց վերացման ուղղությամբ **որևէ միջոց չի ձեռնարկում**, «քանի որ որոշումները կայացվում են այն աստիճանի ոչ ողջամիտ ժամկետներում և անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների բացակայության պայմաններում, որ իմաստագրվում է արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը»: Դիմողը նշում է դեպքեր, երբ Վճռաբեկ դատարանը կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու օրինականությունը և հիմնավորվածությունն ստուգելու արդյունքում գտել է, որ դրա կիրառումը եղել է ոչ հիմնավոր և ոչ պատճառաբանված, սակայն արդեն ոչ միայն ավարտված է եղել կալանքի ժամկետը, այլ նաև անձի նկատմամբ կայացված է եղել դատավճիռ:

Դիմողը փաստում է, որ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Օրենսգրքի 394-րդ հոդվածի կարգավորումներին, դիրքորոշում է արտահայտել, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում նոր դատական ակտերի կայացմանը վերաբերող օրենսդրական ձևակերպումն անորոշ է, օրենքը չի հստակեցնում «նոր դատական ակտ» հասկացությունը և չի սահմանում, թե վերաքննիչ դատարանի ո՞ր որոշումներն են համարվում «նոր դատական ակտ», և այդ անորոշությունից խուսափելու նպատակով գտել է, որ գործն ըստ էության չլուծող ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելիս պետք է ղեկավարվել Օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով գործն ըստ էության լուծող ակտերի վերաբերյալ սահմանված լիազորություններով: Դիմողի պնդմամբ՝ Վճռաբեկ դատարանի կողմից նորմի ենթադրյալ անորոշության հաղթահարման, **միատեսակ կիրառման կանոնների ապահովմանն ուղղված որևէ գործողություն չի կատարվել**. վիճարկվող նորմին տրված մեկնաբանությամբ Վճռաբեկ դատարանը փաստացի վերազանցել է Սահմանադրությամբ և Օրենսգրքով իրեն վերապահած լիազորությունների շրջանակը: Դիմողը համարում է, որ այդ պարագայում Վճռաբեկ դատարանը դադարում է հանդես գալ որպես «օրենքի հիման վրա ստեղծված դատարան»:

Դիմողի կարծիքով՝ օրենսդիրը գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի նկատմամբ ցուցաբերել է տարբերակված մոտեցում, և Օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «նոր դատական ակտ» եզրույթը *prima facie* հստակ է և նպատակ է հետապնդում գործն ըստ էության չլուծող դատական ակտերով բարձրացված խնդրի վերջնական լուծումն ապահովել առավել սեղմ ժամկետներում: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի մասով գործն ըստ էության լուծող դատական ակտերի համար նախատեսված լիազորությունների իրացումը խաթարում է դրանց տարանջատման օրենսդրական իրավաչափ նպատակը և հանգեցնում է, ի թիվս այլնի, արդար դատաքննության իրավունքի խախտման, այդ թվում՝ գործերի ողջամիտ ժամկետներում քննության տեսանկյունից:

Դիմողը գտնում է, որ ստեղծված իրավիճակում խնդրի լուծում կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի կողմից «նոր դատական ակտ» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը, քանի որ իրավական որոշակիության խնդիր է առաջացրել հենց Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունը, որն իրացվել է ոչ թե օրենքի միատեսակ կիրառման ապահովման նպատակով, այլ հակասության մեջ մտնելով դատական ակտերի նկատմամբ օրենսդրի տարբերակված մոտեցման հետ՝ հանգեցրել է նրան, որ Վճռաբեկ դատարանն իր համար սահմանել է նոր լիազորություն:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի՝ արդարադատության բարձրագույն ատյանի և օրենքի միատեսակ կիրառությունն ապահովող մարմնի կոչմանը համահունչ, օրենսդիրն իր օրենսդրական գործունեության շրջանակներում հետևողականորեն ամրապնդել և զարգացրել է քրեական դատավարության ընթացքում գործն ըստ էության չլուծող դատական ակտերի քննարկվող գործով կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական գործոնով պայմանավորված կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները, որոնք բխում են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքում արտահայտված իրավական դիրքորոշումներից:

Պատասխանողի կարծիքով՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի ընդունմամբ պայմանավորված՝ յուրաքանչյուր գործի առանձնահատկությունից բխող ողջամիտ ժամկետում, մասնավորապես՝ քննարկվող գործի շրջանակներում անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու և վերջինիս բողոքարկման յուրաքանչյուր դեպքում օրենսդրի կողմից որդեգրված հայեցակարգին համահունչ, պետք է գնահատվի ազատության իրավունքի սահմանափակման աներկբա անհրաժեշտությունն ավելի բարձր նշանակության բարիքի, քաղաքակիրթ մարդկության կողմից առավել արժևորվող հանրային շահի պաշտպանության տեսանկյունից՝ ապահովելով հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռությունը, ազատության սահմանափակման հիմնավորվածությունը, հսկողական և վերահսկողական գործուն մեխանիզմների առկայությունը:

Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայի վերլուծության արդյունքում պատասխանողը եկել է այն հետևության, որ դիմողի պնդումն առ այն, որ կալանքի գործերով քննության հստակ ընթացակարգեր և կառուցակարգեր չսահմանելն առաջացրել է իրավունքի բացի հիմնախնդիրներ, անհիմն է, քանի որ քննարկվող սահմանադրաիրավական վեճի առարկան չի պարունակում նման իրավական խնդիր:

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից հստակ ժամկետներ չսահմանվելու վերաբերյալ դիմողի կողմից բարձրացված հարցին, ապա պատասխանողը նշում է, որ «թե՛ վերաքննության, թե՛ վճռաբեկության վարույթի քրեադատավարական հայեցակարգերի համաձայն, գործն ըստ էության չլուծող դատական ակտերի, մասնավորապես՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս, քրեադատավարական նորմերի համաձայն՝ երկու դեպքում էլ նախատեսվում է գործի քննության ողջամիտ ժամկետ (Օրենսգրքի 388-րդ և 417-րդ հոդվածներ)»:

Ըստ դիմողի՝ օրենսդիրը, սահմանելով «ողջամիտ ժամկետ» եզրույթը, ցուցաբերել է միասնական մոտեցում վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների նկատմամբ:

Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին:

**3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հանգամանքները**

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերի պարզաբանմանը.

1) ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու անձի՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված հիմնական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանությունը ներառում է արդյոք *ազատությունից զրկելու իրավաչափությունը վճռաբեկ ատյանում քննելու պարտադիր պահանջ*,

2) վերադաս դատարանի կողմից կալանքի իրավաչափության վերաբերյալ սեղմ ժամկետում որոշում կայացնելու մասին Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը *վերաբերում է արդյոք նաև Վճռաբեկ դատարանին*,

3) վճռաբեկ վարույթում կալանավորման իրավաչափությունը քննելու տեսանկյունից առկա է արդյոք օրենսդրական բաց, և հանգեցնում է այն արդյոք Սահմանադրության 27, 63 և 75-րդ հոդվածներում սահմանված պահանջների խախտման,

4) Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից *թույլատրելի է արդյոք վճռաբեկ ատյանում՝ կալանավորման իրավաչափության հարցի քննության արդյունքում սահմանափակվել միայն հիմնական իրավունքի խախտման փաստի արձանագրմամբ՝ առանց խախտումը վերացնելու*,

5) Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասից և 172-րդ հոդվածից բխում է արդյոք, որ *վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում միջանկյալ դատական ակտերի վերանայման ծավալները պետք է նույնական լինեն*,

6) Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից վերաքննիչ և վճռաբեկ ատյանների դատարանների՝ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասով և 172-րդ հոդվածով սահմանված գործառույթների շրջանակներում *գործն ըստ էության չլուծող* դատական ակտերի վերանայման արդյունքում իրականացվող *լիազորությունները պե տք է արդյոք տարբերվեն գործն ըստ էության լուծող* դատական ակտերի վերանայման արդյունքում իրականացվող *լիազորություններից*,

7) Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և 171-րդ հոդվածի տեսանկյունից *իրավասու է արդյոք Վճռաբեկ դատարանը գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ ընդունելու իր լիազորությունը մեկնաբանել որպես օրենքով սահմանված իր լիազորությունների բովանդակությունը սեփական որոշմամբ փոփոխելու իրավական հնարավորություն:*

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է Վճռաբեկ դատարանի լիազորությունները՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում, իսկ դիմողի կողմից վիճարկվող 2-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի (այսուհետ՝ նաև միջանկյալ դատական ակտեր) վերանայման արդյունքում: Համաձայն հիշյալ հոդվածի 1-ին մասի՝ Վճռաբեկ դատարանն իրավասու է իրականացնել **վեց լիազորություն, այդ թվում՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը և բեկանված մասով գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:**

Օրենսգրքի 419-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասով Վճռաբեկ դատարանին վերապահվում է **երկու լիազորություն՝** մերժել վճռաբեկ բողոքը՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ **կայացնել նոր դատական ակտ,** որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

Օրենսգրքի հիշյալ դրույթների համադրումը վկայում է, որ օրենսդիրը նպատակային է տարբերակել գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանի լիազորությունների բովանդակությունը և ծավալները: Մի դեպքում՝ օրենսդիրը Վճռաբեկ դատարանին վերապահել է առավել ընդգրկուն լիազորություններ, մեկ այլ դեպքում՝ նրա լիազորությունները սահմանափակել է երկու այլընտրանքով: Ընդ որում, **Սահմանադրական դատարանի համար ակնհայտ է, որ օրենսդիրը երկրորդ դեպքում Վճռաբեկ դատարանի առջև պահանջ է դրել միջանկյալ դատական ակտի վերաբերյալ կայացնել հետևյալ որոշումներից որևէ մեկը՝** մերժել վճռաբեկ բողոքը՝ վիճարկվող դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ վճռաբեկ վարույթում կայացնել նոր դատական ակտ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, տարանջատելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքերում, ինչպես նաև սահմանափակելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում **նոր դատական ակտեր ընդունելու պահանջով**, օրենսդիրը հետապնդել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ **դատավարական շրջապտույտը կանխելու**, ընդամին այդ հարցերով **վճռաբեկ ատյանում վերջնական իրավական դիրքորոշում ձևավորելու** և այն ամրագրելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակներ:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այս կարգավորումն ունի կանխարգելիչ բնույթ և ուղղված է **վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքի** տեսանկյունից գործով ըստ էության վերջնական որոշում կայացնելու հիմնական գործառույթի երաշխավորված ապահովմանը, ինչը հնարավոր չի լինի իրականացնել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման դեպքում:

Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման իրավական հնարավորությունը, որը կարող էր առկա լինել Վճռաբեկ դատարանի առավել ընդգրկուն լիազորությունների օրենսդրական ամրագրման դեպքում, կարող էր էականորեն ազդել ինչպես ստորադաս դատարաններում, այնպես էլ նույն վճռաբեկ ատյանում տվյալ գործի ըստ էության քննության վրա՝ խաթարելով դրա արդյունավետությունը: Ավելին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործն ըստ էության չլուծող դատական ակտերն անսահմանափակ վերանայելու հնարավորությունն օրենսդրորեն չկանխելը կարող էր վտանգել արդարադատության բուն գործառույթը, քանի որ անհնարին կլիներ կանխատեսել միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումների իրական կամ հնարավոր ազդեցությունը գործի ըստ էության լուծման վրա, ուստի՝ վերջնարդյունքում կա մ դատաքննության տևողությունը պետք է անհարկի երկարաձգվեր, կա՛մ դատարանները միջանկյալ դատական ակտերի քննությանը պետք է հարկադրված լինեին անդրադառնալ գործով ըստ էության որոշում կայացնելուց հետո, ինչն անթույլատրելի կլիներ:

**4.2.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կալանքի կիրառման նկատմամբ դատական վերահսկողության օրենսդրական կարգավորումների բովանդակությունը հիմնականում հանգում է հետևյալին.

1) հաշվի առնելով կալանավորման՝ որպես անձնական ազատությանն առավել ինտենսիվ միջամտության ձևերից մեկի բնույթը՝ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել է **առաջին ատյանի դատարանում նախնական դատական վերահսկողություն** կալանավորման իրավաչափության նկատմամբ (Քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդված՝ համակցված 278 և 136-րդ հոդվածների հետ), որը ներառում է.

ա) կալանքը՝ որպես խափանման միջոց, **միայն դատարանի որոշմամբ** կիրառելը (Քրեական դատավարության օրենսգրքի 280-րդ հոդված),

բ) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի կամ դատախազի միջնորդության **ամբողջական**, այսինքն բոլոր փաստական և իրավական հանգամանքների համակցության մեջ, **քննությունն առաջին ատյանի դատարանում** (Քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մաս), մասնավորապես՝ կալանքի հիմնավորվածությունն ստուգելու նպատակով կալանքի վերաբերյալ միջնորդության հիմնավորվածությունն ստուգելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և իրեղեն ապացույցներ, ինչպես նաև կալանքի վերաբերյալ միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ պահանջելու լիազորությունների իրականացման միջոցով (Քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 4-րդ մաս՝ համակցված 283-րդ հոդվածի 3-րդ մասի հետ),

գ) կալանավորման մասին որոշում կայացնելիս մեղադրյալին **գրավով կալանքից ազատելու հարցը լուծելու**՝ առաջին ատյանի դատարանի **պարտականությունը** (Քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մաս),

դ) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության **անհասպաղ քննությունն** առաջին ատյանի դատարանում (Քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մաս),

2) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան (Քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մաս), որը



ա) սահմանափակ վերաքննության, այսինքն՝ **ընդհանուր կարգով** ստուգում է առաջին ատյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը (Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մաս),

բ) ստանալով բողոքը, պարտավոր է **անհապաղ պահանջել կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և առաջին ատյանի դատարանի որոշումը** (Քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 3-րդ մաս),

գ) հիշյալ նյութերն ստանալու օրվանից հետո՝ Օրենսգրքում հստակ սահմանված **սեղմ ժամկետում**՝ 3 օրվա ընթացքում, պետք է որոշում կայացնի առաջին ատյանի դատարանի որոշման վերաբերյալ (Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մաս),

դ) կալանավորման օրինականությունը և հիմնավորվածությունն ստուգելու արդյունքում **իրավասու է անմիջականորեն լուծել կալանքի հարցը**, մասնավորապես՝ վերացնել կալանքը և անձին ազատել դրանից (Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մաս), այսինքն՝ կալանավորման իրավաչափությունը գնահատելու մասով Քրեական դատավարության օրենսգրքը կոնկրետացնում է այդ օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակը՝ **հատուկ դրույթների միջոցով առավելագույնս հստակեցնելով** դրանք, ներառյալ այդ հարցով վերաքննիչ դատարանի կողմից **նոր դատական ակտ կայացնելու լիազորության բովանդակությունը և ծավալը**,

3) կալանքի վերաբերյալ վերաքննիչ ատյանի որոշումները կարող են բողոքարկվել Վճռաբեկ դատարան (Քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդված և 404-րդ հոդվածի 1-ին մաս), ընդ որում, ի տարբերություն առաջին և վերաքննիչ ատյանների՝ վճռաբեկ ատյանում կալանքի օրինականությունը և հիմնավորվածությունը քննելու համար **սահմանված չեն առանձնահատկություններ**, ինչը նշանակում է, որ

ա) կալանքի օրինականության և հիմնավորվածության հարցով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելիս Վճռաբեկ դատարանը լուծում է **ընդհանուր՝ 3-ամսյա ժամկետում** (Քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 5-րդ մաս),

բ) կալանքի օրինականության և հիմնավորվածության հարցով վճռաբեկ բողոքը բերվում է վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված **ընդհանուր հիմքերով** և ընդունվում է քննության, եթե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը **կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, կամ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում** (Քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդված՝ համակցված 414<sup>2</sup>-րդ հոդվածի հետ),

գ) կալանքի օրինականության և հիմնավորվածության հարցով վճռաբեկ ատյանում քննությունն իրականացվում է **ընդհանուր կարգով՝ ողջամիտ ժամկետում**:

Հիմք ընդունելով վերոնշյալ օրենսդրական կարգավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը տարանջատել է կալանքի ձևով անձնական ազատությունից զրկելու առնչությամբ մինչդատական վարույթի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգերը տարբեր դատական ատյաններում: Եթե առաջին ատյանի դատարանն **ամբողջ ծավալով** պետք է **նախապես վերահսկի** կալանավորման իրավաչափությունը՝ այդ հարցով կայացնելով սկզբնական որոշում, ապա վերաքննիչ և վճռաբեկ ատյանների դատարանները **պետք է հետազայում որոշեն արդեն դատական ակտի իրավաչափության հարցը**՝ համապատասխան բողոքի առկայության դեպքում և այդ բողոքի առարկայի շրջանակներում:

Այսպիսով՝ օրենսդիրն առաջին ատյանի դատարանի համար սահմանել է կալանավորման իրավաչափությունն ստուգելու ամբողջական լիազորություն և հատուկ ժամկետ, վերաքննիչ դատարանի համար պահպանել է սահմանափակ վերանայման ընդհանուր կանոնը՝ նույնպես սահմանելով հատուկ ժամկետ, ընդ որում՝ ի բացառություն միջանկյալ դատական ակտերի վերանայման համար սահմանված ընդհանուր լիազորությունների (Քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մաս)՝ կալանավորման իրավաչափությունը վերանայելու համար սահմանել է հատուկ լիազորություններ (Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մաս), իսկ Վճռաբեկ դատարանում կալանավորման իրավաչափության հարցով որևէ առանձնահատկություն չի սահմանել:

Հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ը՝ Ուկրաինայի դեմ մի շարք վճիռներում գտել է, որ անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը խախտվել է, որովհետև Քրեական դատավարության օրենսգիրքը որևէ տարբերություն չի նախատեսել ազատությունից զրկված անձին ազատ արձակելու մասին միջնորդությունների և դատական քննության ընթացքում այլ միջնորդությունների միջև, և գտել է, որ այդ խնդիրը պարբերաբար առաջանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներին բավարարող ընթացակարգը կարգավորող հստակ և կանխատեսելի դրույթների բացակայության պատճառով (տե՛ս *Nechiporuk and Yonkalo v. Ukraine*, app. no. 42310/04, 21/04/2011, §248; *Molodorych v. Ukraine*, app. no. 2161/02, 28/10/2010, §108; *Kharchenko v. Ukraine*, app. no. 40107/02, 10/02/2011, §86 և այլն):

**4.3.** Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրավունք ունի վիճարկելու իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը, որի վերաբերյալ դատարանը սեղմ ժամկետում որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ, եթե Սահմանադրության նույն հոդվածի 4-րդ մասի պահանջը՝ անձին անազատության մեջ պահելը թույլատրելու վերաբերյալ դատարանի կողմից անհապաղ որոշում կայացնելու կամ ազատ արձակելու մասին, վերաբերում է միայն անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքերին և ենթադրում է այդպիսի միջնորդության հարուցում իրավասու մարմնի կողմից, ապա ազատությունից զրկելու իրավաչափության վիճարկման անձի իրավունքը վերաբերում է անձնական ազատությունից զրկելու բոլոր դեպքերին և ենթադրում է կալանքը կիրառելու մասին որոշման բողոքարկում այդ անձի կողմից:

Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքերում ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկելու իրավունքի իրականացման միջոց է կալանքը

որպես խափանման միջոց կիրառելու մասին առաջին և վերաքննիչ ատյանների դատարանների որոշումների բողոքարկումը համապատասխան վերադաս դատարանում:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ **Վճռաբեկ դատարանի՝ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված գործառույթներով պայմանավորված առանձնահատուկ հիմքերի** առկայությամբ այս իրավունքը կարող է ներառել նաև **վճռաբեկ ատյանում ստորադաս դատարանի դատական ակտի վերանայման հնարավորությունը** սահմանելու պահանջ:

Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը նշում է, որ այս իրավունքը փոխկապակցված է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի հետ: Արդյունավետ դատական պաշտպանությունը չի կարող ենթադրել ըստ էության որոշում կայացնելուն զուգահեռ այլ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դատավարական շրջապտույտ: Դա համատեղելի չի լինի նաև իրավական պետության բաղադրիչ հանդիսացող իրավական անվտանգության ապահովման պահանջի հետ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունը չի պահանջում գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վիճարկման դեպքում բոլոր այդպիսի ակտերի պարտադիր քննություն վերաքննության կարգով, բացառությամբ կալանավորման իրավաչափության հարցով կայացված առաջին ատյանի դատարանի որոշման, ինչպես նաև ինքնին չի պահանջում կալանավորման իրավաչափության քննության հնարավորություն վճռաբեկ վարույթի շրջանակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ կալանքի կիրառման որոշումը կայացրել է վերաքննիչ դատարանը, քանի որ միջանկյալ հարցերի քննությունը կարող է նաև անհարկի ծանրաբեռնել դատարանները և խոչընդոտել ողջամիտ ժամկետում բուն արդարադատության իրականացումը, ինչը կարող է հակասության մեջ մտնել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմնական իրավունքի հետ:

Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ դատական ակտերի վիճարկման ընթացակարգի սահմանումը վերապահված է օրենսդրի հայեցողությանը, սակայն օրենսդրի կողմից ընտրված լուծումները պետք է ապահովեն **բոլոր դատական ատյաններում արդարադատության արդյունավետ իրականացումը:**

Ուստի, եթե օրենսդիրը որոշել է սահմանել միջանկյալ դատական ակտերի մի մասի՝ Հայաստանի Հանրապետությունում կառուցակարգված եռաստիճան դատական համակարգի շրջանակներում վիճարկելու հնարավորություն, ապա բոլոր դատական ատյաններում՝ նրանց սահմանադրական գործառույթների սահմանների հաշվառմամբ, պետք է նախևառաջ օրենսդրորեն ապահովվեն **դատական պաշտպանության արդյունավետությունը և արդար դատաքննության երաշխիքները**:

ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, որն ամրագրում է կալանավորման օրինականությունը վիճարկելու անձի իրավունքը, **Պայմանավորվող կողմերին չի պարտավորեցնում կալանավորման օրինականության քննության և անձին ազատ արձակելու վերաբերյալ դիմումների քննության համար ունենալ մեկից ավելի դատական ատյաններ**: Այնուամենայնիվ, եթե պետությունը նախատեսում է իրավասության երկրորդ մակարդակ, ապա, որպես կանոն, կալանավորվածներին պետք է տրամադրվեն դատավարական նույն երաշխիքները, որոնք նախատեսված են առաջին ատյանում, այդ թվում՝ վերադաս դատարանի կողմից կալանքի կիրառման վերաբերյալ ստորադաս դատարանի որոշման վերանայման արագությունը (*Ilseher v. Germany*, 4 December 2018, GC app. no. 10211/12, 27505/14, §254; *Navarra v. France*, 23 November 1993, §28, Series A no. 273 B; *Khudobin v. Russia*, 26 October 2006, app. no. 59696/00, §124 ECHR 2006 XII; *Piotr Baranowski v. Poland*, app. no. 39742/05, §63, 2 October 2007; *S.T.S. v. The Netherlands*, 7 June 2011, app. no. 277/05 §48 ): Նույնը վերաբերում է անգամ այն սահմանադրական դատարաններին, որոնք որոշում են անձին կալանքի տակ պահելու օրինականության հարցը և նրան ազատելու որոշում են կայացնում, եթե կալանավորումն օրինական չէ (*Smatana v. the Czech Republic*, app. no. 18642/04, §123, 27 September 2007; and *Mercan v. Turkey (dec.)*, app. no. 56511/16, §24, 8 November 2016): Վերադաս ատյաններում թույլատրելի համարելով առաջին ատյանի համեմատ փոքրինչ ավելի երկար ժամկետում կալանքի իրավաչափության հարցի քննությունը՝ այնուհանդերձ, ՄԻԵԴ-ը գտել է, որ դա վերադաս ատյանին չի ազատում Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված իր պարտականությունից՝ արագորեն որոշելու դիմումատուի

կալանքի օրինականությունը, որպեսզի երաշխավորվի, որ որոշման արագ կայացման իրավունքը շարունակաբար գործնական և արդյունավետ է (Inseher v. Germany, 4 December 2018, GC app. no. 10211/12, 27505/14, §273):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով թույլատրվելու դեպքում **գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վիճարկումը վճարել ատյանում պետք է լինի բացառություն, այլ ոչ թե կանոն**՝ այնպես, ինչպես վերաքննիչ ատյանում չեն կարող վիճարկվել առաջին ատյանի դատարանի բոլոր միջանկյալ դատական ակտերը: Միննույն ժամանակ, գործն ըստ էության չլուծող դատական ակտերը վճարել ատյանում վիճարկվելու դեպքերում նաև վճարել վարույթում պետք է ապահովվեն արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության անհրաժեշտ նախադրյալներ: Այս առումով Սահմանադրական դատարանը Կառավարության և Ազգային ժողովի ուշադրությունն է հրավիրում կալանավորման իրավաչափության հարցով վճարել բողոքը եռամսյա ժամկետում քննության ընդունելու մասով վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 5-րդ մասի վրա: Հաշվի առնելով սկզբնական կալանավորման և դրա յուրաքանչյուր երկարացման ժամկետի առավելագույն տևողությունը, որը սահմանված է Օրենսգրքի 138-139-րդ հոդվածներով՝ ակնհայտ է, որ օրենսդիրը հնարավորություն է տվել, որ մինչև Վճարել դատարանի կողմից կալանավորման իրավաչափության հարցը քննության ընդունելն այդ կալանավորումն արդեն իսկ իրեն սպառած լինի:

**4.4.** Համաձայն Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Վճարել դատարանի գործառույթներն են դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելը, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Վճարել դատարանի գործառույթները Սահմանադրության մեջ ամրագրված են սպառիչ, իսկ իրավունքի զարգացմանը նպաստելն առանձին գործառույթ չէ և պետք է իրականացվի միայն Սահմանադրությամբ սահմանված գործառույթների շրջանակներում՝ որպես օրենքով

սահմանված լիազորությունների միջոցով դրանք իրականացնելու արդյունք: Բացի դրանից, որևէ դատարանի կողմից իրավունքի խախտումը փաստելը՝ առանց այն վերացնելու, նշանակում է չիրականացնել արդարադատություն, մինչդեռ, եթե դատարանը կոչված է վերանայելու ստորադաս դատարանների դատական ակտերը (իսկ Վճռաբեկ դատարանի համար այդ պահանջն ուղղակիորեն սահմանված է Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում), ապա չի կարող չիրականացնել արդարադատություն, այսինքն, նաև չվերացնել հիմնական կամ այլ իրավունքների և ազատությունների խախտումները, հատկապես եթե արձանագրում է դրանք: Ակնհայտ է, որ որևէ նման օրենսդրական կառուցակարգ կամ դատական պրակտիկա հակասության մեջ կմտնեն Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ, ընդ որում, նման դեպքերում երաշխավորված չեն լինի նաև արդար դատաքննության երաշխիքները:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից ընտրված՝ **վճռաբեկ ատյանում ազատությունից զրկելու հարցի իրավաչափության քննությունն ընդհանուր հիմունքներով իրականացնելու վերաբերյալ լուծումները**, այդ թվում՝ վճռաբեկ բողոքը ողջամիտ ժամկետում քննելու ընթացակարգը, **Սահմանադրության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չեն:**

Ինչ վերաբերում է սկզբնական կալանավորման և դրա յուրաքանչյուր երկարացման ժամկետի առավելագույն տևողությունը գերազանցող կալանքի իրավաչափության հարցով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու՝ Օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված 3-ամսյա ժամկետն ամրագրող դրույթին, ապա, թեև այն համակարգային առումով փոխկապակցված է վիճարկվող դրույթի հետ, այդուհանդերձ, դրա սահմանադրականության հարցին Սահմանադրական դատարանը չի կարող անդրադառնալ հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի փոխկապակցված 69-րդ հոդվածի 13-րդ մասի հետ, պահանջն առ այն, որ միայն վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող ճանաչելու դեպքում է Սահմանադրական դատարանն իրավասու անդրադառնալ նաև վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթների սահմանադրականությանը:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությանը կանխորոշված դեպքերից բացի վճռաբեկ ատյանում գործն ըստ էության չլուծող դատական ակտերը կարող են վիճարկվել միայն առանձնահատուկ դեպքերում, եթե օրենսդիրը դա թույլատրելի համարի՝ ելնելով Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառույթներից:

Մյուս կողմից՝ օրենսդիրը պարտավոր է սահմանել վճռաբեկ ատյանում արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության անհրաժեշտ նախադրյալներ՝ այն հաշվով, որ Վճռաբեկ դատարանը, հանգելով որևէ իրավունքի կամ ազատության խախտման մասին եզրակացության, պարտադիր կարգով և արդյունավետ ընթացակարգի շրջանակներում, իրականացնելով արդարադատություն, վերացնի այդ խախտումը: Սահմանադրական դատարանը հարկ է համարում հատուկ շեշտել, որ դա վերաբերում է հատկապես անձնական ազատությանն այնպիսի ինտենսիվ միջամտության եղանակին, ինչպիսին կալանավորումն է, որի իրավաչափության վերաբերյալ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը, ինչպես պահանջում է նաև Օրենսգրքի համակարգային տրամաբանությունը, պետք է լուծվի այնպիսի սեղմ ժամկետներում, որոնք հնարավորություն կտան այդ հարցը լուծել, որպես կանոն, առնվազն չգերազանցելով վերանայվող դատական ակտի հիման վրա որպես խափանման միջոց ընտրված կալանքի առավելագույն ժամկետը: Անկախ դրանից հաշվի առնելով այն փաստը, որ կալանքն անձնական ազատությանը միջամտության առավել ինտենսիվ եղանակներից մեկն է, թեև կալանքի հարցով քննությունը Վճռաբեկ դատարանում կարող է իրականացվել ողջամիտ ժամկետում և ընդհանուր հիմքերով, այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը պետք է հաշվի առնի, որ ողջամիտ ժամկետի պահանջն այս դեպքում նշանակում է էապես ավելի կարճ ժամկետ, քան գործն ըստ էության լուծող դատական ակտերի վիճարկման դեպքերում:

Սահմանադրական դատարանը շեշտում է, որ ազատությունից զրկելու իրավաչափության վերաբերյալ որոշումը Սահմանադրության 27-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված սեղմ ժամկետում կայացնելու սահմանադրական պահանջից բխում է, որ նաև Վճռաբեկ դատարանը գործի քննության ողջամիտ ժամկետը մեկնաբա-



ներիս պարտադիր պետք է հաշվի առնի գործի բոլոր հանգամանքները քննության առնելու և **հնարավոր սեղմ ժամկետում** որոշում կայացնելու սահմանադրական պահանջը:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ որքան ավելի ինտենսիվ է միջամտությունն անձի հիմնական և այլ իրավունքներին և ազատություններին, այնքան ավելի սեղմ ժամկետներում դատարանները, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանը, օրենքով սահմանված արդյունավետ կառուցակարգերի և ընթացակարգերի շրջանակներում՝ արդար դատաքննության բոլոր երաշխիքների պահպանմամբ, պետք է քննության առնեն և քննեն այդ միջամտությունից արդյունավետորեն պաշտպանվելու նպատակով ներկայացված պահանջները (բողոքները):

4.5. Դիմողն Օրենսգրքի վիճարկվող դրույթի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենսգրքի 48-րդ գլխի սահմանադրականության հարցը բարձրացնում է նաև օրենսդրական բացի տեսանկյունից՝ գտնելով, որ հիշյալ դրույթները հակասում են Սահմանադրության 27, 63 և 75-րդ հոդվածներին «այնքանով, որքանով որ չեն ապահովում վճռաբեկ դատարանի վարույթում կալանքի քննության ընթացակարգային և կառուցակարգային երաշխիքներ...»:

Սահմանադրական դատարանը նախկինում բազմիցս անդրադարձել է իրավունքի, մասնավորապես, նաև օրենսդրական բացի հիմնահարցին: Ըստ Սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների ընդհանուր տրամաբանության՝

1) «Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:... օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ **առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ**

համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը» (ՄԴՈ-914),

2) «Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ **իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման** հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը» (ՄԴՈ-1143),

3) «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է **իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք» (ՄԴՈ-864):

Ենթադրյալ օրենսդրական բացի տեսանկյունից վերլուծելով Օրենսգրքի վիճարկվող և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 48-րդ գլխի դրույթները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրն ամբողջությամբ կարգավորել է վարույթը Վճռաբեկ դատարանում և սահմանել է վճռաբեկ բողոքների կայացնելու իրավունքին, դրա հիմքերին և բովանդակությանը, այն վարույթ ընդունելու (առանձնահատուկ) հիմքերին, Վճռաբեկ դատարանում գործի քննության սահմաններին, Վճռաբեկ դատարանում

րանի նիստի նախապատրաստմանը, Վճռաբեկ դատարանի լիազորությունների շրջանակին, արդարացման դատավճռի բեկանման առանձնահատկություններին, Վճռաբեկ դատարանի որոշումների բովանդակությանը և Վճռաբեկ դատարանի կողմից դատավճիռը կամ որոշումը բեկանելու դատավարական հետևանքներին վերաբերող կանոններ: Օրենսդիրը սահմանել է նաև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և այն քննելու ժամկետները, ուստի դա չի կարող դիտվել որպես օրենսդրական բաց, իսկ ժամկետների սահմանադրականության հարցին Սահմանադրական դատարանն արդեն անդրադարձել է սույն որոշման մեջ:

Հետևապես, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթում և 48-րդ գլխում օրենսդիրն ամբողջությամբ կանոնակարգել է վարույթը վճռաբեկ ատյանում՝ սահմանելով իր կողմից կարևորված բոլոր առանձնահատկությունները, որոնք այդ վարույթը տարբերակում են առաջին և վերաքննիչ ատյանների վարույթից:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ վարույթի առումով **Օրենսգրքի իրավակարգավորումներում առկա իրավական երաշխիքների հիման վրա կարող էր ձևավորվել համարժեք իրավակիրառ պրակտիկա:**

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի քննության առարկայի շրջանակներում Օրենսգրքի 48-րդ գլխում **առկա չէ օրենսդրական բաց, ուստի Սահմանադրության 27, 63 և 75-րդ հոդվածների տեսանկյունից վիճարկվող դրույթը և Օրենսգրքի՝ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված մյուս դրույթները խնդրահարույց չեն:**

**4.6.** Համադրելով Վճռաբեկ դատարանի գործառույթների վերաբերյալ սահմանադրական կարգավորումը վերաքննիչ դատարանների գործառույթն ամրագրող Սահմանադրության 172-րդ հոդվածի հետ, համաձայն որի՝ վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են, Սահմանադրական դատարանը քննված գործի շրջանակներում արձանագրում է, որ.

1) վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքն ածանցվում է Սահմանադրության հիշյալ պահանջներից՝ համակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ, և ենթա-

դրում է վերանայման ծավալի սահմանափակում՝ առաջին ատյանի դատարաններից մինչև Վճռաբեկ դատարան «որքան ավելի բարձր է դատական ատյանը, այնքան ավելի սահմանափակ է վերանայման ծավալը» կանոնի համաձայն,

2) ըստ էության դատական ակտերի վերանայումը վերադաս դատարանների հիմնական գործառույթն է՝ արդարադատության էությունը, իսկ նրանց այլ լիազորությունների շրջանակն օրենսդրի կողմից՝ Սահմանադրությամբ կանխորոշված դեպքերից բացի, կարող է էլ ավելի սահմանափակվել՝ ելնելով արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ապահովելու անհրաժեշտությունից,

3) գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը՝ ի տարբերություն գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման, կարող է իրականացվել միայնացից զգալիորեն տարբերակված կանոնների համաձայն՝ այն հաշվով, որ պատշաճ կերպով ապահովվի գործն ըստ էության լուծող դատական ակտերի արդյունավետ և արդարացի քննությունը բոլոր դատական ատյաններում, ուստի և կանխվի այդ հարցերով դատավարական շրջապտույտը և դրա ազդեցությունը բուն արդարադատության արդյունավետության վրա:

Վերոգրյալի տեսանկյունից անդրադառնալով վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում միջանկյալ դատական ակտերի վերանայման ծավալների խնդրին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքում որդեգրված լուծումները՝ վերաքննիչ ատյանում վիճարկվող միջանկյալ դատական ակտերի շրջանակը սահմանափակելը, իսկ վճռաբեկ ատյանում՝ այդ սահմանափակ շրջանակը հավելյալ վճռաբեկ բողոքի ընդունելիության առավել բարդ **ընդհանուր նախադրյալների** հաղթահարման պահանջով զուգորդելը, ինքնին համահունչ են Սահմանադրության հիշյալ հոդվածների տրամաբանությանը: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվել է, օրենսդիրը վերաքննիչ դատարանի համար կալանքի՝ որպես խափանման միջոցի, կիրառման իրավաչափությունը քննելու համար արդարացիորեն հատուկ լիազորություններ է սահմանել՝ ի տարբերություն վերաքննիչ դատարանի կողմից այլ միջանկյալ դատական ակտերի վերանայման դեպքերի, իսկ Վճռաբեկ դատարանը

րանի համար կալանքի իրավաչափությունը քննելու հատուկ լիազորություններ չի սահմանել: Այս առումով Սահմանադրական դատարանի համար անընդունելի է այն մոտեցումը, երբ Վճռաբեկ դատարանն իր որոշումներով, մի կողմից՝ ամբողջովին նույնացրել է իր և վերաքննիչ դատարանի լիազորությունների ծավալը, մյուս կողմից՝ թյուրընկալում է առաջացրել նոր դատական ակտի էության վերաբերյալ:

Այսպես, Վճռաբեկ դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ «Արցախբանկ» ՓԲԸ-ի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի մայիսի 11-ի թիվ ԿԴ/0003/11/10 որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «... գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող նոր դատական ակտերի կայացմանը վերաբերող **օրենսդրական ձևակերպումն անորոշ է ...**»: Ըստ այդմ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այդ անորոշությունը հաղթահարելու նպատակով վերաքննիչ դատարանը պետք է ղեկավարվի **գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման ընդհանուր լիազորություններով**:

Անտեսելով Օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված կալանքի իրավաչափության հարցով վերաքննիչ դատարանի հատուկ լիազորությունները Վճռաբեկ դատարանը ձևավորել է դատական պրակտիկա, որի շրջանակներում անդրադարձել է արդեն միջանկյալ դատական ակտերը վերանայելու իր լիազորություններին՝ փաստելով, որ դրանք **նույնանում են** վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակի հետ, ընդ որում՝ նաև **ինքն է իրավասու իրականացնել իր այն լիազորությունները, որոնք սահմանված են ըստ էության դատական ակտերը վճռաբեկ վարույթում քննելու համար**<sup>1</sup>:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունն էապես տարբերակում է վճռաբեկ և վերաքննիչ ատյանների դատարանների գործառույթները և կարգավիճակը, ինչը չի կարող չանդրադառնալ նաև դատական ակտերի, հատկապես միջանկյալ դատական ակտերի վերանայման ծավալի վրա, և որ ամեն դեպքում Սահմանադրությամբ ապահովված վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքի ուժով դրանք չեն կարող չտարբերվել միմյանցից, հետևապես **միջանկյալ դատական ակտերի** և հատկա-

<sup>1</sup> Տես՝ Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի նոյեմբերի 15-ի՝ ԵԴ/0743/06/18 գործով որոշման 45 և 46-րդ էջերը:

պես կալանավորման իրավաչափության վերաբերյալ դատական ակտերի առնչությամբ վերաքննիչ դատարանի իրավասության ծավալն ավելին է, քան Վճռաբեկ դատարանինը: Այս տարբերությունը կանխորոշված է Սահմանադրությամբ ամրագրված Վճռաբեկ դատարանի գործառույթներից և կարգավիճակից ածանցվող իրավական նախադրյալներով, որոնք էապես ավելի բարձր շեմ են սահմանում վճռաբեկ բողոքի ընդունելիության համար, ինչն էլ, իր հերթին, կանխորոշում է Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտերի վերանայման ծավալը:

4.7. Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի կողմից վիճարկվող դրույթով սահմանված իր լիազորությունների ենթադրյալ վերազանցման մասին դիմողի փաստարկներին՝ Սահմանադրական դատարանը նշում է, որ այս հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանի որոշումների՝ սույն որոշման նախորդ կետում արված վերլուծությունը վկայում է, որ Վճռաբեկ դատարանի պրակտիկան Սահմանադրության 171 և 172-րդ հոդվածների պահանջների պահպանման տեսանկյունից խնդրահարույց է:

Հիմք ընդունելով սույն որոշման 4.1.-րդ կետում շարադրված՝ միջանկյալ դատական ակտերի վերանայման մասով Վճռաբեկ դատարանի վիճարկվող լիազորությունների իրականացման նպատակների վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ նպատակներով է վիճարկվող դրույթում ամրագրվել «նոր դատական ակտ» ձևակերպումը:

Սահմանադրական դատարանը վերստին արձանագրում է, որ «նոր դատական ակտ» եզրույթը չի նույնանում Օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դատական ակտերից որևէ մեկի հետ և օրենսդիրը, կիրառելով «նոր դատական ակտ» եզրույթը, նկատի չի ունեցել հիշյալ հոդվածի 1-ին մասում թվարկված այն լիազորությունները, որոնք վերապահված են Վճռաբեկ դատարանին՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման դեպքերում: Սա վերաբերում է նաև միջանկյալ դատական ակտերի վերանայման՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նույնական ձևակերպման ամրագրման նպատակին: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ «նոր դատական ակտ» եզրույթն օրենսդիրը գործածել է Օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի իմաստով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում վերստին շեշտել, որ, ի տարբերություն առաջին ատյանի դատարանի, որը կոչված է քննել ըստ էության և միջանկյալ դատական ակտ կայացնելու համար հիմք հանդիսացող գործի բոլոր փաստական և իրավական հանգամանքները, օրենսդիրը որդեգրել է վերաքննիչ ատյանում սահմանափակ վերանայման մոդելը, իսկ վճռաբեկ ատյանում խոսքը հատուկ նախադրյալների առկայությամբ էլ ավելի սահմանափակ վերանայման մասին է: Առավել ևս դա պետք է վերաբերի արդարադատության իրականացմանը համընթաց և այդ իմաստով՝ միջանկյալ բնույթի հարցերի քննությանը, և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը, ի թիվս այլնի, կոչված է ապահովելու նաև արդարադատության արդյունավետությունը, հետևապես սահմանափակ վերանայման մոդելի համակարգային տրամաբանության շրջանակներում ակնհայտորեն ուղղված է միջանկյալ դատական ակտերի մասով **վերջնական որոշումների** կայացմանը, որով կանխվում է թե՛ այդ հարցերով դատավարական շրջապտույտը, թե՛ դրա հնարավոր կամ առանձին դեպքերում նույնիսկ անխուսափելի բացասական ներգործությունն արդարադատության բուն գործառույթի արդյունավետ իրականացման վրա:

Սահմանադրական դատարանի համար ակնհայտ է, որ օրենսդիրն այդ նպատակներով է տարանջատել գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման շրջանակներում իրականացվող վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների լիազորությունները: Հետևապես, նոր դատական ակտ կայացնելը Վճռաբեկ դատարանի դեպքում նշանակում է վերջնական որոշման կայացում գործն ըստ էության չլուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոքի վերաբերյալ, այսինքն՝ նախորդ ատյաններում հետազոտված փաստերի շրջանակներում **այդ ակտի իրավաչափության հարցի վերջնական լուծում**: Կալանավորման իրավաչափությունը վիճարկող վճռաբեկ բողոքի դեպքում **նոր դատական ակտ կայացնելու Վճռաբեկ դատարանի պարտադիր լիազորությունը որպես** վիճարկվող դրույթով սահմանված **միակ այլընտրանք** վճռաբեկ բողոքը մերժելուն, նշանակում է **վճռաբեկ բողոքի բավարարում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշման վերացմամբ**:

Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշումը պետք է վերջնականորեն լուծի կալանավորման իրավաչափության հարցը և դրանով կանխի այս հարցով հետագա դատավարական շրջապտույտը՝ իրավական հստակություն և կանխատեսելիություն ապահովելով կալանքի կիրառման հարցում:

**Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանի կողմից Օրենսգրքի վիճարկվող դրույթի մեկնաբանությանը, ապա այն հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածին՝ համակցված Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի և 171-րդ հոդվածի հետ:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության և մասնագիտացված (ոչ սահմանադրական) դատարանները կաշկանդված են **ոչ միայն Սահմանադրությամբ, այլև օրենքով**, հակառակ դեպքում իրենք կարող են հանդես գալ կա մ որպես օրենսդիր, կա մ որպես սահմանադրական արդարադատության մարմիններ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ սույն սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակներում, Վճռաբեկ դատարանը կարող էր իրականացնել միայն այն լիազորությունները, որոնք սահմանված էին Օրենսգրքի վիճարկվող դրույթով: Բացի դրանից, ի տարբերություն **Սահմանադրական դատարանի**, որն արդարադատություն իրականացնելիս **ենթարկվում է միայն Սահմանադրությանը** (Սահմանադրության 167-րդ հոդվածի 2-րդ մաս), **մյուս բոլոր դատարանները կաշկանդված են և՛ Սահմանադրությամբ, և՛ օրենքներով** (Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մաս), ուստի **օրենքն** այդ դատարանների կողմից կարող է ոչ թե վերացվել, անվավեր ճանաչվել, վերանայվել, այլ **միայն կիրառվել**: Ավելին օրենքի պարտադիր պահանջները, այդ թվում՝ օրենքով սահմանված պարտադիր լիազորությունները, չեն կարող չկիրառվել, բացառությամբ այն միակ դեպքի, երբ դատարանը կասեցնում է վարույթը (ինչը, ի դեպ, նրա պարտականությունն է, եթե առկա են սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածներ (Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մաս) և դիմում է Սահմանադրական դատարան:

Որևէ դատարանի՝ օրենքով սահմանված լիազորություններն իրավակիրառ պրակտիկայում փոփոխելը՝ դրանք ընդլայնելու ուղ-



ղությամբ՝ անկախ պատճառաբանությունից, անթույլատրելի է, իսկ նվազեցնելու ուղղությամբ նշանակում է դրանց չիրականացում կամ ոչ պատշաճ իրականացում, ինչը, կախված հանգամանքներից, կարող է նույնանալ արդարադատությունը մերժելու հետ:

Օրենքով սահմանված լիազորությունների՝ սեփական մեկնաբանությամբ ընդլայնման հակասությունը Սահմանադրությանն առավել ակնհայտ է դառնում Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասում Վճռաբեկ դատարանի համար սահմանված այն պահանջի տեսանկյունից, որ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն **օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում** վերանայելու միջոցով է իրականացնում իր սահմանադրական գործառույթները:

Ըստ ՄԻԵԴ-ի դիրքորոշման՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման իմաստով «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» չի կարող համարվել այն դատարանը, որը որոշումը կայացրել է գանգատարկվող վարույթի կապակցությամբ օրենքով հստակ սահմանված լիազորությունների սահմանն անցնելով (Sokurenko and Strygun v. Ukraine, app. no. 29458/04 and 29465/04, 11/12/2006):

Սույն գործով դիմողի մեկ այլ դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414<sup>2</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննությունը մերժելու մասին իր՝ 2019 թվականի հունվարի 25-ի ՍԴԱՈ-7 աշխատակարգային որոշման մեջ անդրադառնալով դատարանների, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանության և կիրառման հարցին՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշումներ, մասնավորապես, առ այն, որ՝ «Այն հանգամանքը, որ սահմանադրական արդարադատության ոլորտը, Սահմանադրության 171-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, դուրս է Վճռաբեկ դատարանի գործառույթների շրջանակից, չի նշանակում, որ Վճռաբեկ դատարանը չունի Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն», և որ՝ «Որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց **Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունը**, իսկ հանրային իշխանության բոլոր մարմինները Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորու-

թյունների շրջանակներում մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը, հատկապես եթե, Սահմանադրության 3-րդ հոդվածին համահունչ, խոսքն անմիջականորեն գործող իրավունքի, այն է՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների մասին է, որոնցով սահմանափակված է **ամբողջ հանրային իշխանությունը**»։ Բացի դրանից, այդ որոշման մեջ Սահմանադրական դատարանը՝ ամրագրելով, որ սահմանադրական արդարադատության իրականացումը, հատկապես նաև օրենքի և Սահմանադրության մեջ նշված այլ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելը, Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է, այնուամենայնիվ, փաստել է, որ **սահմանադրականության ստուգումը բոլոր դատարանների պարտականությունն է**։ Սահմանադրական դատարանն այնուհետև հատուկ շեշտել է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով հանգում են կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության խնդրի, այսինքն՝ այդ կապակցությամբ առաջանում են հիմնավոր կասկածներ, և եթե տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով, ապա նրանք **պարտավոր են դիմել** Սահմանադրական դատարան այդ ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով, ինչը նշանակում է, որ բոլոր դատարանները, և ոչ միայն Վճռաբեկ դատարանը, **պետք է ինցիդենտ կերպով ստուգեն կիրառվելիք նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը և պարտավոր են դիմել** Սահմանադրական դատարան՝ **նշված նախադրյալների առկայության դեպքում**։

Վերահաստատելով իր հիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի որոշակիության խնդրի կամ օրենքի որևէ այլ՝ մեկնաբանությամբ չհաղթահարվող՝ սահմանադրականության տեսանկյունից նշանակություն ունեցող թերության բացահայտումը դատարանների կողմից, նրանց **պարտադիր լիազորությունն է**, որն ապահովված է հատկապես Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի պահաջներով։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ **օրենքում նման խնդիրների քացահայտումն** անխուսափելի է դարձնում Սահմանադրական դատարան դիմելը, քանի որ դրանք **չեն կարող հաղթահարվել այլ (ոչ սահմանադրական) դատարանների կողմից**: Օրենքի պահանջների մեկնաբանության դեպքում դրանց անորոշությունը փաստելը ոչ այլ ինչ է, քան սահմանադրականության խնդրի արձանագրում: Այդ խնդրի առկայությունն օրենքով սահմանված պահանջի կատարումից «ազատվելու» և սեփական լիազորություններն ընդլայնելու կամ սահմանափակելու համար հիմք դարձնելը նշանակում է սահմանադրականության խնդրի յուրօրինակ լուծում ոչ Սահմանադրական դատարանի կողմից, ինչն անթույլատրելի է: Իսկ քննված գործի շրջանակներում վիճարկվող դրույթի իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ Վճռաբեկ դատարանն Օրենսգրքի վիճարկվող դրույթի անորոշությունը պատճառաբանելու նպատակով հղում է արել նախկինում ընդունված իր որոշումներից մեկին՝ անտեսելով Սահմանադրական դատարան դիմելու՝ Սահմանադրությամբ սահմանված պարտադիր լիազորության առկայությունը:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենսգրքի այն դրույթները, որոնք կարգավորում են Սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգը, դեռևս ամրագրում են դատարանի՝ Սահմանադրական դատարան դիմելու հայեցողություն, այլ ոչ թե պարտականություն (Օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս դրույթները համակարգային առումով փոխկապակցված չեն Օրենսգրքի վիճարկվող դրույթի հետ՝ Սահմանադրական դատարանն իրավասու չէ անդրադառնալ դրանց սահմանադրականությանը: Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանը Կառավարության և Ազգային ժողովի ուշադրությունն է հրավիրում այս հիմնարար նշանակություն ունեցող հարցին՝ հորդորելով նախաձեռնել հիշյալ դրույթները Սահմանադրության լույսի ներքո վերանայելու գործընթաց:

Արձանագրելով Սահմանադրական դատարան դիմելու՝ բոլոր դատարանների, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի լիազորության պարտադիր բնույթը՝ Սահմանադրական դատարանը վերոգրյալի հիման վրա եզրակացնում է, որ Վճռաբեկ դատարանը Սահմանադրական դատարան դիմելու հարցում հայեցողական մոտեցում է

դրսևորել՝ հիմք ընդունելով օրենքի ձևակերպումը, չնայած ողջամտորեն կարելի էր ակնկալել, որ այդ դեպքում առնվազն չպետք է գնահատեր օրենքի վիճարկվող դրույթը՝ այն անուղղակիորեն որակելով որպես անորոշ, այսինքն՝ հակասահմանադրական:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ Վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման արդյունքում նոր դատական ակտ կայացնելու լիազորությունը տվյալ հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելն է:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ՝ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

7 մայիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1459



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՑԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԻՋԵՎ «ՕՏԱՐԵՐԿՐՅԱ  
ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ»  
ԿԻՐԱՐԿՄԱՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 մայիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի փետրվարի 12-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019  
165

պետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» կիրարկմանն օժանդակելու համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» կիրարկմանն օժանդակելու համագործակցության մասին» համաձայնագիրը (Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի փետրվարի 12-ին Երևանում:

Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող երկու հավելված:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրը, երբ Հայաստանի Հանրապետությունը գրավոր կտեղեկացնի Ամերիկայի Միացյալ Նահանգներին, որ Հայաստանի Հանրապետությունն ավարտել է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերը:

Յուրաքանչյուր կողմ կարող է դադարեցնել Համաձայնագիրը՝ դադարեցման մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

Համաձայնագրի դադարեցման դեպքում երկու կողմերը պետք է պահպանեն Համաձայնագրի «Գաղտնիություն» վերտառությամբ 7-րդ հոդվածի դրույթներով նախատեսված պարտավորությունները՝ Համաձայնագրի շրջանակներում ստացված բոլոր տեղեկությունների առումով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրում (մասնավորապես՝ 4-րդ հոդվածում (3-րդ մաս), 8-րդ հոդվածում (1-ին և 2-րդ մասեր), 10-րդ հոդվածում (3-րդ մաս)) տեղ

են գտել վրիպակներ, որոնք ուղղվել են հայկական կողմի և ամերիկյան կողմի հայտագրերով: Հիշյալ հայտագրերը համարվում են Համաձայնագրի անբաժանելի մաս: Սահմանադրական դատարանը Համաձայնագրի հիշյալ հոդվածներում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցին անդրադառնում է հաշվի առնելով կատարված ուղղումները:

2. Սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությամբ, մասնավորապես, ներկայացվել է, որ.

- «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտը» (ՖԱՏԿԱ-ն) վերաբերում է Համաձայնագրով սահմանված ԱՄՆ անձանց: Այս նպատակով ֆինանսական կազմակերպությունները պահանջում են իրենց հաճախորդներից (ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ՝ նոր) լրացնել համապատասխան ձևաթղթեր և բացահայտել իրենց կարգավիճակի մասին առավել ամբողջական տեղեկատվություն,

- տեղեկատվությունը ԱՄՆ հարկային մարմնին տրամադրվում է հաճախորդի համաձայնությամբ: Դրա բացակայության դեպքում ֆինանսական կազմակերպությունը պետք է հնարավորինս զերծ մնա նրան սպասարկելուց,

- ԱՄՆ անձի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է միայն այն դեպքում, երբ հաշվի մնացորդը գերազանցում է 50.000 ԱՄՆ դոլարը՝ ֆիզիկական անձ հաճախորդի դեպքում և 250.000 ԱՄՆ դոլարը՝ իրավաբանական անձ հաճախորդի դեպքում,

- կիրառելի է ԱՄՆ աղբյուրից ստացված միջոցների (շահութաբաժին, տոկոս, հոնորար, անուիտետ, աշխատավարձ, վարձակալության վճար, ցանկացած տեսակի գույքի վաճառքից ստացված շահույթ) նկատմամբ:

Միաժամանակ Սահմանադրական դատարանը Համաձայնագրի սահմանադրականության հարցի քննության շրջանակներում հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությամբ ներկայացրած, մասնավորապես, այն տեղեկությունները, որ.

- 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը և ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպությունները կամավորության սկզբունքով միացել են

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019

ՖԱՏԿԱ-ին՝ գրանցվելով ԱՄՆ հարկային մարմնի հատուկ համակարգում: ԱՄՆ կողմից իրականացվել է այդ կազմակերպությունների գրանցումը ու դրա վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակված է ԱՄՆ հարկային մարմնի պաշտոնական կայքում,

- ՀՀ ֆինանսական կազմակերպությունների՝ կամավորության սկզբունքով ՖԱՏԿԱ-ի պահանջներին միանալը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ հայկական կողմը 2014 թվականի հունիսի 1-ի դրությամբ չունեի իրավասություն հրահանգելու ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատություններին պահանջելու Նոր անհատական հաշիվների հաշվետերերից ինքնավկայական, ինչպես այն սահմանված է Համաձայնագրի I հավելվածի III բաժնում կամ հաշվետվություն ներկայացնելու համաձայնություն՝ համաձայն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1դ ենթապարբերության,

- ՀՀ ֆինանսական կազմակերպությունները փաստացի միացել են ՖԱՏԿԱ-ին, ստացել են հաճախորդների համաձայնությունը և փաստացի տրամադրել են հաշվետվություններ,

- Համաձայնագրի I հավելվածի «Է» պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը կապահովի, որ ամերիկյան կողմին տրամադրվի նշված պարբերությամբ սահմանված գրավոր ծանուցում:

**3.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

- հրահանգել և հնարավորություն տալ ՀՀ ֆինանսական հաստատություններին գրանցվելու Միացյալ Նահանգների Ներքին եկամուտների ծառայությունում (ՆԵԾ), ՆԵԾ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» (ՕՀՀՀԱ) գրանցման կայքում և բավարարելու ՕՖՀ համաձայնագրի պահանջները, ներառյալ՝ վիճակի գնահատման, հաշվետվության և պահումներ կատարելու պահանջները,

- հրահանգել և հնարավորություն տալ ՀՀ ֆինանսական հաստատություններին՝ 2014 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությունների կողմից սպասարկվող հաշիվների առնչությամբ, որոնք ճանաչվում են ԱՄՆ հաշիվներ, պահանջել յուրաքանչյուր Հաշվետիրոջից Հաշվետիրոջ Միացյալ Նահանգների դաշնային հարկատուի հաշվառման համարը (ԱՄՆ ՀՀՀ) և հաշվետվություն ներկայացնելու համաձայնություն, և



միաժամանակ գրավոր տեղեկացնել հաշվետիրոջը, որ եթե ԱՄՆ ՀՀՀ-ն և համաձայնությունը չտրվեն, ապա ամփոփ տեղեկությունները հաշվի մասին կհայտնվեն ՆԵԾ-ին, հաշվի մասին տեղեկությունները կարող են հանգեցնել հաշվի մասին կոնկրետ տեղեկություններ ստանալու՝ ՆԵԾ-ի խմբային պահանջին, այդ դեպքում հաշվի մասին տեղեկությունները կփոխանցվեն ՀՀ իրավասու մարմնին, և ՀՀ իրավասու մարմինը կարող է փոխանակել այս տեղեկությունները ՆԵԾ-ի հետ՝ Համաձայնագրով սահմանված կարգով,

- հրահանգել և հնարավորություն տալ ՀՀ ֆինանսական հաստատություններին՝ 2014 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությունների կողմից սպասարկվող հաշիվների առնչությամբ, որոնք ճանաչվում են ԱՄՆ հաշիվներ, տարեկան հաշվետվություն ներկայացնել ՆԵԾ-ին՝ ՕՖՀ համաձայնագրով և ԱՄՆ գանձապետարանի համապատասխան կանոնակարգով նախատեսված ժամկետներում և ձևով, ինչպես նաև ներկայացնել պահանջվող ամփոփ տեղեկությունները համաձայնություն չտրամադրած հաշվետերերի ԱՄՆ հաշիվների համար,

- հրահանգել և հնարավորություն տալ ՀՀ ֆինանսական հաստատություններին նոր հաշիվների համար, որոնք ճանաչվել են ԱՄՆ հաշիվներ, ստանալ յուրաքանչյուր հաշվետիրոջ համաձայնությունը՝ հաշվետվության համար՝ համաձայն ՕՖՀ համաձայնագրի պահանջների՝ որպես հաշիվը բացելու պայման,

- հրահանգել և հնարավորություն տալ ՀՀ ֆինանսական հաստատություններին 2014 թվականի հուլիսի 1-ին կամ դրանից հետո Ոչ-մասնակից ֆինանսական հաստատության կողմից բացված նոր հաշիվների կամ ստանձնած պարտավորությունների առնչությամբ, որոնց համար ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությունն ակնկալում է վճարելու օտարերկրյա հաշվետվության ենթակա գումար, յուրաքանչյուր այդպիսի Ոչ-մասնակից ֆինանսական հաստատությունից ստանալու հաշվետվություն տալու համաձայնություն՝ համաձայն ՕՖՀ համաձայնագրի պահանջների՝ որպես հաշիվը բացելու կամ պարտավորությունը ստանձնելու պայման,

- ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը ԱՄՆ իրավասու մարմնին ներկայացնի ԱՄՆ իրավասու մարմնի պահանջած տեղեկությունները՝ ըստ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2 (ա) և 2 (բ) ենթա-

պարբերությունների՝ անկախ այն բանից, թե արդյոք Հայաստանի Հանրապետությանը պետք են այդ տեղեկությունները սեփական հարկային նպատակներով կամ արդյոք այդ տեղեկություններն առնչվում են որոշակի վարքի հետաքննության հետ, ինչը կարող է հանցագործություն համարվել Հայաստանի Հանրապետության օրենքներով, եթե այդպիսի վարքը դրսևորվեր Հայաստանի Հանրապետությունում,

- ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը, Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության և 4-րդ հոդվածի համաձայն, Միացյալ Նահանգներից ստացած ցանկացած տեղեկություն դիտարկի որպես գաղտնի և այդպիսի տեղեկությունները միայն բացահայտի անհրաժեշտության դեպքում՝ Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար: Այդպիսի տեղեկությունները կարող են բացահայտվել Համաձայնագրով նախատեսված՝ ՀՀ պարտավորությունների կատարման առնչությամբ դատավարության կապակցությամբ,

- ապահովել, որ ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությունները Համաձայնագրի I հավելվածով ներկայացված վիճակի գնահատման ընթացակարգի համաձայն նույնականացնեն ԱՄՆ հաշիվները և Ոչ-մասնակից ֆինանսական հաստատությունների սպասարկած հաշիվները,

- եթե այլ բան նախատեսված չէ, ապա ապահովել, որ տեղեկություններն ԱՄՆ հաշվի մասին տրամադրվեն տարին մեկ անգամ՝ տեղեկությունների տարվան հաջորդող օրացուցային տարվա ընթացքում,

- ապահովել, որ ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությունը՝ նախկինում առկա (գոյություն ունեցող) հաշիվների համար, որոնց հաշվեկշիռը կամ արժեքը 2014 թվականի հունիսի 30-ի դրությամբ գերազանցում է 50.000 ԱՄՆ դոլարը (250.000 ԱՄՆ դոլար կանխիկ արժեքի ապահովագրական պայմանագրի կամ Անուիտետային պայմանագրի համար), բայց չի գերազանցում 1.000.000 ԱՄՆ դոլարը («Փոքր արժեքով հաշիվներ»), ստուգի ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատության ունեցած էլեկտրոնային ճանապարհով որոնելի տվյալները՝ Համաձայնագրի I հավելվածի II բաժնի Բ (1) ենթապարբերությունում թվարկված ԱՄՆ ցուցիչներից որևէ մեկը գտնելու նպատակով,

- ապահովել, որ ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությունը՝ նախկինում առկա (գոյություն ունեցող) անհատական հաշիվների համար, որոնք ունեն 1.000.000 ԱՄՆ դոլարը գերազանցող հաշվեկշիռ կամ արժեք 2014 թվականի հունիսի 30-ի կամ 2015 թվականի դեկտեմբերի 31-ի կամ որևէ հաջորդ տարվա դրությամբ («Բարձր արժեքով հաշիվներ»), ստուգի ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատության ունեցած էլեկտրոնային ճանապարհով որոնելի ունեցած տվյալները՝ Համաձայնագրի I հավելվածի II բաժնի Բ (1) ենթապարբերությունում նկարագրված ԱՄՆ ցուցիչներից որևէ մեկը գտնելու նպատակով,

- բացի Համաձայնագրի I հավելվածի II բաժնի Ա (4) ենթապարբերությունում նկարագրված ավանդային հաշիվներից՝ նախկինում առկա (գոյություն ունեցող) որևէ անհատական հաշիվ, որը համաձայն Համաձայնագրի I հավելվածի II բաժնի Բացահայտվել է որպես ԱՄՆ հաշիվ, բոլոր հետագա տարիներին դիտել որպես ԱՄՆ հաշիվ, քանի դեռ հաշվետերը չի դադարի ԱՄՆ նախատեսված անձ լինելուց,

- Նոր անհատական հաշիվների համար, որոնք նկարագրված չեն Համաձայնագրի I հավելվածի III բաժնի Ա պարբերությունում, ապահովել, որ հաշիվը բացելիս (կամ 90 օրվա ընթացքում այն օրացուցային տարվա ավարտից հետո, որի ընթացքում այս հաշիվը դադարել է նկարագրված լինել Համաձայնագրի I հավելվածի III բաժնի Ա պարբերությունում), ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությունը ստանա ինքնավկայագրում, որ կարող է լինել հաշիվը բացելու փաստաթղթերի մաս, որը թույլ է տալիս ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությանը որոշել՝ արդյոք հաշվետերը ռեզիդենտ է Միացյալ Նահանգներում հարկային նպատակներով (այս նպատակի համար, ԱՄՆ քաղաքացին համարվում է ռեզիդենտ Միացյալ Նահանգներում հարկային նպատակների համար, նույնիսկ եթե հաշվետերը նաև այլ երկրի հարկային ռեզիդենտ է) և հաստատում է այդպիսի ինքնավկայագրման ողջամտությունը՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որ ՀՀ հաշվետու ֆինանսական հաստատությունը ստացել է այդ հաշիվը բացելու առնչությամբ, ներառյալ փաստաթղթերը, որոնք հավաքվել են Համաձայնագրով սահմանված ընթացակարգերի համաձայն:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև միջազգային տնտեսական գործունեություն իրականացնելիս հարկերից խուսափելու դեմ պայքարում համագործակցության բարելավմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի փետրվարի 12-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի» կիրարկմանն օժանդակելու համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

21 մայիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1460



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 մայիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Գ. Բալայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 2-ին Բեյրութում ստորագրված «Ռազմական համագործակցության մասին Հայաստանի Հանրապետության և Լիբա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019

նանի Հանրապետության միջև» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի մարտի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ռազմական համագործակցության մասին Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 2-ին Բեյրութում՝ նպատակ ունենալով զարգացնել և խորացնել հայ-լիբանանյան բարեկամական համագործակցությունը ռազմական ոլորտում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության սկզբունքով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագրի դրույթների իրագործման համար նշանակել լիազորված մարմին,

- մշակել երկկողմ ռազմական համագործակցության տարեկան և երկարաժամկետ պլաններ, որոնք կսահմանեն այդ համագործակցության հեռանկարային ուղղությունները և կներառեն համագործակցության միջոցառումների անվանումները, վայրը և ժամկետները, մասնակիցների քանակը, ինչպես նաև գործողությունների իրականացման ձևերը,

- ապահովել համագործակցությունը ներքոնշյալ ուղղություններով.

1) անվտանգություն և պաշտպանական քաղաքականություն,

2) ռազմական արդյունաբերություն,

3) ռազմական գիտատեխնիկական հետազոտություններ,

4) նյութատեխնիկական ապահովման աջակցություն, ռազմական նշանակության արտադրանքի ու ծառայությունների ձեռքբերում և մատակարարում,

- 5) ռազմական կրթություն և վարժանք,
- 6) ռազմական բժշկություն և առողջապահություն,
- 7) ռազմափրավական պատրաստություն,
- 8) խաղաղությանն աջակցման, խաղաղապահ և մարդասիրական գործողություններ,
- 9) զինված ուժերի կազմակերպում և կառավարում,
- 10) կազմգործակալաբային պատրաստություն,
- 11) ռազմական գործողությունների հետևանքով առաջացած շրջակա միջավայրի խնդիրներ և աղտոտում,
- 12) ռազմական պատմություն,
- 13) ռազմական սպորտ,
- 14) Կողմերի համաձայնությամբ՝ փոխադարձ հետաքրքրություններ կայացնող այլ ոլորտներ,
  - ապահովել համագործակցության իրականացումը հետևյալ ձևերով.
    - 1) պատվիրակությունների փոխադարձ այցելություններ ռազմական և քաղաքացիական հաստատություններ,
    - 2) Կողմերի փորձագետների միջև փորձի փոխանակում,
    - 3) Կողմերի Լիազորված մարմինների ներկայացուցիչների հանդիպումներ,
    - 4) ռազմաուսումնական հաստատություններում կադրերի պատրաստում և վերապատրաստում,
    - 5) դասախոսական և ուսուցանող անձնակազմի, ինչպես նաև ռազմական հաստատությունների ուսանողների փոխանակում,
    - 6) Կողմերի Լիազորված մարմինների ընդհանուր համաձայնությամբ պաշտպանական նշանակության զինվորական և քաղաքացիական հաստատություններում առաջարկվող տեսական և գործնական ուսումնական դասընթացներին, կողմնորոշման փուլերին, սեմինարներին, խորհրդաժողովներին, կլոր սեղանի շուրջ քննարկումներին և գիտաժողովներին մասնակցություն,
    - 7) մասնակցություն խաղաղությանն աջակցման, խաղաղապահ և մարդասիրական գործողություններին և գորավարժություններին,
    - 8) այցելություններ ռազմական օդանավակայաններ և այլ կառույցներ,
    - 9) մշակութային և մարզական միջոցառումների համատեղ իրականացում,

10) ռազմական նշանակության արտադրանքին և պաշտպանության հարցերին առնչվող ծառայությունների հետ կապված կոմերցիոն նախաձեռնություններին աջակցություն,

11) Կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ ռազմական ուղղություն,

- որպես ուղարկող Կողմ հոգալ ճանապարհաճախսը, աշխատավարձերը, առողջության և պատահարների ապահովագրությունը և հայկական անձնակազմի գործուղման հետ կապված ցանկացած այլ ծախս՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, բացառությամբ անհետաձգելի բժշկական օգնության հետ կապված ծախսերի,

- որպես ընդունող Կողմ իր տարածքում հոգալ լիբանանյան Կողմի պատվիրակության անդամների ներքին տրանսպորտային փոխադրումների, կեցության և սննդի հետ կապված ծախսերը,

- Համաձայնագրով նախատեսված երկկողմ համագործակցության միջոցառումների իրականացման ընթացքում բժշկական օգնության անհրաժեշտության դեպքում՝ որպես ընդունող կողմ, լիբանանյան կողմի անձնակազմին անվճար հիմունքներով ցուցաբերել անհետաձգելի բժշկական օգնություն ՀՀ ռազմաբժշկական հաստատություններում,

- Համաձայնագրով նախատեսված առաքելության/վարժանքի ընթացքում հայկական Կողմի անձնակազմի անդամի կողմից լիբանանյան կողմին հասցված ցանկացած վնաս փոխհատուցել փոխադարձ համաձայնության հիման վրա,

- երաշխավորել փոխանակված ցանկացած գաղտնի տեղեկատվության օգտագործումը՝ բացառապես Համաձայնագրի շրջանակներում և դրա նպատակներին համապատասխան,

- Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացած ցանկացած վեճ կամ տարաձայնություն լուծել բացառապես խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով, դիվանագիտական ուղիներով:

**3.** Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:



Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի նոյեմբերի 2-ին Բեյրութում ստորագրված՝ «Ռեզոլուցիայի համագործակցության մասին Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՍԱՍՅԱՆ**

21 մայիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1461



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ԱՎԻԱՑԻՈՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԵՎ ԼՈՒՐՋ ՄԻՋԱԴԵՊԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 մայիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի պաշտոնակատար Հ. Արշակյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 22-ին ստորագրված «Ավիացիոն պատահարների և լուրջ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)2019

միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի ապրիլի 9-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 22-ին Մոսկվայում՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման, դրա նպատակների, կառուցվածքի և գործառույթների սահմանման նպատակով: Համաձայնագիրը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև: Այն բաց է այլ պետությունների միանալու համար, որը կատարվում է բոլոր Կողմերի համաձայնության դեպքում:

Միջազգային բյուրոն գտնվելու է Մոսկվա քաղաքում (Ռուսաստանի Դաշնություն), բայց անհրաժեշտության դեպքում, Կողմերի միջև կնքված առանձին միջազգային պայմանագրերի համաձայն, Կողմերի տարածքում կարող են հիմնադրվել Բյուրոյի մասնաճյուղեր, որոնց գործունեության հետ կապված հարցերը, այդ թվում՝ նաև ֆինանսական ապահովման հետ կապված, կարգավորվում են վերոնշյալ միջազգային պայմանագրերով, իսկ Բյուրոյի բյուջեն, որը պետք է հավասարակշռված լինի ըստ եկամուտների և ծախսերի, ձևավորվում է կողմերի բաժնային վճարումների հաշվին, որոնց ձևավորման և կատարման մասին կանոնակարգը, չափերը (սանդղակը) սահմանվում են Կողմերի կառավարությունների ղեկավարների կողմից և վերանայվում են ըստ անհրաժեշտության:

Համաձայնագիրն ունի անբաժանելի մաս կազմող Հավելված՝ «Կարգ Բյուրոյի, Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների սոցիալական երաշխիքների, արտոնությունների և անձեռնմխելիության վերաբերյալ» վերտառությամբ:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- կողմերի հետ համատեղ ստեղծել ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության միջազգային իրավունակությամբ օժտված Միջազգային բյուրո (այսուհետ՝ Բյուրո), որի աշխատանքային լեզուն ռուսերենն է՝ որպես ԻԿԱՕ-ի պաշտոնական լեզուներից մեկը (հոդված 2, կետեր 1 և 2, հոդված 5),

- ապահովել, որ Ղեկավար խորհրդի նիստը ՀՀ տարածքում՝ ՀՀ հրավերով գումարվելու դեպքում, նիստի գումարման ծախսերը հոգա հյուրընկալող ՀՀ լիազորված պետական մարմինը (հոդված 8, կետ 7, մաս 2),

- ապահովել, որ գործուղում ուղարկված ՀՀ պետական մարմինները և կազմակերպությունները կատարեն Ղեկավար խորհրդի անդամների և նիստի մասնակիցների գործուղման հետ կապված ծախսերը (հոդված 8, կետ 7, մաս 3),

- ուսումնասիրել թռիչքների անվտանգության ապահովմանն ուղղված առաջարկությունները, որոնք ստացվել են պատահարների և լուրջ միջադեպերի քննության արդյունքում, և տեղեկություն տրամադրել Բյուրոյին՝ ձեռնարկված կամ քննարկվող միջոցների կամ որևէ միջոց չձեռնարկելու պատճառների մասին (հոդված 11, կետ «ա»),

- ապահովել ՀՀ օրենսդրության համապատասխանությունը Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետին համապատասխան մշակված փաստաթղթերին (հոդված 11, կետ «բ»),

- ապահովել բաժնային վճարումների կատարումը՝ ըստ Բյուրոյի հաստատված բյուջեի (հոդված 11, կետ «գ»),

- ընդունել և միջոցներ ձեռնարկել զերծ պահելու համար Բյուրոյի կողմից իրականացվող ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննությունը քաղաքական կամ այլ միջամտությունից (հոդված 11, կետ «դ»),

- ապահովել, որ ՀՀ տարածքում Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցները օգտվեն սոցիալական երաշխիքներից, արտոնություններից և անձեռնմխելիությունից, որոնք անհրաժեշտ են նրանց ստանձնած լիազորությունների և պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման համար (հոդված 14, կետ 2),

- առարկաները և այլ գույքը, որոնք նախատեսված են Բյուրոյի կողմից պաշտոնական օգտագործման համար, ՀՀ տարածքում ազատել մաքսային տուրքերից, հարկերից և մաքսային վճարներից (Հավելված, կետ 11),

- Բյուրոյի Նախագահին և Բյուրոյի աշխատակիցներին չենթարկել քրեական, քաղաքացիական և վարչական պատասխանատվության իրենց պարտականությունների կատարման ընթացքում կատարած բոլոր գործողությունների, գրավոր կամ բանավոր հայտարարությունների համար՝ բացառությամբ իրենց վարած կամ իրենց պատկանող տրանսպորտային միջոցով տեղի ունեցած ճանապարհային տրանսպորտային պատահարի հետ կապված վնասների հատուցման հայցերի դեպքերի (Հավելված, կետ 14, ենթակետ «ա»),

- Բյուրոյի Նախագահին և Բյուրոյի աշխատակիցներին ազատել աշխատավարձերի և Բյուրոյի կողմից տրված այլ վճարումների հարկումներից (Հավելված, կետ 14, ենթակետ «բ»),

- երաշխավորել Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների հայրենադարձության այն նույն արտոնություններից օգտվելու իրավունքը, որոնցից միջազգային ճգնաժամերի ժամանակ օգտվում են դիվանագիտական ներկայացուցիչները (Հավելված, կետ 14, ենթակետ «ե»),

- պահպանել Բյուրոյի Նախագահի կամ Բյուրոյի աշխատակիցների՝ որպես Բյուրոյի Նախագահ կամ Բյուրոյի աշխատակիցներ, իրենց գործառույթների և գործողությունների իրականացման շրջանակներում ասվածի կամ գրվածի նկատմամբ վարչական, քաղաքացիական և քրեական անձեռնմխելիությունը նաև նրանց լիազորությունների ավարտից հետո (Հավելված, կետ 22),

- ապահովել, որ Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների՝ Բյուրոյում աշխատելու ժամանակահատվածը հաշվարկվի որպես ապահովագրական (աշխատանքային) ստաժ՝ կենսաթոշակի սահմանման համար (Հավելված, կետ 24, մաս 3),

- ապահովել, որ ՀՀ քաղաքացու՝ Բյուրոյի Նախագահ և Բյուրոյի աշխատակից եղած ժամանակահատվածում ստացած շահույթը հաշվի առնվի կենսաթոշակի չափը որոշելիս՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի և կարգի (Հավելված, կետ 24, մաս 4),

- ապահովել, որ սոցիալական ապահովագրության նպաստներ նշանակելիս սոցիալական (աշխատանքային) ստաժում հաշվարկվի Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների աշխատաժամանակը՝ համաձայն գտնվելու վայրի պետության օրենսդրության (Հավելված, կետ 26),

- ապահովել, որ ՀՀ քաղաքացի Բյուրոյի Նախագահի և Բյուրոյի աշխատակիցների աշխատաժամանակը մտնի ՀՀ պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժի մեջ՝ պետական (պետական քաղաքացիական) ծառայություն անցնելու ընթացքում սոցիալական երաշխիքների կարգավորման և պետական ծառայողներին (դաշնային պետական քաղաքացիական ծառայողներ) երկարամյա ծառայության դիմաց կենսաթոշակներ նշանակելու համար (Հավելված, կետ 29):

3. Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագրի վերաբերյալ կատարել է վերապահում, որում, մասնավորապես, հայտարարվում է, որ Համաձայնագրի Հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետի «Բյուրոյի Նախագահը և Բյուրոյի աշխատակիցները ազատվում են պետական պարտականություններից» դրույթները չեն կիրառվի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ, ինչպես նաև հայտարարվում է, որ Համաձայնագրի Հավելվածի 24-րդ կետը Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների նկատմամբ կիրառելիս, որոնք զբաղեցնում են Բյուրոյի Նախագահի կամ Բյուրոյի աշխատակցի պաշտոնը, նրանց կենսաթոշակային ապահովման պարտադիր պահումները կատարվում են Բյուրոյի կողմից:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. «2018 թվականի նոյեմբերի 22-ին ստորագրված՝ «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության Միջազգային բյուրոյի ստեղծման և գործունեության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

21 մայիսի 2019 թվականի  
ՄԴՈ-1462



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝ «ԱՌՆՎԱԶՆ 10  
ՏԱՐԻ» ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍՈՎ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունիսի 2019 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)2019



դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության՝ «առնվազն 10 տարի» ձևակերպման մասով՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործը:

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի փետրվարի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2014 թվականի փետրվարի 13-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ից:

Օրենքի «Անցումային դրույթներ» վերտառությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությունը սահմանում է.

«6. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում»:

Սույն գործով վերոհիշյալ իրավադրույթը վիճարկվում է «առնվազն 10 տարի» ձևակերպման մասով:

Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը լրացվել է 10.06.2014 թ. ՀՕ-55-Ն օրենքով, իսկ Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը, այդ թվում՝ վիճարկվող դրույթը՝ 19.05.2014 թ. ՀՕ-29-Ն, 10.06.2014 թ. ՀՕ-55-Ն, 01.12.2014 թ. ՀՕ-198-Ն, 04.03.2015 թ. ՀՕ-14-Ն, 31.05.2017 թ. ՀՕ-91-Ն, 07.03.2018 թ. ՀՕ-143-Ն, 21.06.2018 թ. ՀՕ-341-Ն օրենքներով ենթարկվել է լրացումների և փոփոխությունների:

Գործի քննության առիթը ՀՀ վարչական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 1-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է նույն դատարանի 2019 թվականի հունվարի 29-ի՝ ՎԴ/9279/05/18 գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու և ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենքի համապատասխան դրույթները, վերջիններիս հետ փոխկապակցված օրենսդրության այլ նորմեր և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Հղումներ կատարելով Սահմանադրության 1-ին, 28-րդ, 29-րդ և մի շարք այլ հոդվածներին, վկայակոչելով Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները, վերլուծելով Օրենքի ինչպես 9-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերությունը, այնպես էլ այլ դրույթներ՝ դիմողը գտնում է, որ դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց կենսաթոշակի հաշվարկման այդ նորմերով սահմանված մեթոդների կիրառումն «էապես նվազեցնում է դատավորի սոցիալական պաշտպանության երաշխիքները, սահմանելով էապես նվազ կենսաթոշակի չափ», միաժամանակ փաստելով, որ «օրենսդրի կողմից տարբերակված մոտեցում է ցուցաբերվում համանման իրավիճակներում գտնվող միևնույն կարգավիճակն ունեցող սուբյեկտների նկատմամբ, այն է՝ մինչ 01.07.2014 թվականը դատավորի պաշտոն ստանձնած, դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած և 01.07.2014 թվականից հետո կենսաթոշակ ստանալու իրավունքի հավակնող անձանց նկատմամբ՝ օրենսդրորեն չսահմանելով նման տարբերակված մոտեցման որևէ օբյեկտիվ և ողջամիտ արդարացում»:

Դիմողի կարծիքով՝ 01.07.2014 թվականից հետո կիրառման ենթակա իրավակարգավորմամբ կենսաթոշակի իրավունքի էության աղավաղմանը չհանգեցնող կենսաթոշակի հաշվարկման ընդհանուր կանոնից բացառություն սահմանելով և 01.07.2014 թվականի դրությամբ դատավորի պաշտոնում 10 տարի պաշտոնավարած անձանց համար կենսաթոշակի հաշվարկման (չափի) առավել բարենպաստ պայմաններ սահմանելով՝ օրենսդիրն իրացրել է իր հայեցողական լիազորությունը՝ «չարդարացված խտրականություն առաջացնելով նշյալ և 01.07.2014 թվականից հետո դատավորի պաշտոնում 10 տարի պաշտոնավարման ժամկետը լրացած անձանց միջև»:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորմամբ օրենսդիրը խախտել է նաև անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին հետադարձ ուժ չտալու սահմանադրական սկզբունքը:

Վերոհիշյալ փաստարկների հիմքով դիմողը գտնում է, որ Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությունն այնքանով, որքանով սահմանափակում է նախատեսում Օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարվա պաշտոնավարման

Ժամկետը դեռևս չլրացրած անձանց համար առավել բարենպաստ պայմաններով կենսաթոշակի հաշվարկման համար, չի համապատասխանում Սահմանադրության 29-րդ հոդվածի պահանջներին:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին:

Հղումներ կատարելով Սահմանադրության մի շարք հոդվածներին, վկայակոչելով խտրականության արգելքի, դատավորների անկախության և սոցիալական ապահովության իրավունքի իրացման սկզբունքների վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները և միջազգային իրավական մի շարք փաստաթղթեր՝ պատասխանողը գտնում է, որ դատավորների ինչպես վարձատրության, այնպես էլ նրանց տրամադրվող կենսաթոշակի չափի՝ որպես սոցիալական երաշխիքի ապահովման պատշաճության գնահատական կարող է տրվել՝ այն համեմատելով տվյալ երկրում առկա տնտեսական գործոնների հետ: Կենսաթոշակի չափի ընտրությունը, ըստ պատասխանողի, պետության հայեցողության սահմաններում է, քանի դեռ այն չի հակասում Սահմանադրության պահանջներին կամ միջազգայնորեն ստանձնած պարտավորություններին: Եթե պետությունը, ինչպես փաստում է պատասխանող կողմը, դատավորի կենսաթոշակի չափը պայմանավորի կոնկրետ ժամանակաշրջանում, այն է՝ «մինչ 2014 թվականի հուլիսի 1-ը դատավորի պաշտոն ստանձնած, առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած դատավորների ստացած կենսաթոշակի չափով, ապա այն մեխանիկորեն բերելու է կենսաթոշակի չափի բարձրացման, ինչը թեև ցանկալի է, սակայն կարող է չհամապատասխանել պետության ֆինանսական հնարավորություններին»:

Պատասխանողը գտնում է նաև, որ օրենսդիրը սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթներին հետադարձ ուժ չի հաղորդել, և այդ դրույթները «բացառապես տարածվում են Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա, իսկ մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը թեև դիմողի և պետության միջև եղել են սոցիալական ապահովության իրավահարաբերություններ, սակայն ոչ հաշվարկման ձևաչափի փոփոխման հիմք»:

**3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները**

Սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս, մասնավորապես, պարզել.

- Օրենքի վիճարկվող իրավակարգավորումը, ինչպես նաև Օրենքի՝ դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթներ Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի տեսանկյունից երաշխավորում են արդյոք դատավորի բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող կենսաթոշակ,

- արդյոք ք Օրենքի վիճարկվող իրավակարգավորումը մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը դատավորի պաշտոն ստանձնած, դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած և 2014 թվականի հուլիսի 1-ից հետո կենսաթոշակ ստանալուն հավակնող դատավորների միջև առանց օբյեկտիվ հիմքի տարբերակում է դնում:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության 1-ին և 4-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է, որում, որպես սահմանադրական կարգի հիմնական սկզբունք, երաշխավորված է պետական, այդ թվում՝ դատական իշխանության իրականացումը՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, ինչը դատարանների անկախությունը երաշխավորող և սահմանադրական նախապայման է: Համակցված Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի հետ՝ այն առաջնահերթ ենթադրում է դատական իշխանությունը (արդարադատությունը) իրականացնող դատավորների գործառական, կառուցակարգային, նյութական և սոցիալական անկախության նորմատիվ այնպիսի կարգավորումների առկայություն, որոնք անհրաժեշտ և բավարար են արդարադատության իրականացման համար:

Դատավորների իրավական կարգավիճակը բնորոշող հատկանիշների համակարգում, ի թիվս այլնի, առանցքային կարևորություն ունեն սոցիալական անկախության երաշխիքները, որոնք սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն:

Սահմանադրական դատարանը, իր որոշումներում անդրադառնալով դատական իշխանության անկախության, դատավորի կարգավիճակի, դրա առանձնահատկություններն օրենքով կանոնակարգելու հարցերին, բազմիցս արձանագրել է դատավորի նյութական և սոցիալական անկախության նախադրյալների ապահովման առանձնահատուկ կարևորությունը: Այս հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները հիմնականում հանգում են հետևյալին.

1) դատավորի սոցիալական ապահովության իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորելիս չի կարող խախտվել դատավորի՝ իր զբաղեցրած վերջին պաշտոնում ստացած աշխատավարձին կենսաթոշակի չափը հնարավորինս մոտ սահմանելու միջազգայնորեն ընդունված սկզբունքը (ՄԴՈ-647),

2) պետությունը, թերևս, կարող է իր հնարավորությունների սահմանափակման որոշակի իրավիճակների պայմաններում վերանայել դատավորների սոցիալական ապահովության շրջանակներում նախկինում ստանձնած իր պարտավորությունները, երբ անհրաժեշտ է պաշտպանել այլ սահմանադրական արժեքներ, սակայն եթե երկրի տնտեսությունը շարունակել է տնտեսական աճ արձանագրել, ապա չկան օբյեկտիվ նախադրյալներ դատավորի աշխատավարձի ու կենսաթոշակի միջև խզումը մեծացնելու համար (ՄԴՈ-647),

3) եթե կենսաթոշակի նշանակում ստացած անձինք ակնկալիք են ունեցել, որ իրենց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման արտոնյալ կարգով, և հետո այն վերացվել է, ապա անտեսվում են այդ անձանց՝ արտոնյալ կարգով կենսաթոշակ ստանալու լեզիտիմ ակնկալիքները (ՄԴՈ-723),

4) եթե անձն արտոնյալ կարգով կենսաթոշակի իրավունք է ձեռք բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա, ապա պետության համար ծագում է պարտականություն՝ երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը (ՄԴՈ-723),

5) պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրաց-

նելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները: Պետության հայեցողությունն է սահմանել կենսաթոշակի ձևերը, դրանց նշանակման կարգը և պայմանները, սակայն այդ հայեցողությունն իրականացնելիս պետությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ սկզբունքները (ՄԴՈ-731),

6) կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է (ՄԴՈ-865):

Վերահաստատելով իր որոշումներում արտահայտած վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք սույն գործով քննության առարկայի շրջանակներում ևս կիրառելի են վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս:

**4.2.** Դատավորների անկախության և դրան համապատասխան իրավական կարգավիճակի առանձնահատկությունները կարևորվում են նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում:

Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության՝ հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելակերպի հիմնախնդիրներին նվիրված յոթերորդ կոնգրեսի կողմից 1985 թվականին ընդունված՝ Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներում արձանագրված է, որ «հաճախակի են անհամապատասխանություններն այդ սկզբունքների մասին պատկերացման և փաստական դրության միջև», և որ անհրաժեշտ է հաշվի առնել, «որ յուրաքանչյուր երկրում արդարադատությունը կազմակերպելիս և իրականացնելիս պետք է ղեկավարվել այդ սկզբունքներով և ջանքեր ձեռնարկել դրանք լիովին կենսագործելու նպատակով՝ ... հաշվի առնելով, որ դատավորների պարտականություններն իրագործելու վերաբերյալ նորմերը պետք է նպատակաուղղված լինեն դատավորներին այդ սկզբունքներին համապատասխան գործելու հնարավորություն տալուն»: Միաժամանակ սահմանվում է, որ «դատավորների անկախությանը համապատասխան վարձատրությունը, ծառայության պայմանները, թոշակը և թոշակի գնալու տարիքը պետք է պատշաճ ձևով երաշխավորվեն օրենքով» (11-րդ կետ):

Նույնաբովանդակ սկզբունքներ են ամրագրված նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և դերի մասին 1994 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ (94) 12 հանձնարարականում, Եվրոպայի խորհրդի շրջանակներում 1998 թվականին ընդունված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայում (6.4-րդ կետ), որոնց համաձայն՝ օրենքով նախատեսված տարիքին հասնելուց հետո թոշակի անցած դատավորները պետք է ստանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը հնարավորինս մոտ է որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին: Միաժամանակ, «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի և դրան կից բացատրական գեկույցի 6.2-րդ կետի համաձայն՝ դատավորների վարձատրությունը միմյանց համեմատ կարող է տարբերվել՝ կախված պաշտոնավարման ժամկետից, դատավորների կողմից իրականացվող պարտականությունների բնույթից և նրանց առջև դրված խնդիրների կարևորությունից, որոնք պետք է գնահատվեն թափանցիկ պայմաններում (Ստրասբուրգ, 1998 թ.):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ Rec(2010)12 հանձնարարականի 54-րդ կետը սահմանում է, որ դատավորի կենսաթոշակը պետք է ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրա ստացած աշխատավարձի հետ:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում գործող Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ) կողմից 2010 թվականի նոյեմբերի 17-ին հաստատված՝ «Դատավորների հիմնարար սկզբունքների վերաբերյալ» խարտիայի 7-րդ կետն ամրագրում է, որ կողմնակի ազդեցությունից զերծ մնալու նպատակով դատավորները պետք է ապահովված լինեն օրենքով սահմանված համարժեք կենսաթոշակով: Նույն խորհրդի և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) համատեղ գեկույցի համաձայն՝ «չնայած այն հանգամանքին, որ դատարանների ֆինանսավորումը խորհրդարանի հաստատմանը ներկայացվող պետական բյուջեի մաս է, այն չպետք է ենթարկվի քաղաքական փոխհաջորդված քննարկումների: Չնայած այն հանգամանքին, որ ֆինանսավորման մակարդակը, որը

երկիրը կարող է տրամադրել իր դատարաններին, քաղաքական որոշման արդյունք է, այդուհանդերձ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել իշխանությունների բաժանման սկզբունքի վրա հիմնված համակարգի գործարկմանը՝ ապահովելու, որ ո՛չ գործադիր, և ո՛չ էլ օրենսդիր իշխանությունը որևէ ճնշում չգործադրի դատական իշխանության վրա բյուջեի հաստատման ժամանակ», մինևույն ժամանակ, դատարաններին այդ միջոցների հատկացման վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն դատական համակարգի անկախության նկատմամբ խստագույն հարգանքով (ԵԴԽԽ, թիվ 1 կարծիք, 62-րդ կետ, թիվ 2 կարծիք, 5-րդ կետ, Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2010) 004, 46-րդ կետ, Վենետիկի հանձնաժողով, CDL-AD (2010) 004):

Վենետիկի հանձնաժողովի 82-րդ լիազումար նիստի շրջանակներում ընդունված՝ «Դատավորների (դատական իշխանության) անկախության վերաբերյալ» գեկույցում (2010 թվականի մարտի 12-13) վերահաստատվում է դատական իշխանության անկախության օբյեկտիվ չափանիշներով պայմանավորված իրավական երաշխիքներ սահմանելու կարևորությունը, միաժամանակ արձանագրվում է. «Դատական իշխանության անկախությունն ունի ինչպես օբյեկտիվ բաղադրիչ՝ որպես Արդարադատության պարտադիր հատկանիշ, այնպես էլ սուբյեկտիվ բաղադրիչ՝ որպես անհատի՝ իր իրավունքները և ազատություններն անկախ դատավորի կողմից սահմանվելու իրավունք: Առանց անկախ դատավորների չի կարող լինել իրավունքների և ազատությունների ճիշտ և օրինական իրականացում: Հետևաբար, դատական իշխանության անկախությունն ինքնանպատակ չէ: Այն դատավորների անձնական առավելությունը չէ, այլ պայմանավորված է դատավորների՝ որպես մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորի դերի իրագործման անհրաժեշտությամբ» (բաժին 1, 6-րդ կետ):

Հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և դերի մասին 1994 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ (94) 12 հանձնարարականի դրույթները, ընդլայնելով դատավորների մասնագիտական արժանապատվության և պատասխանատվության մակարդակին համապատասխան նրանց վարձատրության չափն



օրենքով երաշխավորելու վերաբերյալ սկզբունքի կիրառումը՝ հանձնաժողովն իր գեկույցում արձանագրել է նաև դրանում կենսաթոշակի հարցերը ներառելու անհրաժեշտությունը (բաժին 6, 44-րդ կետ):

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ միջազգային իրավական վերոթվարկյալ փաստաթղթերում ամրագրված կարգավորումների համադրված վերլուծությունը վկայում է, որ.

- դատավորների անկախության սոցիալական երաշխիքներն ապահովող նորմատիվ կարգավորումները պետք է նպատակաուղղված լինեն դատավորների կողմից արդարադատություն իրականացնելու համար պատշաճ նախադրյալների ստեղծմանը,

- պետական բյուջեի շրջանակներում դատարանների ֆինանսավորման վերաբերյալ հարցերը, քաղաքական որոշման արդյունք լինելով հանդերձ, պետք է ընդունվեն դատական համակարգի անկախության նկատմամբ խստագույն հարգանքի պահպանման պայմաններում,

- կախված դատավորի վարձատրության չափից՝ կենսաթոշակի չափի որոշման անհրաժեշտությունը դատավորների անկախության սոցիալական երաշխիքների կարևոր բաղադրատարր է,

- դատավորի կենսաթոշակը, դրա չափը և կենսաթոշակի անցնելու տարիքը պետք է պատշաճ ձևով երաշխավորվեն օրենքով,

- դատավորները պետք է ապահովված լինեն օրենքով սահմանված համարժեք այնպիսի կենսաթոշակով, որը պաշտոնավարման ամբողջ ընթացքում զերծ կպահի նրանց կողմնակի ազդեցությունից,

- դատավորները պետք է ստանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը պետք է հնարավորինս մոտ լինի որպես դատավոր նրանց ստացած վերջին աշխատավարձի չափին, ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրանց ստացած աշխատավարձի հետ,

- դատավորների վարձատրությունը, հետևաբար նաև կենսաթոշակի չափը միմյանց համեմատ կարող է տարբերվել՝ կախված պաշտոնավարման ժամկետից, դատավորների կողմից իրականացվող պարտականությունների բնույթից և նրանց առջև դրված խնդիրների կարևորությունից, պատասխանատվության աստիճանից:

**4.3.** Անդրադառնալով սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականության գնահատման խնդրին՝ Սահմանադրական դատարանը կարևոր է համարում արձանագրել Սահ-

մանադրությամբ ամրագրված այն սկզբունքները, որոնց շրջանակներում պետք է կարգավորվեն դատավորի կենսաթոշակի իրավունքի իրականացման պայմանները:

Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի համաձայն՝ դատավորի համար սահմանվում է նրա **բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են սահմանադրական օրենքներով՝ Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական օրենսգրքով, իսկ դատավորի վարձատրության չափը սահմանվում է սովորական օրենքով:**

Սահմանադրության հիշյալ պահանջները մասամբ կոնկրետացվում են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ ամրագրվում է Սահմանադրական դատարանի դատավորի բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրության պահանջ, իսկ նույն հոդվածի 4-րդ մասում սահմանված է, որ Սահմանադրական դատարանի դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, կենսաթոշակի չափը չեն կարող պակասեցվել, բացառությամբ այն դեպքերի, երբ համամասնորեն պակասեցում կատարվում է բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար:

Նույնարժանիակ սկզբունքներ են նախատեսված նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ մյուս դատարանների դատավորների համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությամբ ամրագրված և դրանից բխող՝ դատավորների սոցիալական անկախության ապահովման հիմնարար պահանջները պետք է դրված լինեն նրանց վարձատրության, այդ թվում՝ կենսաթոշակի հետ կապված հարաբերությունները կարգավորող բոլոր օրենսդրական լուծումների հիմքում, մասնավորապես.

1) **բացառապես դատավորի բարձր կարգավիճակով և պատասխանատվությամբ**, այլ ոչ թե ընթացիկ քաղաքական, ներառյալ՝ սոսկ բյուջետային միջոցների խնայողության նկատառումներով պետք է պայմանավորված լինի դատավորի վարձատրության ցան-

կացած նորմատիվ կանոնակարգում, այդ թվում՝ վարձատրության և կենսաթոշակի չափերը, որոնք, իրենց հերթին, կոչված են, ի թիվս այլնի, գերծ պահել նրան կողմնակի ազդեցությունից, ինչը կանխորոշում է դատավորների բնականոն գործունեության համար առանձնահատուկ սոցիալական երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը,

2) դատավորների համար **արդեն իսկ սահմանված սոցիալական երաշխիքների մակարդակը**, այդ թվում՝ դատավորի աշխատավարձի (դրա նկատմամբ սահմանված հավելավճարների), ինչպես նաև նրա կենսաթոշակի չափը, **կարող է նվազեցվել բացառիկ դեպքերում, որպես վերջին այլընտրանք՝ համարժեք բարձր կարգավիճակ և պատասխանատվություն ունեցող այլ պաշտոնատար անձանց համար դրա նվազեցման հետ միաժամանակ**, ընդ որում, համաձայն Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի, առանց այդ նվազեցումը կարգավորող օրենքին հետադարձ ուժ տալու,

3) **դատավորների միջև վարձատրության**, այդ թվում՝ կենսաթոշակի չափի **տարբերակումը պետք է պայմանավորված լինի միայն օբյեկտիվ հանգամանքներով**, մասնավորապես՝ պաշտոնավարման տևողությամբ, դատավորների կողմից իրականացվող լիազորությունների բնույթով, ծավալով, նրանց պատասխանատվության աստիճանով, այլ ոչ թե առանձին դատավորների պաշտոնավարման առանձին ժամանակաշրջանով, այդ ժամանակաշրջանում ընթացիկ քաղաքականությամբ պայմանավորված լուծումներով, որևէ օրենքի ընդունման կամ ուժի մեջ մտնելու ամսաթվով, կամ դատավորի՝ կենսաթոշակի անցնելու որևէ ժամանակահատվածով,

4) թեև, ի տարբերություն դատավորի բարձր կարգավիճակի բոլոր մյուս երաշխիքները սահմանադրական օրենքներով սահմանելու սահմանադրական պահանջի (Սահմանադրության 164-րդ հոդվածի 11-րդ մաս), դատավորի վարձատրության, ներառյալ՝ կենսաթոշակի չափը, սահմանվում է **սովորական օրենքով** (Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի երկրորդ նախադասություն), այդուհանդերձ, **այդ օրենքը ևս պետք է համարժեք նախադրյալներ ապահովի՝ դատավորի բարձր կարգավիճակին և նրա պատասխանատվությանը համապատասխանող վարձատրության,**

այդ թվում՝ կենսաթոշակային ապահովման համար, ինչը չի կարող կախվածության մեջ դրվել Ազգային ժողովում և Կառավարությունում քաղաքական ուժերի սուսկ ընթացիկ հարաբերակցությունից և այդ մեծամասնության ընթացիկ ֆինանսական քաղաքականությունից,

5) պետք է հաշվի առնել, որ դատավորների բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող կենսաթոշակը և դրա չափը, նրանց գործունեության վարձատրության հետ միաժամանակ, հնարավորություն են տալիս դատավորներին կանխատեսելիորեն ունենալու այնպիսի իրավաչափ սպասելիքներ, ինչպիսիք են.

- իրենց կյանքը և գործունեությունը կենսաթոշակի անցնելու կապակցությամբ պաշտոնավարումից հետո պլանավորելը,

- կենսաթոշակային տարիքը լրանալու հեռանկարով պաշտոնեական գործունեության շրջանակներում անհարկի ազդեցություններով կաշկանդված չլինելը:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների կենսաթոշակի չափը պետք է ոչ միայն համարժեք լինի նրանց բարձր կարգավիճակին և պատասխանատվության աստիճանին, այլև ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրանց պաշտոնավարման դադարմանը նախորդող վարձատրության չափի հետ այն հաշվով, որ դատավորի սոցիալական անկախության երաշխավորված մակարդակն էապես չնվազի նրա պաշտոնավարման դադարման հիմքով, առավել ևս չփոփոխվի՝ կախված սուսկ ընթացիկ քաղաքական գործունեերից:

**4.4.** Օրենքի վիճարկվող իրավակարգավորումը համադրելով դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ կարգավորումների հետ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

1) Օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք է վերապահված դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած այն անձին, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով (լրացել է նրա 65 տարին), ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու

կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով (Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ),

2) Օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով սահմանված պետական կենսաթոշակների իրավունք ունեցող անձին նշանակվում է մեկ կենսաթոշակ՝ իր ընտրությամբ (Օրենքի 4-րդ հոդված),

3) Օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկվում է  $Կ=Հ*Գ+ՄՄ*ՄՄԱ$  բանաձևով, որտեղ՝ Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է, Հ-ն՝ Օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը, Գ-ն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակիցը, ՄՄ-ն՝ մասնագիտական ստաժը, ՄՄԱ-ն՝ մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը (Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս),

4) 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝ պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս մասնագիտական ստաժում հաշվառվում են մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները (Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մաս),

5) Օրենքով սահմանված կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը, գործակիցը փոխվելու դեպքում (Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս),

6) մասնագիտական ստաժը հաշվարկելու կարգը (մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները), հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մաս),

7) Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը, պաշտոնատար անձին նշանակված կենսաթոշակները հաշվարկվում են Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով: Եթե հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված (հաշվարկված) կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը շարունակվում է վճարվել նախկին չափով (Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մաս),

8) Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում,

9) վերոնշյալ անձանց՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով դատավորի լիազորությունների դադարեցման դեպքերում նշանակվող կենսաթոշակի չափը հաշվարկվում է դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով,

10) եթե վերոհիշյալ կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է Օրենքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը նշանակվում է Օրենքով սահմանված ընդհանուր կարգով,

11) վերոհիշյալ կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը:

Այսպիսով, ինչպես հետևում է դատավորի կենսաթոշակի հաշվարկման կարգի վերոնշյալ իրավապայմանների վերլուծությունից՝

1) Օրենքով տարբերակվում են դատավորի կենսաթոշակի հաշվարկման կարգի ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ (անցումային) իրավապայմաններ՝ ելնելով անձանց շրջանակներից (մասնավորապես՝ Օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած կամ 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված պետական պաշտոն զբաղեցրած անձանց շրջանակներից), ընդամին՝ Օրենքի հիմնական մասով սահմանված նորմերի գործողությունը զուգորդվում է տարբերակված կարգավորումներ ամրագրող անցումային դրույթներով,

2) մեկից ավելի կենսաթոշակների իրավունք ունեցող անձին նշանակվում է մեկ կենսաթոշակ՝ իր ընտրությամբ, ինչը հնարավորություն է ստեղծում ընտրելու առավել նախընտրելի պայմաններով ու չափով կենսաթոշակը,

3) կենսաթոշակի չափի հաշվարկման ընդհանուր բանաձևում, ի թիվս այլ հավելումների, հաշվի է առնվում դատավորի պաշտոնի համար սահմանված դրույքաչափի առավելագույն գործակիցը, ինչը համահունչ է կենսաթոշակի չափը՝ որպես դատավոր ստացած վերջին աշխատավարձի չափին հնարավորինս մոտ լինելու վերաբերյալ միջազգային չափանիշներին,

4) նախատեսված է սահմանված կենսաթոշակի չափը՝ վերջինիս բաղադրատարրերի չափերի փոփոխմանը համահունչ, վերահաշվարկելու հնարավորություն,

5) նախատեսված է Օրենքով հաշվարկված կենսաթոշակի և մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը նշանակված (հաշվարկված) կենսաթոշակի միջև ընտրության հնարավորություն:

Սահմանադրական դատարանը միաժամանակ փաստում է, որ Օրենքով սահմանված կենսաթոշակի հաշվարկման ընդհանուր կարգը չի տարածվում այն անձանց վրա, որոնք նույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում:

**4.5.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործի նյութերից, մասնավորապես՝ նաև օրենքն ընդունած պատասխանող կողմի՝ Ազգային ժողովի բացատրություններից հետևում է, որ տարբեր դատավորների կենսաթոշակի չափը որոշելիս՝ կախված նրանց պաշտոնավարման դադարման կոնկրետ ժամանակահատվածից և այդ ժամանակահատվածում ընդունված օրենքներից, կենսաթոշակի հաշվարկման և տարբերակված մոտեցման հիմքում դրվել են հատկապես Հայաստանի Հանրապետությունում այդ օրենքների ընդունման պահին առկա տնտեսական գործոններին, պետության ֆինանսական հնարավորություններին վերաբերող՝ ընթացիկ քաղաքական նկատառումներ, և առկա չէ որևէ հիմնավորում՝ Օրենքի վիճարկվող դրույթի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթների, հատկապես նաև դատավորների կենսաթոշակի չափի էական նվազեցմանը վերաբերող դրույթների ընդունմանը և ուժի մեջ մտնելուն նախորդող իրավա-

կարգավորումները փոփոխելու վերաբերյալ, որը հրատապ անհրաժեշտություն և վերջին այլընտրանք կլիներ պետության ֆինանսական քաղաքականության հրամայական պահանջները կատարելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սոցիալական ապահովության ոլորտում, հաշվի առնելով Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սկզբունքը՝ փոխկապակցված Սահմանադրության 3-րդ գլխում սահմանված օրենսդրական երաշխիքների և պետության քաղաքականության հիմնական նպատակների հետ, պետությունն ունի սկզբունքորեն լայն հայեցողություն քաղաքականություն մշակելու և այն իրականացնելու հարցերում, այդ թվում՝ հիմնվելով տնտեսական և ֆինանսական ընթացիկ հնարավորությունների վրա՝ մինևույն ժամանակ այդ սահմաններում գործադրելով Սահմանադրությամբ կանխորոշված հնարավոր ջանքերը՝ սոցիալական ապահովության մակարդակը հետևողականորեն բարելավելու ուղղությամբ: Այս ոլորտում հանրային իշխանության մարմինների գործունեության սահմանադրականության գնահատումը ենթադրում է պետության նման հայեցողության և նրա սոցիալ-տնտեսական հնարավորությունների հաշվառման անհրաժեշտություն:

Մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների անկախության բաղադրիչ հանդիսացող սոցիալական ապահովության հատուկ երաշխիքները չեն կարող նույնացվել սոցիալական ապահովության ընդհանուր երաշխիքների հետ, մինչդեռ այդ մոտեցումն է դրվել պատասխանողի դիրքորոշումների հիմքում:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ դատավորների՝ Սահմանադրությամբ երաշխավորված անկախությունը չի կարող ունենալ վերացական բնույթ: Այն ենթադրում է, ի թիվս այլնի, նաև սոցիալական անկախության այնպիսի պարտադիր նախադրյալներ, որոնք անհրաժեշտ և բավարար են դատարանների և ամբողջ դատական իշխանության բնականոն գործունեությունը երաշխավորելու համար: **Ուստի, դատավորների համար նրանց բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող կենսաթոշակի սահմանումը ոչ թե նրանց տրվող արտոնություն է, այլ հանրային, առաջին հերթին՝ արդարադատության շահերի պաշտպանության սահմանադրորեն պահանջվող միջոց:**



Հետևաբար, սույն որոշումից բխող իրավակարգավորումները դատավորների անկախության այլ երաշխիքների ապահովմանը զուգահեռ պետք է միտված լինեն դատավորների անկախության սոցիալական երաշխիքների ամրապնդմանը:

Հայաստանի Հանրապետության միջազգային հանձնառություններից է նաև ոչ միայն դատավորի և դատարանների անկախության երաշխիքների առկա մակարդակի պահպանումը, այլև դրա շարունակական ամրապնդումը: Ուստի, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների անկախության սոցիալական երաշխիքների, ներառյալ՝ նաև նրանց կենսաթոշակի չափի նվազեցումը՝ առանց Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջներից բխող հիմնավոր (օբյեկտիվ) պատճառի, հակասում է Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասում ամրագրված սկզբունքին:

Ինքնին թույլատրելի գնահատելով դատավորների միջև նախորդող և հետագա ժամանակահատվածների համար կենսաթոշակի չափի նվազեցումը՝ առանց դրան հետադարձ ուժ հաղորդելու, Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն հիմնավորելու համար բավարար չէ բյուջեի խնայողության կամ ընթացիկ քաղաքական և տնտեսական գործոնների մատնանշումը: Հետևապես, կենսաթոշակի չափի տարբերակումը՝ պայմանավորված ինքնին դատավորների կենսաթոշակի անցնելու որևէ ժամանակահատվածով կամ այդ ժամանակահատվածում որդեգրված ընթացիկ քաղաքականությամբ, չի կարող գնահատվել որպես դատավորների միջև կենսաթոշակի չափի օբյեկտիվ և Սահմանադրության տեսանկյունից արդարացված տարբերակում:

Միննույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորմամբ չի խախտվել Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, քանի որ վիճարկվող իրավակարգավորումը չի տարածվում դրա ընդունմանը և ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա: Բացի դրանից, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորն ինքնին չի կարող լեզիտիմ ակնկալիքներ (սպասելիքներ) ունենալ իր վարձատրության սահմանված չափի, այդ թվում՝ դեռևս չնշանակված կենսաթոշակի չափի անփոփոխելիության նկատմամբ՝ պայմանով, որ նրա կենսաթոշակի չափի փոփոխությունը պայմանավորված է Սահմանադրության գերակայող սկզբունքների

և նորմերի երաշխավորման անհրաժեշտությամբ, այսինքն՝ արդարացվում է բացառիկ իրավիճակով, վերջին այլընտրանքային միջոցն է, և իրականացվում է հանրային ծառայության ամբողջ համակարգում՝ դատավորի բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող այլ պաշտոնատար անձանց համար սահմանված համամասնություններին համապատասխան, ինչպես նաև խստագույնս պահպանելով դատական իշխանության և դատավորների անկախության այլ երաշխիքներ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը այնքանով, որքանով նույնպիսի չարդարացված հիմքերով տարբերակված մոտեցում է նախատեսել 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված՝ դատավորի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս մասնագիտական ստաժում մինչև 2014 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածները սահմանափակելու մասով, նույնպես հակասում է Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ դատական իշխանության անկախության երաշխավորման սահմանադրաիրավական նպատակների իրացման անհրաժեշտության տեսանկյունից խնդրահարույց են մասնագիտական ստաժը հաշվարկելու կարգը (մասնագիտական ստաժում հաշվառվող ժամանակահատվածները), հիմնական կենսաթոշակի չափը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը, ինչպես նաև դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը «գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը հաշվարկելու կարգը սահմանելու» իրավասությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահելու վերաբերյալ Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով և 9-րդ հոդվածի 6-րդ մասի չորրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումները: Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի ընդհանուր տրամաբանությունից, միջազգային իրավական պրակտիկայում ամրագրված սկզբունքներից է բխում դատավորների կենսաթոշակի չափին ու հաշվարկման կարգին վերաբերող հարաբերությունները բացառապես օրենքով կարգավորելու պահանջը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2016 թվականի սեպտեմբերի 16-ի ՄԴՈ-1302 որոշմամբ Սահմանադրական դատարանն արդեն անդրադարձել է Օրենքի 9-րդ հոդ-

վածի 6-րդ մասի սահմանադրականության հարցին՝ այն իր այդ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, ընդ որում, Սահմանադրական դատարանի դիրքորոշումները, ի թիվս այլնի, հանգում էին նրան, որ **Օրենքով դատավորների անկախության համարժեք սոցիալական երաշխիքներ չեն ապահովվում**, ինչպես նաև հիմք ընդունելով այն փաստը, որ Սահմանադրության 7-րդ գլխի դրույթները, ներառյալ սույն գործով սահմանադրականությունը գնահատելու հիմք ծառայած Սահմանադրության 164-րդ հոդվածի՝ դատավորների բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրության հատուկ պահանջին վերաբերող 10-րդ մասը, ուժի մեջ են մտել Հանրապետության ներկայիս նախագահի կողմից պաշտոնն ստանձնելու օրը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 10-րդ մասի և 68-րդ հոդվածի 16-րդ մասի 1-ին կետի՝ Սահմանադրական դատարանը վերանայում է իր ՄԴՈ-1302 որոշումը, քանի որ սույն գործի քննության պահի դրությամբ Սահմանադրության Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1302 որոշմամբ կիրառված դրույթները փոփոխված են եղել:

Ելնելով գործի քննության արդյունքներից, հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 4-րդ մասը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածների՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերությունը ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին հակասող:

2. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն

հողվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ «մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրանկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով» դրույթի մասով, ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին հակասող:

3. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին հակասող:

4. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Սահմանադրության 29-րդ հոդվածին և 164-րդ հոդվածի 10-րդ մասին հակասող:

5. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերության հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի չորրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը, ինչպես նաև նույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ դատավորներին վերաբերող մասով, ճանաչել Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասին հակասող:

6. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետի և 19-րդ մասի, ինչպես նաև 71-րդ հոդվածի 10-րդ մասի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին նշ-

ված դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման բաց՝ դատավորների կենսաթոշակային ապահովության ոլորտում, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2019 թվականի հոկտեմբերի 30-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

7. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

18 հունիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1463



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ**

**Հ Ա Տ ՈՒ Կ Կ Ա Ր Ծ Ի Ք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ  
ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ՝  
«ԱՌՆՎԱԶՆ 10 ՏԱՐԻ» ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ  
ՄԱՍՈՎ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1463 որոշման պատճառաբանական եւ եզրափակիչ մասերի վերաբերյալ ունեմ առարկություններ:

1. Որոշման պատճառաբանական մասում անդրադառնալով Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասում՝ դատավորի համար նրա բարձր կարգավիճակին եւ պատասխանատվությանը համապատասխանող վարձատրության սահմանադրաիրավական բովանդակությանը (որոշման 4.3-րդ եւ 4.5-րդ կետեր)՝ «վարձատրություն» եզրույթի համատեքստում կենսաթոշակը որպես վարձատրության բաղադրատարր դիտարկելը չի բխում «վարձատրության» ինչպես տնտեսագիտական ընդհանուր, այնպես էլ իրավական կոնկրետ բովանդակությունից: Թե՛ տնտեսագիտական եւ թե՛ իրավական իմաստով այն, ըստ էության, սահմանված կարգով նախատեսված աշխատանքները կատարելու (ծառայությունները մատուցելու) դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է, որը ներա-

ռում է աշխատողին վճարվող հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ աշխատավարձը (լրացուցիչ վարձատրությունը, հավելվածարը, լրավճարը, պարգևավճարը): «Վարձատրություն» եզրույթի նման բովանդակությունը բխում է ՀՀ օրենսդրության մի շարք ակտերից (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հանրային ծառայությունը կարգավորող օրենքներ և այլն): Այդ եզրույթն ունի կոնկրետ եւ տարածական մեկնաբանման չենթարկվող բովանդակություն եւ չի կարող ընդգրկել սոցիալական ապահովության իրավունքի իրացման այնպիսի միջոց, ինչպիսին կենսաթոշակն է, որը գործով քննության առարկայի շրջանակներում նաեւ դատավորի կարգավիճակի առանձնահատկությունը բնորոշող կարելու պայման է: Հետեւաբար, դատավորի կենսաթոշակային ապահովության իրավունքի երաշխավորման, իրացման կարգի ու պայմանների օրենսդրական կարգավորումների սահմանադրականության գնահատման հարցը դիտարկելի է ոչ թե Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի, այլ՝ նույն հոդվածի 11-րդ մասի համատեքստում եւ այն շեշտադրամբ, որ դատավորի սոցիալական ապահովության, այդ թվում՝ կենսաթոշակի անցնելու երաշխիքները, որպես նրա կարգավիճակին վերաբերող մանրամասներ, պետք է նախատեսվեն համապատասխանաբար «Սահմանադրական դատարանի մասին» եւ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքներով, այլ ոչ թե՝ ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող օրենքներով կամ, նույնիսկ, ենթաօրենսդրական ակտերով, ինչն առկա է օրինակ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով եւ 9-րդ հոդվածի 6-րդ մասի չորրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումների առնչությամբ:

2. Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասում «օրենք» եզրույթը, ելնելով նույն հոդվածի 11-րդ մասի իրավակարգավորման առանձնահատկությունից, կարծում եմ՝ չպետք է ընկալվի նեղ իմաստով: Չեն կարող դատավորի բարձր կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվել սահմանադրական օրենքներով, իսկ վարձատրության չափի՝ որպես այդ կարգավիճակը բնորոշող

ոչ պակաս կարեւոր չափորոշիչ վերաբերյալ իրավակարգավորումները նախատեսվել ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող օրենքով: Հակառակ մեկնաբանման դեպքում Սահմանադրության 164-րդ հոդվածի 10 եւ 11-րդ հոդվածների բովանդակությունը կհանգեցնի տարբերման:

Ամփոփելով գտնում եմ, որ որոշման եզրափակիչ մասում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը պետք է գնահատվեր ոչ միայն Սահմանադրության 29-րդ հոդվածի եւ 164-րդ հոդվածի 10-րդ մասի, այլեւ՝ նույն հոդվածի 11-րդ մասի իրավակարգավորման համատեքստում:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ

Հ. ՆԱԶԱՐՅԱՆ





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ  
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 169-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 140-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունիսի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական փորձաքննության վարչության իրավական ապահովման բաժնի պետ Ա. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019  
209

դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի և 140-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է՝ 09.02.2018թ., Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 27.02.2018թ. և ուժի մեջ է մտել 09.04.2018թ.:

Օրենսգրքի՝ «Հակընդդեմ հայց ներկայացնելը» վերառությամբ 140-րդ հոդվածի վիճարկվող 4-րդ մասը սահմանում է.

«4. Սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված հիմքով հակընդդեմ հայց չներկայացնելը պատասխանողին զրկում է հետագայում այնպիսի հայց ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառել սկզբնական հայցի բավարարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է սույն հոդվածով սահմանված կարգով հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով»:

Օրենսգրքի՝ «Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը» վերառությամբ 169-րդ հոդվածի վիճարկվող 2-րդ մասը սահմանում է.

«2. Հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բողոք ներկայացվելու դեպքում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացվում է այդ բողոքի վերաբերյալ կայացված եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո»:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածները լրացումների և փոփոխությունների չեն ենթարկվել:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի մարտի 6-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է նույն դատարանի 2019 թվականի փետրվարի 27-ի՝ ԵԴ/6306/02/18 գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի համապատասխան նորմերը, վերջիններիս հետ փոխկապակցված ՀՀ օրենսդրության այլ նորմերը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**։

**1. Դիմողի դիրքորոշումները**

Հղումներ կատարելով Սահմանադրության, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի նորմերին, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին, դիմողը գտնում է, որ դատարան դիմելիս անձը պետք է վստահ լինի, որ կարող է արդյունավետ կերպով իրացնել իր պաշտպանության իրավունքը՝ առանց օրենքով նախատեսված այնպիսի խոչընդոտների, որոնք «անձի խախտված իրավունքի իրացման ճանապարհին տևական ժամանակ կարող են ստեղծել արդյունավետ դատական պաշտպանության և իր գործը ողջամիտ ժամկետում քննվելու իրավունքի էությանը հակասող փակուղային այնպիսի մի իրավիճակ, որը կախված չէ դատարանի և անձի դատավարական իրավունքների իրացման ելքից»:

Ըստ դիմողի՝ «Դատական վարույթի ինչպես հրապարակային, արդար, այնպես էլ՝ արդյունավետ և արագ բնութագրիչները արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում կամ օրենսդրորեն դրանց այդ իրավունքի էությանը համարժեք ընթացք չի ապահովվում»: Ներպետական օրենսդրությամբ կարող են նախատեսվել վերը նշված իրավունքների վերաբերյալ օրինական որոշ սահմանափակումներ, քանի որ այդ իրավունքները բացարձակ չեն, սակայն դրանց սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ չզրկի անձին դատական պաշտպանության արդյունավետ միջոցից և գործը ողջամիտ ժամկետում քննվելու իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը:

Դիմողը գտնում է, որ դատարանների գործունեությունը ղեկավարող և բուն դատավարությունը կանոնակարգող օրենսգրքով այնպիսի նորմեր սահմանելը, որոնք պրակտիկայում կարող են ստեղծել այնպիսի իրավիճակներ, երբ դատավարությունը տևական ժամանակահատվածում կարող է կաթվածահար լինել, դատարանին, այլ ելք չթողնելով, կարող է մատնել անգործության:

Հետևաբար, դիմողը գտնում է, որ արդյունավետ դատական պաշտպանության և դատարանի կողմից իր գործը ողջամիտ ժամկետում քննության առնվելու իրավունքների բուն էությանը հակասող կարգավորումների պատճառով անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքների խախտման տեսանկյունից:

Դիմողի եզրահանգմամբ՝ Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասը և դրա հետ փոխկապակցված 140-րդ հոդվածի 4-րդ մասը հակասում են Սահմանադրությանը, քանի որ չեն ապահովում անձի արդյունավետ դատական պաշտպանության և գործը ողջամիտ ժամկետում քննելու հիմնական իրավունքների էությանը համարժեք օրենսդրական կարգավորում:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ սահմանադրաիրավական վեճի առարկայի շրջանակներում անձին երաշխավորված իրավունքներով վերապահված և դատավարական նորմերով նախատեսված հակընդդեմ հայց ներկայացնելու ընթացակարգերի ապահովումը և դրանով հետապնդվող նպատակները բացառապես միտված են «արդար դատաքննության իրավունքի կայացմամբ պայմանավորված ողջամիտ ու արդարացի հավասարակշռության ապահովմանը»: Ըստ պատասխանողի խախտված իրավունքները վերականգնելու նպատակով «աժանցյալ իրավահարաբերությունից ծագող, այսինքն՝ հիմնական իրավահարաբերության իրավական հետևանքների վերացմանն ուղղված պահանջը դատարան առանձին ներկայացնելու դեպքում դատարանը գործնականում զրկվում է տվյալ գործի վերաբերյալ արդարացի որոշում կայացնելու հնարավորությունից, խախտվում է անձի արդար դատաքննության իրավունքը, քանի որ արդար որոշում կայացնելու համար դատարանը պետք է իրականացնի գործի հանգամանքների բազմակողմանի, լիարժեք և օբյեկտիվ ուսումնասիրություն»: Հետևաբար, ինչպես գտնում է պատասխանողը, Օրենսգրքի վիճարկվող դրույթներով ամրագրված՝ հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավական ընթացակարգերի սահմանումն ու կանոնակարգումը կոչված են բացառելու դատական պաշտպանության ոչ արդյունավետ միջոցները: Ուստի, ինչպես կարծում է պատասխանողը, Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասը և 140-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում են Սահմանադրության պահանջներին:

**3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք վիճարկվող դրույթներով նախատեսված իրավակարգավորումներով երաշխավորվում են անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության և ողջամիտ ժամկետում քննության իրավունքները,

- արդյո՞ք երաշխավորված է ողջամիտ ժամկետում դատական պաշտպանության իրավունքի էության անխախտելիությունը՝ հաշվի առնելով ինչպես Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, այնպես էլ միջազգային փորձը,

- պահպանվե՞լ են իրավակարգավորմամբ ընտրված միջոցի և սահմանված նպատակին հասնելու պիտանիության սահմանադրաիրավական չափանիշները,

- ապահովվե՞լ է կանխորոշված նպատակին նպատակաուղղված արդյունավետ ընթացակարգերի երաշխավորումը:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սույն գործով վիճարկվող կարգավորումների իրավական բովանդակությունը հանգում է հակընդդեմ հայց ներկայացնելու դատավարական իրավունքի իրացման ընդհանուր պայմանների սահմանմանը՝ կապված գործի քննության տվյալ փուլի որոշակի առանձնահատկությունների և լուծման ենթակա խնդիրների հետ: Սահմանադրական դատարանն իր՝ ՄԴՈ-1289 և ՄԴՈ-1315 որոշումներով անդրադառնալով այդ իրավունքի բովանդակությանն ու իրացման խնդիրներին՝ կապված հանրային իրավահարաբերություններից ծագող (վարչական) գործերով դատական քննության առանձնահատկությունների հետ, ընդհանուր գնահատմամբ մատնանշել է, որ.

- հակընդդեմ հայցի ինստիտուտի իրավակարգավորման հիմնական խնդիրն է դատավարական անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ նախատեսել ողջամիտ ժամկետում գործի քննության՝ անձի իրավունքի իրավաչափ իրացումը երաշխավորելու համար,

- հակընդդեմ հայցի ինստիտուտը հնարավորություն է տալիս մեկ դատավարության ընթացքում մեկ դատական ակտով լուծել կողմերի փոխադարձ պահանջները և դատավարական նվազագույն ուժերի ու միջոցների կիրառմամբ դատական գործընթացն իրականացնել առավել արդյունավետությամբ,

- հակընդդեմ հայցը, հանդիսանալով պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոց, նպատակ ունի նպաստել արդյունավետ դատական պաշտպանության՝ նրա իրավունքի իրացմանը և ապահովել արդար դատաքննության իրավունքի բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության՝ անձի իրավունքի իրականացումը:

Ինչպես վկայում է սույն գործով վիճարկվող և դրանց հետ փոխկապակցված այլ նորմերի համադրված վերլուծությունը, «հակընդդեմ հայցը», քաղաքացիական դատավարությունում լինելով հայցի դեմ պատասխանողի պաշտպանության իրավական նույնպիսի միջոց և կառուցակարգ, նպատակ ունի քաղաքացիական հարաբերություններից ծագած գործերով հնարավորություն ընձեռել պատասխանողին, ինչպես նաև դատարանին

- կատարել հաշվանցում (փոխադարձ պահանջների և պարտավորությունների հաշվառում) սկզբնական հայցի հետ,

- ամբողջությամբ կամ մասնակի մերժել սկզբնական հայցը, իրականացնել վեճի համատեղ քննություն հաշվի առնելով սկզբնական և հակընդդեմ հայցերի միջև փոխադարձ կապը,

- ապահովել գործի առավել արագ և արդյունավետ լուծումը:

Վերոթվարկյալ խնդիրների լուծմամբ «հակընդդեմ հայցի» կառուցակարգի կիրառումն ունի իրավունքի պաշտպանության նպատակ, որի իրացման արդյունավետությունն օրենսդիրը կարևորել է հատկապես նախնական դատական նիստի շրջանակներում և դրանով պայմանավորված՝ հայցից պաշտպանվելու դատավարական նման միջոցից պատասխանողի օգտվելու սահմանափակ հնարավորություն է նախատեսել: Վերջինս, որպես կառուցակարգային ընդհանուր սկզբունք և իրավակարգավորման միջոց, միտված է երաշխավորելու արդար հավասարակշռություն, մի կողմից՝ կողմերի դատավարական իրավունքների և պարտականությունների իրացման հնարավորության, մյուս կողմից՝ գործն արդարացի և ողջամիտ ժամկետում սկզբնական և հակընդդեմ հայցերը համա-

տեղ քննելու և որոշում կայացնելու դատարանի պարտականության միջև: Մասնավորապես, այդ նպատակին են ուղղված Օրենսգրքի 140-րդ հոդվածում նախատեսված իրավակարգավորումները, համաձայն որոնց՝ պատասխանողն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի որոշման կայացումը հակընդդեմ հայց ներկայացնել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ այն համատեղ քննելու համար: Հակընդդեմ հայց ներկայացնելու, այն վարույթ ընդունելու, դրա ընդունումը մերժելու կամ այն հակընդդեմ հայցվորին վերադարձնելու հետ կապված հարցերը ենթակա են լուծման՝ հայցադիմումին վերաբերող իրավակարգավորումներին համապատասխան (1-ին և 2-րդ մասեր):

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ հակընդդեմ հայցի քննության արդյունավետության երաշխիքներ են նախատեսված Օրենսգրքի այլ իրավակարգավորումներում նույնպես՝ կապված նման հայցի ներկայացման դեպքում հեռակա դատաքննության (292-րդ հոդվածի 4-րդ մաս), պարզեցված վարույթի կարգով գործ քննելու (297-րդ հոդվածի 3-րդ մաս), ինչպես նաև արագացված դատաքննության (306-րդ հոդվածի 1-ին մաս) արգելքների հետ:

Այդպիսով, օրենսդիրը համարժեք երաշխիքներ է նախատեսել քաղաքացիական գործով հայցը և հակընդդեմ հայցը հավասար իրավապայմանների շրջանակներում քննության ընդունելու, ապացույցները ներկայացնելու, դրանք հետազոտելու, գնահատելու և դատաքննության արդյունքներով գործով ըստ էության որոշում կայացնելու համար:

Նույնպիսի նպատակ են հետապնդում Օրենսգրքի 140-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 4-րդ մասի իրավակարգավորումները: Օրենսդիրը, ըստ էության առաջնորդվելով արդարադատության արդյունավետության երաշխավորման անհրաժեշտությամբ, հակընդդեմ հայց չներկայացնելու որոշակի դեպքերում սահմանափակել է պատասխանողի կողմից իր իրավունքների պաշտպանության հայց ներկայացնելու հետագա հնարավորությունը, բացառությամբ, երբ նա հիմնավորում է սահմանված կարգով հակընդդեմ հայց ներկայացնելու անհնարիությունը՝ իրենից անկախ պատճառների հիմքով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս համատեքստում «հակընդդեմ հայցի» կառուցակարգն իր իրավակարգավորիչ նշանակությամբ և անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդար և արդյունավետ իրագործման տեսանկյունից հետապնդում է իրավական ընդհանուր այնպիսի նպատակներ, որոնք ինքնին համահունչ են Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում և 63-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավապայմաններին: Հետևաբար, Սահմանադրական դատարանը սույն գործով քննության առարկայի շրջանակներում վերահաստատում է իր՝ ՍԴՈ-1289 և ՍԴՈ-1315 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները:

**4.2.** Անդրադառնալով գործի քննության ժամկետի ողջամտության գնահատման միջազգային փորձին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, որ դատարանի մատչելիությունը կարող է ունենալ որոշակի ընթացակարգային և ժամանակային սահմանափակումներ, որոնք, սակայն, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը և, որ դատավարական ժամկետների սահմանումը գործով վարույթի կանոնակարգման և հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացման նպատակ է հետապնդում:

Սահմանադրական դատարանը կարևորում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հաստատագրած հետևյալ չափանիշները.

- անդամ պետություններն իրենց իրավական համակարգը պետք է կազմակերպեն այնպես, որ երաշխավորվի ողջամիտ ժամկետում դատական որոշումներ ձեռք բերելու իրավունքը, չափազանց մեծ ծանրաբեռնվածությունը չի կարող հաշվի առնվել որպես արդարացում (*Vocatur v. Italy*, § 17, *Cappello v. Italy* § 17),

- գործերի քննությունն արագացնելու համար նախատեսված բարեփոխումների ներդրումը չի կարող արդարացնել ձգձգումները, քանի որ պետությունները պարտավորվում են այնպես կազմակերպել նման միջոցների ուժի մեջ մտնելն ու կիրարկելը, որ խուսափեն քննության փուլում գտնվող գործերի քննությունը երկարաձգելուց (*Fisanotti v. Italy*, § 22),

- քրոնիկ ծանրաբեռնվածությունը չի կարող արդարացնել վարույթի չափազանց երկար տևողությունը (*Probstmeier v. Germany*, § 64),



- պայմանավորվող պետություններն իրենք են կազմակերպում իրենց իրավական համակարգերն այնպես, որ իրենց դատարանները կարողանան երաշխավորել, որ յուրաքանչյուր ոք ողջամիտ ժամկետում ձեռք բերի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վեճերի մասին վերջնական որոշում (Scordino v. Italy (No. 1) [ՄՊ], § 183),

- այնպիսի իրավական համակարգերում, որոնցում կիրառվում է այն սկզբունքը, որ ընթացակարգի իրականացման նախաձեռնությունը վերապահվում է կողմերին, վերջիններիս վերաբերմունքը դատարաններին չի ազատում արագ կերպով դատաքննությունն ապահովելու պարտավորությունից, ինչը պահանջվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետով (Pafitis and Others v. Greece, § 93, Tierce v. San Marino, §31, Sürmeli v. Germany [ՄՊ], §129),

- միայն պետությանը վերագրելի ձգձգումները կարող են արդարացնել «ողջամիտ ժամկետի» պահանջը չբավարարելու մասին եզրահանգումը (Buchholz v. Germany, §49, Papageorgiou v. Greece, §40, Humen v. Poland [ՄՊ], § 66),

- դիմումատուի վարքագիծը համարվում է օբյեկտիվ փաստ, որը չի կարող վերագրվել պատասխանող պետությանը, և որը պետք է հաշվի առնել՝ որոշելու համար, թե արդյոք Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված ողջամիտ ժամկետը գերազանցվել է, թե ոչ (Poiss v. Austria, § 57, Wiesinger v. Austria, § 57, Humen v. Poland [ՄՊ], § 66): Դիմումատուի վարքագիծն ինքնին չի կարող օգտագործվել որպես միջոց՝ անգործության ժամանակահատվածն արդարացնելու համար,

- դիմումատուներից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով ոչ պահանջվում է ակտիվորեն համագործակցել դատական մարմինների հետ, ո՛չ էլ նրանց կարելի է մեղադրել ներպետական օրենսդրությամբ նրանց համար հասանելի իրավական պաշտպանության միջոցներից լիովին օգտվելու համար (Erkner and Hofauer v. Austria, § 68): Տվյալ անձից պահանջվում է միայն ողջամտություն ցուցաբերել իրեն առնչվող դատավարական քայլերի կատարման հարցում, ձեռնպահ մնալ ձգձգելու հնարքների գործադրումից և օգտվել ներպետական օրենսդրությամբ տրամադրվող շրջանակներից վարույթը կրճատելու համար (Unión Alimentaria Sanders SA v. Spain, §

35): Այնուամենայնիվ, եթե խնդիրները ներպետական ընթացակարգերի կազմակերպական բարդությունների արդյունք են, և հետևաբար, օբյեկտիվորեն վերագրելի են պետությանը, ապա դրանք կարող են մեկնաբանվել ոչ հոգուտ պատասխանող պետության: Սա այն դեպքն է, երբ ներպետական իրավունքն անհրաժեշտ է համարում հաջորդաբար դիմել տարբեր տեսակի դատարաններ<sup>1</sup>:

**4.3.** Անդրադառնալով Օրենսգրքի վիճարկվող 169-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման սահմանադրականության խնդրին, դիտարկելով այն Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, 75, 78 և 80-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ իրավակարգավորման էությունը նախնական դատական նիստում ապացուցման պարտականությունը բաշխելու հարցի լուծումը հետաձգելն է այն դեպքում, երբ հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկվել է վերադաս դատական ատյանին:

Դրա միջոցով օրենսդիրը փորձել է հասնել հետևյալ նպատակներին.

1) հակընդդեմ հայցվորը, մինչև գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելը, հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին դատարանի որոշումը վիճարկելու միջոցով հնարավորություն է ստանում նյութաիրավական իմաստով պաշտպանել իր իրավունքները,

2) գործին մասնակցող անձանց համար կոնկրետ գործով որոշակի և կանխատեսելի են դառնում Օրենսգրքի 169-րդ հոդվածի 3-րդ մասով ուրվագծված ապացուցման սահմանները,

3) ապահովվում է գործի առավել արդյունավետ քննությունը:

Այսպիսով, Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով սկզբնական հայցով գործը դատաքննության չի կարող նշանակվել, քանի դեռ օրինական ուժի մեջ չի մտել հակընդդեմ հայցը

<sup>1</sup> Օգտագործվել են հետևյալ աղբյուրները՝ ՄԻԵԴ, Ուղեցույց Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ արդար դատաքննության իրավունք (քաղաքացիաիրավական հայեցակետ) [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_6\\_HYE.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_HYE.pdf), Human Rights Files No. 16, The length of civil and criminal proceedings in the case-law of the European Court of Human Rights, Council of Europe Publishing, [https://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRFILES/DG2-EN-HRFILES-16\(2007\).pdf](https://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRFILES/DG2-EN-HRFILES-16(2007).pdf), European Commission for Efficiency of Justice (CEPEJ), Length of Court Proceedings in the Member States of the Council of Europe Based on the Case-Law of the European Court of Human Rights, <https://rm.coe.int/1680747c36>

վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բողոքի վերաբերյալ կայացված եզրափակիչ դատական ակտը: Թեև հակընդդեմ հայցվորի կողմից բողոք ներկայացնելու փաստով սկզբնական հայցով հայցվորի գործի արագ և արդյունավետ լուծման հնարավորությունը որոշակի ժամանակահատվածով հետաձգվում է, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական միջոցներն ինքնին պիտանի և անհրաժեշտ են նախանշված նպատակին հասնելու համար, քանի որ քաղաքացիական տվյալ գործի քննության շրջանակներում միտված են երաշխավորելու ինչպես հայցվորի (հակընդդեմ պատասխանողի), այնպես էլ պատասխանողի (հակընդդեմ հայցվորի) իրավունքների հավասարակշռված պաշտպանությունը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հակընդդեմ հայց ներկայացնելու, ինչպես նաև հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին դատարանի որոշումը բողոքարկելու (իսկ դրանով պայմանավորված՝ նաև ապացուցման պարտականությունը բաշխելու և գործի հետագա քննությունը շարունակելու հարցերի լուծումը հետաձգելու) միջոցով պատասխանողն իր դեմ ներկայացված պահանջներից պաշտպանվելու և այն սկզբնական հայցի հետ համատեղ քննելու իրավական հնարավորություն է ստանում: Նման իրավակարգավորումն ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում: Սակայն, այդ հնարավորության իրացման կառուցակարգերը կոնկրետ իրավահարաբերության շրջանակներում պետք է համապատասխանեն համաչափության և արդյունավետության սկզբունքներին և համահունչ լինեն դատական պաշտպանության իրավունքի և այն իրացնելու եղանակների սահմանադրաիրավական բովանդակությանը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի, 75 և 78-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակության համատեքստում պետք է նախատեսվեն նաև սկզբնական հայցի շրջանակներում գործով արդար դատաքննության իրականացումն ապահովող արդյունավետ ընթացակարգեր: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բողոքարկման

իրավունքի իրացմամբ չեն կարող շրջանցվել արդար դատաքննության ողջամիտ ժամկետները, հետևաբար և՛ խախտվել դատական պաշտպանության դիմած անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները, վերաբերելի իրավակարգավորումները պետք է պարունակեն դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի բուն էության խաթարումը կանխող անհրաժեշտ և բավարար երաշխիքներ:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Օրենսգրքում առկա այն կարգավորումներին, որոնք 169-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում կոչված են ապահովել հակընդդեմ հայցվորի համապատասխան բողոքի արագ և արդյունավետ քննությունը: Օրենսգրքի 362, 367, 369-372, 377, 391, 392, 394-398 և 400-րդ հոդվածների համալիր ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին դատարանի որոշման դեմ բերված բողոքների քննության համար ժամկետների և ընթացակարգերի առումով որևէ առանձնահատկություն չեն նախատեսում: Հաշվի առնելով հակընդդեմ հայցի ընդունման հետ կապված դատական որոշումների բողոքարկման առկա ընդհանուր ընթացակարգերը և հատկապես ժամկետային կարգավորումները՝ Սահմանադրական դատարանը հորդորում է Կառավարությանը և Ազգային ժողովին ամրագրել արդյունավետ կառուցակարգեր՝ Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման շրջանակներում գործի քննությունը ողջամիտ ժամկետում ապահովելու համար:

Օրենսգրքի վերոնշյալ կարգավորումներն իրենց ամբողջության մեջ առաջացնում են մարդու իրավունքների պաշտպանության խնդրահարույց իրավիճակ. մի կողմից՝ ըստ էության երաշխավորում են հակընդդեմ հայցի ընդունելիության վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու՝ պատասխանողի իրավունքը, մյուս կողմից՝ անհամաչափորեն սահմանափակում և իմաստագրկում են սկզբնական հայցով հայցվորի իրավունքների դատական պաշտպանության իրավունքը (Սահմանադրության 78 և 80-րդ հոդվածներ): Սահմանադրական դատարանը գտնում է, որ «հակընդդեմ հայցի» կառուցակարգը, ինքնին կոչված լինելով երաշխավորել ողջամիտ ժամկետում արդար և արդյունավետ դատաքննությունը,

չի կարող դատավարության տարբեր փուլերում (նախապատրաստական և բողոքարկման) դրա իրացման իրարամերժ ընթացակարգեր նախատեսել:

Հակընդդեմ հայցի ընդունելիության կապակցությամբ դատարանի որոշումը բողոքարկելու անձի իրավունքի իրացման կարևորությունը կասկածից վեր է: Սակայն, այդ իրավունքի իրացումը չպետք է հանգեցնի արդյունավետ դատական պաշտպանության և գործը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրաիրավական պահանջների անտեսմանը:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի խնդիրն է սույն գործով վիճարկվող և հատկապես փոխկապակցված իրավակարգավորումների շրջանակներում նախատեսել արդյունավետ այնպիսի ընթացակարգեր, որոնք կերաշխավորեն հակընդդեմ հայցի շրջանակներում սկզբնական հայցով հայցվորի սահմանադրական իրավունքների պաշտպանությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

18 հունիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1464



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԿՐՈՐԴ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հունիսի 2019թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Շ. Քոչարյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դրնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)2019

Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունում (այսուհետ՝ Կանոնադրություն) փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 8-ին Աստանայում՝ Կանոնադրությունում փոփոխություններ կատարելու նպատակով, որոնց անհրաժեշտությունն առաջացել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններից հետո:

Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը համաձայնվել է Կանոնադրության 13-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ պարբերություններում կատարել Արձանագրությամբ սահմանված փոփոխությունները:

Ըստ այդմ՝ Կանոնադրության 13-րդ հոդվածի 3-րդ պարբերության փոփոխության արդյունքում՝ Հավաքական անվտանգության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կազմի մեջ են մտնում անդամ պետությունների ղեկավարները կամ անդամ պետությունների կառավարությունների ղեկավարները, եթե, համաձայն իրենց պետության օրենսդրության, նրանք իրավասու են որոշումներ կայացնելու Խորհրդի իրավասության ներքո գտնվող հարցերի շուրջ:

Կանոնադրության 13-րդ հոդվածի 6-րդ պարբերության առաջին նախադասությունը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Խորհրդի նախագահ է (այսուհետ՝ Նախագահ) հանդիսանում Խորհրդի այն անդամը, ով ներկայացնում է այն պետությունը, որի տարածքում անցկացվում է Խորհրդի հերթական նիստը, եթե Խորհուրդը այլ որոշում չի կայացնում»:

Նախկին կարգավորմամբ վերոհիշյալ պարագայում Նախագահը պահպանում էր Նախագահի իր իրավունքները և պարտականությունները մինչև Խորհրդի հաջորդ հերթական նիստը:

2. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կատարելու մասին» երկրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

18 հունիսի 2019 թվականի  
ՍԴՈ-1465



**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ ԱՆԴՐԵԱՍ ՖՈՍԿՈՒԼԵԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ  
ՊԱՏԿԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ՀԱՅԱՍՏԱՆ**

Ավարտվեց Գերմանիայի սահմանադրական դատարանի նախագահ Անդրեաս Ֆոսկուլեի գլխավորած պատվիրակության Հայաստանի Հանրապետություն պաշտոնական այցի ընթացքում պատվիրակությունը հյուրընկալվել է Հայաստանի սահմանադրական դատարանում, որտեղ նախ տեղի է ունեցել երկու երկրների սահմանադրական դատարանների նախագահների առանձնազրույցը: Դրան հաջորդել է ընդլայնված կազմով աշխատանքային քննարկում՝ «Անհատական զանգառի քննության սահմանները



սահմանադրական դատավարությունում» թեմայով: Խորհրդաժողովի մասնակիցները քննարկել են նաև երկու երկրների սահմանադրական դատարանների մի շարք որոշումներ:

Այցի շրջանակներում պատվիրակության ներկայացուցիչները այցելել են Օիժեռնակաբերդի հուշահամալիր, որտեղ հարգանքի տուրք են մատուցել Ցեղասպանության զոհերի հիշատակին: Պատվիրակությունը շրջայց է կատարել նաև Ցեղասպանության թանգարանում, որտեղ Անդրեաս Ֆոսկուլեն գրառում է կատարել թանգարանի հուշամատյանում:

Այցի շրջանակներում պատվիրակությունը հանդիպում է ունեցել Հանրապետության նախագահի և վարչապետի հետ, այցելել է Մայր Աթոռ, ընդունելության է արժանացել Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից, շրջել է Էջմիածնի թանգարանում:

**ՉԵՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

2019 թվականի ապրիլի 29-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է Չեխիայի Հանրապե-



տության խորհրդարանի Պատգամավորների պալատի սահմանադրական և իրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Մարել Բենդայի գլխավորած պատվիրակության անդամներին:

Պատվիրակության ղեկավար Մարել Բենդայի խնդրանքով Հրայր Թովմասյանը ներկայացրել է Հայաստանում 2015 թվականին կատարված սահմանադրական բարեփոխումների հիմնական առանձնահատկությունները մանրամասնելով դատարանակազ-

մությանը և սահմանադրական դատարանի լիազորություններին առնչվող փոփոխությունները:

Հյուրերի խնդրանքով Հրայր Թովմասյանը ներկայացրել է նաև Մահմանադրական դատարանի ներկայիս գործունեությունը, խոսել դատարանում քննվող դիմումների և դրանցում արձարծվող խնդիրների մասին և այլն:

Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվել է դատաիրավական բարեփոխումների ոլորտում փորձի փոխանակումն ու դատական իշխանության, այդ թվում սահմանադրական դատարանների միջև համագործակցության զարգացումը:

**ԱԶՍՏԱՆ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՅՅԸ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

2019 թվականի ապրիլի 30-ին ՀՀ սահմանադրական դատարանում հյուրընկալվել են Շիրակի մարզի Ազատան գյուղի դպրոցի աշակերտները՝ տնօրենի և ուսուցիչների ուղեկցությամբ:



Այցի շրջանակներում աշակերտները ներկա են գտնվել Մահմանադրական դատարանի նիստին, որից հետո հանդիպում են ունեցել Մահմանադրական դատարանի դատավոր Արևիկ Պետրոսյանի

հետ: Վերջինս մանրամասն ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգի, մասնավորապես, Սահմանադրական դատարանի, վերջինիս գործունեության շրջանակի, լիազորությունների, դիմումների ընդունման կարգի, դատավորների ընտրության և պաշտոնավարման տևողության հետ կապված օրենսդրական կարգավորումները և այլն: Աշակերտների հետ հանդիպմանը միացել է նաև Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը, ջերմ և անմիջական մթնոլորտում շարունակել է գրույցը նրանց հետ, խոսել նաև մասնագիտական հաջողությունների հասնելու գործում ուսման և գիտելիքի կարևորության մասին:

**ՄՈՍԿՎԱՅԻ ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՅՑԸ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

**2019 թվականի մայիսի 2-ին** ՀՀ սահմանադրական դատարանում ճանաչողական այցով հյուրընկալվել են Հայաստանի Հանրապետությունում գտնվող Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ուսանողները ՄՊՀ պրոֆեսոր Գայանե Դավիդյանի ղեկավարությամբ:



Հանդիպման ընթացքում Սահմանադրական դատարանի դատավոր Աշոտ Խաչատրյանն ուսանողներին ծանոթացրել է հայկական իրավունքին, Սահմանադրական դատարանի ստեղծման պատմությանը, կառուցվածքին, գործառույթներին ու աշխատանքային մեթոդաբանությանը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և սահմանադրաիրավական բարեփոխումների ընթացքին: Այնուհետև ներկայացվել են Հայաստանի և այլ երկրների սահմանադրական դատարանների (այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության) միջև համագործակցության տարբեր դրսևորումները: Դատավոր Աշոտ Խաչատրյանը պատասխանել է ուսանողների բազմաթիվ հարցերին:

Հանդիպմանը մասնակցել է նաև Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Էդգար Ղազարյանը:

**ՄԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է  
ՍԱՆԿՏՊԵՏԵՐԲՈՒԳՅԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՈՒՄԻՆ**

**2019թ. մայիսի 14-15-ին** Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահի հրավերով Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի ղեկավարած պատվիրակությունը աշխատանքային այց էր կատարել Սանկտ Պետերբուրգ, որտեղ մեկնարկել էր Սանկտպետերբուրգյան իններորդ իրավաբանական ֆորումը:

Ֆորումի շրջանակներում ՄԴ պատվիրակությունը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի կողմից կազմակերպված «Սահմանադրական ինքնություն և համընդհանուր արժեքներ» խորագրով միջազգային խորհրդաժողովի աշխատանքներին, որին մասնակցում էին չորս տասնյակից ավել երկրների սահմանադրական դատարանների և համարժեք հաստատությունների, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի, ՄԻԵԴ-ի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան պատվիրակություններ: Խորհրդաժողովի շրջանակներում նախագահ Հրայր Թովմասյանը հանդես է եկել թեմատիկ զեկույցով:

Աշխատանքային այցի ընթացքում Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը նաև կարճ առանձնազրույցներ

է ունեցել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահ Վալերի Զորկինի և արդարադատության նախարար Ալեքսանդր Կոնովալովի հետ:

Այցի շրջանակներում ՄԴ պատվիրակությունը մասնակցել է Սանկտպետերբուրգյան իններորդ իրավաբանական ֆորումի ծրագրով նախատեսված այլ թեմատիկ միջոցառումների:

**ԹԵՄԱՏԻԿ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ**

2019թ. մայիսի 22-ին ՀՀ սահմանադրական դատարանի և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) համագործակցության շրջանակներում Սահմանադրական դատարանի գրադարանում տեղի է ունեցել հանդիպում-քննարկում Գեր-



մանիայի Դաշնային սահմանադրական դատարանի պաշտոնաթող դատավոր դոկտոր, պրոֆեսոր Միխայել Այխբերգերի և Գերմանիայի Դաշնային գերագույն վարչական դատարանի նախագահող՝ դոկտոր, պրոֆեսոր Ռյուդիգեր Ռուբելի հետ: Քննարկման գլխավոր թեման էր սեփականության իրավունքը, մասնավորապես անդրադարձ է կատարվել Գերմանիայի Սահմանադրության 14-րդ

հողվածի (սեփականության իրավունք) դոգմատիկային՝ ըստ Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի:

Քննարկմանը մասնակցել են Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը, ՄԴ դատավորներ և ՄԴ աշխատակազմի ներկայացուցիչներ: Իր ողջունի խոսքում Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը կարևորել է նմանատիպ թեմատիկ ոլորտային քննարկումների կազմակերպումը և հույս հայտնել, որ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ համագործակցությունը կկրի շարունակական և փոխշահավետ բնույթ:

Հանդիպման ընթացքում ծավալվել է ակտիվ քննարկում հարց ու պատասխանի տեսքով:

**ՄԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ  
ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**2019թ. մայիսի 24-ին** Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվել է Արցախի Հանրապետությունում: Այցի շրջանակներում ՄԴ պատվիրակությանն ընդունել է Արցախի Հանրապետության նախագահ Բակո



Արցախի Հանրապետության Ազգային ժողով  
National Assembly of the Republic of Artsakh

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Սահակյանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են դատական ոլորտում հայկական երկու հանրապետությունների համագործակցությանն առնչվող հարցեր: Միաժամանակ, այցի ընթացքում ՄԴ պատվիրակությունն աշխատանքային հանդիպում է ունեցել Արցախի Հանրապետության գերագույն դատարանի նախագահ Նարինե Նարիմանյանի հետ: Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ ՄԴ նախագահ Հրայր Թովմասյանն ընդգծել է երկու հայկական հանրապետությունների բարձր դատարանների միջև գործուն կապերի հետագա խորացման և ամրապնդման անհրաժեշտությունը:

ՄԴ պատվիրակությունը Ստեփանակերտ կատարած այցի շրջանակներում նաև հանդիպում է ունեցել Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանի և Արցախի ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հովիկ Զիվանյանի հետ: Կողմերը հատուկ անդրադարձ են կատարել երկու հայկական հանրապետությունների իրավական երկխոսությանը, մասնավորապես սահմանադրական արդարադատության իրականացման բնագավառում:

Աշխատանքային այցի ընթացքում ՄԴ նախագահ Հրայր Թովմասյանը հանրային դասախոսությամբ հանդես է եկել Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար:

**ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ**

2019 թվականի մայիսի 30-ին ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է աշխատանքային այցով Հայաստան ժամանած Եվրոպայի խորհրդի բարձրաստիճան պատվիրակությանը, որի կազմում էին ԵԽ Իրավունքի գերակայության և մարդու իրավունքների հարցերով գլխավոր տնօրեն Քրիստոս Զիակունոպուլոսը, ԵԽ Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Թոմաս Մարկերտը, ԵԽ Արդարադատության և իրավական համա-



գործակցության վարչության ղեկավար Հաննե Յունկերը, ԵՄ Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) գործադիր քարտուղար Ջիանլուկա Էսպոզիտոն, Երևանում ԵՄ գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովան և ԵՄ Քաղաքական հար-



ցերով տնօրինության խորհրդական Մաքսիմ Լոնգանգը: Ողջունելով ԵՄ բարձրաստիճան պատվիրակության անդամներին՝ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը կարևորել է նրանց այցը Հայաստան դատախիրավական համակարգում սպասվող փոփոխությունների այս պատասխանատու ժամանակաշրջանում:

Կողմերը երկուստեք ընդգծել են, որ դատախիրավական համակարգի բարեփոխումները պետք է իրականացվեն ՀՀ Սահմանադրությանը և միջազգային պարտավորություններին համապատասխան:

Նշենք, որ ԵՄ պատվիրակության այցի նպատակն էր քննարկել արդարադատության համակարգի անկախությունը և բարեվարքությունը, արդար դատաքննության իրավունքի հանդեպ հարգանքը, կոռուպցիայի դեմ պայքարը, ինչպես նաև ապօրինաբար ձեռք բերված ակտիվների վերադարձը:

**ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻ ՇԵՏ**

2019թ. հունիսի 5-ին Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մաթիաս Քիպերին՝ Հայաստանում իր դիվանագիտական առաքելության ավարտի կապակցությամբ:

Սահմանադրական դատարանի նախագահը շնորհակալություն է հայտնել դեսպանին արդյունավետ համագործակցության համար և հետագա հաջողություններ մաղթել վերջինիս:



Դեսպանն իր հերթին գոհունակություն է հայտնել Սահմանադրական դատարանին և անձամբ՝ Հրայր Թովմասյանին վերջին շրջանում ակտիվ և արդյունավետ համագործակցության համար, որի արդյունքում հնարավոր է եղել բարձր մակարդակով կազմակերպել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի նախագահի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան և դրա շրջանակներում՝ արգասաբեր և բովանդակալից հանդիպումներ:

Հրայր Թովմասյանը բարձր է գնահատել GIZ-ի իրավական ծրագրի հետ Սահմանադրական դատարանի արդյունավետ համագործակցությունը, որի շնորհիվ հնարավոր է դարձել սահմանա-

դրական իրավունքի ոլորտում գերմանացի գործընկերների հետ իրականացնել փորձի փոխանակման բազմաթիվ ծրագրեր:

Զրուցակիցներն անդրադարձել են նաև Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատախիրավական ոլորտի բարեփոխումներին ու խնդիրներին, կարևորել դրանց իրականացումը ՀՀ Սահմանադրությանը և Հայաստանի միջազգային պարտավորություններին համահունչ:

Հանդիպման ավարտին Հրայր Թովմասյանը նշել է, որ Մաթիաս Քիսլերին Հայաստանում հիշելու են իբրև բանիմաց և հաջողված դիվանագետի, որի առաքելությունը արձանագրել է Հայաստանի և Գերմանիայի միջև տարբեր ոլորտներում կապերի ամրապնդման և զարգացման նոր հաջողություններ: Դեսպանն իր հերթին նշել է, որ Հայաստանից հեռանում է միայն դրական տպավորություններով:

**ՄԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՅԸ ԲՐԱՏԻՍԼԱՎԱ**

2019թ. մայիսի 26-ից 29-ը Սլովակիայի Հանրապետության գերագույն դատարանի հրավերով ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանը մասնակցել է Բրատիսլավայում գումարված «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի գերագույն դատարանների նախագահների» 9-րդ խորհրդաժողովի աշխատանքներին:



Խորհրդաժողովին մասնակցում էին երեք տասնյակից ավել պետությունների բարձր դատարանների ներկայացուցիչներ, այդ թվում նաև Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների բարձրագույն դատական ատյանների նախագահներ և դատավորներ:

Խորհրդաժողովի շրջանակներում մասնակիցները ծավալել են ակտիվ քննարկումներ դատարանների դերի հանրային ընկալման, գերագույն դատարանների նախադեպային իրավունքի միասնականացման և մարդու իրավունքների պաշտպանության հարցերում ունեցած դերակատարման, ինչպես նաև արդյունավետ կարգապահական մեխանիզմների վերաբերյալ:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԲԵՆԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**2019թ. մայիսի 30-31-ը Մինսկում կայացել է Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանի հիմնադրման 25-ամյակին նվիրված «Ժամանակակից սահմանադրական զարգացում. սահմանադրական վերահսկողության դերը իրավունքի սահմանադրականացման գործում»** թեմայով միջազգային խորհրդա-



ժողովը: Խորհրդաժողովին մասնակցում էին շուրջ երկու տասնյակ սահմանադրական դատարանների ներկայացուցիչներ, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի փոխնախագահ Հերդիս Թհորգեիրսդոտիրը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անունից խորհրդաժողովի աշխատանքներին մասնակցում էր դատավոր Աշոտ Խաչատրյանը, որը հանդես է եկել «Մահմանա-

ՍԱՐՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)2019

դրական քաղաքականություն և սահմանադրական արդարադատություն. հարաբերակցության հարցերը «իրավունքի քաղաքականացման» ներգործության պայմաններում» թեմատիկ զեկույցով:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ  
ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ**

**2019 թվականի հունիսի 19-ին** Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին վերջինիս նախաձեռնությամբ:



Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել սահմանադրական արդարադատության ոլորտում հայ-ռուսական համագործակցության հարցերին: Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը դեսպանին տեղեկություններ է ներկայացրել 2019 թվականի մայիսին իր գլխավորած պատվիրակության Սանկտ Պետերբուրգ կատարած այցի մասին, որը տեղի է ունեցել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի նախագահի հրավերով:

Կողմերն անդրադարձել են նաև Հայաստանի դատաիրավական համակարգին առնչվող խնդիրներին և այլ հարցերի:

**ՎԱՀԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՍՏԱՆՁՆԵԼ Է ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՇՏՈՆԸ**

**2019 թվականի հունիսի 20-ին**, ՀՀ Ազգային ժողովում տված երդմամբ Վահե Գրիգորյանը ստանձնել է ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը: Սահմանադրական դատարանի դատավորի թափուր պաշտոնի համար Վ. Գրիգորյանի թեկնածությունն առաջադրել էր Հանրապետության նախագահը: Վ. Գրիգորյանը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընտրվել է 2019 թվականի հունիսի 18-ին կայացած փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով՝ 99 կողմ, 22 դեմ ձայների հարաբերակցությամբ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(94)/2019

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 30.07.2019թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70X100 1/16  
Տպաքանակը՝ 100

ՀՀ ՄԴ տեղեկագիրը  
ՀՀ բարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի  
ատենախոսությունների հիմնական արդյունքների  
և դրույթների հրապարակման համար ընդունելի  
հրատարակությունների ցուցակում

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 2(94)2019  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(94)2019  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 2(94)2019